**Ներածություն:** Ժամանակակից տնտեսագիտությունը պահանջում է շինարարական գործընթացների մասնակիցների համագործակցության լիարժեք դիտարկում, որն առավելապես վերաբերում է նյութատեխնիկական մատակարարմանը: Շինարարության ոլորտում տիրող իրավիճակը շինարարական նյութեր արտադրողներից պահանջում է պատրաստի արտադրանքի պաշարների ծավալների մեծացում, իսկ հաճախորդներից՝ գնումների և առաքման ծախսումների նվազեցում: Լոգիստիկական գործընթացների կառավարման մասնատումն ու ապակենտրոնացումը շատ հաճախ խոչընդոտում է նյութական հոսքերի բաշխման արդյունավետության բարձրացմանը համաշխարհային գործարարության ոլորտում: Բայց մինևույն ժամանակ չկան այնպիսի համակարգեր, որոնք իվիճակի են հասնել իրենց հնարավորությունների գազաթնակետին առանց լոգիստիկական համակարգերի արդյունավետության չափման և ուղղորդման գործիքների, քանի որ մատակարարումների կայունությունից և արդյունավետ երթուղիներից է կախված գործարարության եկամտաբերությունը [1]:

Լոգիստիկական համակարգն իրենից ներկայացնում է միմիանց հետ փոխադարձորեն կապված, բազմակողմանի կառուցվածքով աշխատող լոգիստիկական գործընթացների ղեկավարման համակարգ՝ տնտեսական արդյունավետության ցուցանիշներով օժտված, ռեսուրսների բաշխման միացյալ կենտրոնով: Այլ խոսքով՝ համակարգը թույլ է տալիս իրականացնել ապրանքների կամ արտադրանքների շարժն ապահովող լոգիստիկական գործընթացները՝ մատակարարման բոլոր փուլերում տեղաբաշխման վրա կատարված նվազագույն ծախսումներով: Որպեսզի կազմակերպությունները, որպես ստրատեգիական գործիք, կարողանան օգտագործել լոգիստիկական ծառայությունները, անհրաժեշտ է վերահսկել սեփական ծախսերն ու եկամտի աղբյուրները, ինչպես նաև կառուցել բիզնեսի ռազմավարությանը համապատասխան մատակարարման շղթաներ:

Շինարարական ընկերությունների նյութատեխնիկական ապահովման ենթահամակարգերի հիմնական խնդիրներն են.

- Շինարարական գործընթացում պահանջվող հումքային նյութերի ապահովումը՝ անհրաժեշտ պահին, պահանջվող որակով և նշված ծավալով,
- Նյութական միջոցների արդյունավետ օգտագործման համար բարենպաստ պայմանների ստեղծումը, որոնք հանգում են.
- աշխատանքային ռեսուրսների աճի՝ արտադրողականության մեծացման ճանապարհով,
- շրջանառու միջոցների շրջանառության և ետվերադարձի ցուցանիշների փոփոխության,
- շինարարության ժամանակ առաջացող մնացորդային նյութերի լավագույն օգտագործման,
- ներդրումային միջոցների և այլ համանման գործունեությունների արդյունավետության բարձրացման,
- շինարարական գործընթացի արտադրատեխնիկական ասպեկտների, ինչպես նաև շինմոնտաժային աշխատանքների (ծառայությունների) որակի վերլուծության՝ ոչ միայն գնահատվող շինարարական ընկերությունում, այլ նաև տվյալ ոլորտում գործունեություն ծավալող մրցակիցների մոտ, որը թույլ է տալիս առաջարկներ ձևավորել շինարարական արտադրանքների մրցակցային հատկանիշների մեծացման համար:

Դրված խնդիրների իրականացման համար շինարարությունում պետք է նախատեսվեն.

- Շուկայագիտական հետազոտությունների իրականացում՝ շինարարական շուկայի ֆունկցիոնալացման նպատակով,
- Շինարարության ոլորտում գործող ՀՀ նորմերի և նորմատիվների հստակ ուսումնասիրություն,
- Միջոցառումների անցկացում՝ ուղղված արտադրական-հումքային նյութերի ու ռեսուրսների պահանջարկի չափորոշմանը և ծախսերի իջեցմանը,
- Հնարավոր կարգավորումների ընտրություն՝ ուղղված շինարարական գործընթացի նյութատեխնիկական ապահովմանը և նախագծային մեթոդների իրականացմանը,
- Տվյալ գործունեության ոլորտում ներառված բոլոր ենթահամակարգերում հումքային նյութերի ճիշտ ժամանակին համալրում,
- Արտադրական-հումքային նյութերի օգտագործման ղեկավարում և վերահսկում,
- Միջոցառումների անցկացում՝ ուղղված շինարարական աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող թափոնների վերամշակմանը,
- Ինչպես հումքային նյութերի կիրառման, այնպես էլ ամբողջական շինարարական գործընթացի արդյունավետության գնահատում և վերջիններիս ռացիոնալ օգտագործմանը նպաստող միջոցների ներդրում:

Լոգիստիկայի առաջադրանքն է համարվում իրականացնել ղեկավարման միջոցառումներ՝ ուղղված սկզբնական մատակարարներից հումքային ռեսուրսների տեսքով մատակարարվող ապրանքային հոսքերի հետ կապված ծախսերի ծավալների կարգավորմանը, նրանց համապատասխան վերամշակմանը և հաճախորդների կողմից պատրաստի արտադրանքի ստացմանը: Միևնույն ժամանակ, ծախսերի մակարդակների արդյունավետ ղեկավարումը հնարավոր է միայն այն դեպքում, եթե նշված մեծությունները ենթակա են հավաստի քանակական գնահատման [2]:

Շինարարական ոլորտը, որպես ՀՀ տնտեսական գործունեության կայացած և ինքնուրույն միավոր, կարելի է դիտարկել շինության նյութատեխնիկական ապահովման տեսանկյունից, քանի որ շինարարական օբյեկտների կառուցման համար անհրաժեշտ են նյութական պաշարներ, մեքենաներ և սարքավորումներ, նյութատեխնիկական համալրում՝ նախատեսված շինման օբյեկտի աշխատանքների համար՝ համապատասխան շինարարական հաշվարկներով:

Ինչպես հայտնի է, շինարարական արտադրության գործընթացը ենթադրում է շինարարության մատակարարում նյութական պաշարներով՝ անհրաժեշտ չափերով, նշված հաճախականությամբ և պահանջվող որակով:

Ցանկացած շինարարական գործընթաց կարելի է բաժանել առանձին օղակների, որոնցից յուրաքանչյուրը միավորում է միմիանց հետ փոխկապված հոսքերի տարբեր տեսակներ: Այլ խոսքով, շինարարական գործընթացի ցանկացած բաղադրիչ ներառում է հոսքերի միևնույն տեսակները, որոնք են՝ նյութական, ֆինանսական, տեղեկատվական, սպասարկման և այլն:

Այդ պատճառով շինարարության մեջ լոգիստիկական կարելի է դիտարկել մի քանի ուղղություններով, օրինակ՝ ֆինանսական լոգիստիկական շինարարության ոլորտում դեկավարում է դրամական միջոցների շարժը՝ կապված շինարարական նյութերի ձեռքբերման, աշխատանքների կատարման և պատրաստի շինարարական արտադրանքի վաճառքով պայմանավորված խնդիրների լուծման հետ: Մինչդեռ տեղեկատվական լոգիստիկական ծառայությունը թույլ է տալիս իրականացնել շինարարության հետ առնչվող տեղեկատվության հաղորդումը և տարածումը: Ուստի կարելի է հաստատել, որ լոգիստիկական կառուցվածքը շինարարության ոլորտում ձևավորում է ռեսուրսային հոսքերը և ընդգրկում է բոլոր գործընթացները՝ շինարարական նյութերի ստացումից մինչև շինարարական օբյեկտների հանձնումը:

Այդ կապի մեջ լոգիստիկայի առջև դրվում են առաջադրանքների համախումբ, որոնց առնչվում են, օրինակ՝ շինարարական ռեսուրսների պահանջարկի պլանավորումը և կանխատեսումը, առկա ապրանքանյութական արժեքների վերահսկումը, պատվերների նախապատրաստումը և վերամշակումը, լոգիստիկական համակարգի սահմաններում ապրանքային հոսքերի շարժի սահմանումը և համանման այլ խնդիրներ:

Շինարարարության կատարման ընթացքի վրա կարող են բացասական ազդել հետևյալ երկու իրավիճակները.


1. երբ չեն մատակարարվում անհրաժեշտ ծավալով շինարարական նյութեր,
2. երբ առաջանում է շինարարական նյութերի ավելցուկ (այս իրավիճակը հատկապես ցանկալի չէ, եթե շինարարությունն իրականացվում է մեկ անգամ):

Դրա հետ կապված լոգիստիկայի գլխավոր խնդիրը շինարարության ոլորտում հանդիսանում է տնտեսական համակարգում բոլոր տեսակի ապրանքային հոսքերի անընդմեջ ղեկավարումը:

Լոգիստիկայի արդյունավետ կառավարումը դրականորեն է ազդում ձեռնարկության ֆինանսական դրության վրա [3]: Այն միանգամից լուծում է չորս խնդիր (նկար):

1. Կրճատում է շրջանառու կապիտալի շրջանառության ցիկլը. Պատվերների իդեալական համակարգերի մշակման և հաճախորդներին հաշիվների կանոնավոր ներկայացման շնորհիվ կազմակերպությունը կարող է էականորեն օպտիմալացնել դրամական միջոցների հավաքագրումը և կրճատել աշխատանքային կապիտալի շրջանառության ցիկլը՝ հոգուտ պարտապանական պարտքերի: Մյուս կողմից, վճարումների հաշիվների ակտիվ կառավարումը կնպաստի

աշխատանքային կապիտալի շրջանառության ժամկետների աճի նվազագույնը: Վճարման հանձնարարականներն ընդունելով մատակարարման հաստատումից հետո և մատակարարների վճարումները կատարելով հնարավորինս ուշ, կարելի է ավելացնել ընկերության ընթացիկ ակտիվները՝ կանխիկ դրամական միջոցների տեսքով: Այսպիսով՝ լոգիստիկական ծառայությունների արդյունավետ կառավարումը թույլ է տալիս իջեցնել անհրաժեշտ աշխատանքային կապիտալի չափը:



**Նկ. Լոգիստիկայի արդյունավետ կառավարումը**

2. Նվազեցում է ընկերության բիզնես – ռիսկերը: Լոգիստիկայի գործառնությունները, չնայած մի շարք անկանխատեսելի լոգիստիկական գործընթացների, ընդհանուր առմամբ օգնում են կառավարել և կանխել կորպորատիվ բյուջեի ու համախառն եկամուտների լվացումը: Որոշ ընկերություններ մատակարարի ընտրության ժամանակ փնտրում են հնարավորինս ցածր գնով հումք՝ անտեսելով այն ռիսկը, որ համաշխարհային գործունեությունում բնորոշ է լոգիստիկական համակարգի մատակարարման շղթաներին: Արդյունքում, կատարված ընդհանուր ծախսումների վրա կարող են ազդել մի շարք գործոններ, որոնցից են.

- տրանսպորտային ծախսերի աճը՝ կապված վառելիքի գների փոփոխության հետ, կամ լրացուցիչ բեռնափոխադրողների ներգրավման անհրաժեշտությունը, որոնք պետք է կրճատեն ցածր արդյունավետությամբ աշխատող տրանսպորտային ընկերությունների պատճառով առաջացած մատակարարումների ուշացումները աուխտրսինգում,
- պատվերների կատարման ժամկետների աճը, որը պահանջում է պահուստային պաշարների նվազագույն ցանկալի մակարդակների բարձրացում, որի հետևանքով էլ ընկերությունը կորցնում է փոփոխություններին արագ արձագանքելու հնարավորությունը,
- գործարարության եկամուտների կորուստը, որոնք առաջանում են մաքսային ձևակերպումների երկարատև գործընթացների պատճառով,
- ծախսերի աճը՝ պայմանավորված նվազագույն ցանկալի պաշարների ավելի բարձր մակարդակների պահպանման անհրաժեշտությունով:

3. Շահույթի աճի ապահովում: Լոգիստիկական ծառայությունների կիրառումը ռազմավարական կառավարման համակարգում դրականորեն է ազդում կազմակերպության ֆինանսական արդյունքների վրա, այն կենտրոնանում է ոչ միայն ծախսերի կրճատման, այլ նաև եկամուտների աճի և շուկայի մասնաբաժնի վրա: Շատ կազմակերպություններ, մատակարարման շղթաների կառավարման գործընթացում կենտրոնանում են միայն ծախսումների հաշվարկման

և կրճատման վրա, միայն որոշ ընկերություններ կարող են հաստատել, որ լոգիստիկական կառավարման համակարգն ազդում է նաև վաճառքի վրա:

4. Ակնկալվող եկամուտների ստացում վաճառքներից: Ընկերության բաժնետերերը ակնկալում են կանխատեսվող վաճառքների իրականացում երկարատև ժամանակահատվածների համար: Սպասվող պահանջարկի և առաջարկի մասին տեղեկատվության մեծ մասն անհրաժեշտ է, որպեսզի կանխորոշվեն ռիսկերը՝ կապված լոգիստիկայի և մատակարարման համակարգի գործունեության, ինչպես նաև եկամուտների ստացման հետ:

Լոգիստիկական ծառայությունների կառավարման արդյունավետ ծրագրերը նպաստում են անհրաժեշտ աշխատանքային կապիտալի չափերի նվազեցմանը, ինչպիսիք են՝ մատակարարների կողմից պաշարների արդյունավետ կառավարման ծրագիրը, պաշարների բազմաձյուղ տեխնիկական օպտիմալացման ծրագիրը, որոնք հիմնված են արդյունավետության բարձրացման համակարգերի վրա, օրինակ՝ 6-սիգմա: Այս ծրագրերն առաջարկում են դրամական հոսքերի ազատագրման և շրջանառու ակտիվների մակարդակների իջեցման ուղիներ՝ կապված արտադրական գործընթացների հետ [3]:

Դիտարկենք հետևյալ օրինակը. Շինարարական արտադրանք արտադրող ընկերությունը որոշում է կայացրել վաճառքների ինտեգրված պլանավորման և արագ գործունեության վերաբերյալ՝ հենվելով ֆինանսական կառավարման մատակարարման շղթաների վրա: Այդպիսի կազմակերպություններն ունենում են լոգիստիկական գործընթացների կենտրոնացված կառավարում, լոգիստիկական ղեկավարման թիմն առանձնանում է իր ֆինանսական ոլորտի գրագիտությամբ, բոլոր աշխատակիցները մշտապես խորհրդակցում են ֆինանսական ղեկավարի և վերահսկիչների հետ: Նման աշխատակազմն ի վիճակի է կայացնելու կառավարչական որոշումներ՝ հիմք ընդունելով առաջարկի և պահանջարկի հեռանկարային վերլուծությունները և համապատասխան ֆինանսական գործոնների կանխատեսումները: Արդյունքում, կազմակերպության աշխատանքային թիմը, ղեկավարվելով լոգիստիկական գործընթացներով, որոշում է կայացնում կրճատել արտադրական ծավալները մշտապես մեծ ծավալներ թողարկող արտադրամասերից մեկում այն հիմքով, որ պահանջված մատակարարումները կատարված են: Վաճառքի պլանավորման և արագ գործընթացների համակարգը ցույց է տալիս, որ լրացուցիչ մատակարարումները կհանգեցնեն գերհագեցվածության մատակարարների և բաշխողների պահեստներում, որն էլ հետագայում կարող է հանգեցնել գների հարկադրական իջեցման և հաշվեկշից պաշարների դուրսգրման: Նախկինում կազմակերպությունները չէին կարողանում ընդունել այդպիսի ճիշտ ժամանակին կայացվող որոշումներ, որովհետև արտադրամասի ղեկավարությունը հրահանգ էր տալիս մեծացնել թողարկման ծավալները և օգտագործել ողջ հզորությունը դրված հիմնական արդյունավետության ցուցանիշների ավելացման նպատակով: Իսկ լոգիստիկական ծառայության ղեկավարը իրավասու չէր ռիսկի դիմելու՝ իջեցնելու մատակարարումների մակարդակը:

Այսպիսով՝ ֆինանսական և լոգիստիկական ինտեգրված կառավարումը հնարավորություն տվեց որոշել ռիսկերի մակարդակը և դրականորեն ազդեց վերջնական ֆինանսական արդյունքի վրա:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ շինարարական ընկերություններում լոգիստիկական խնդիրների լուծման միջոցները կարելի է խմբավորել հետևյալ ուղղություններով.

- նոր հոսքերի և դրանց կառավարման մարմինների ձևավորում,

- ոչ ռացիոնալ հոսքերի և դրանք ապահովող ստորաբաժանումների բարեփոխում կամ լուծարում,
- տեխնիկական վերազինում, առաջադեմ տեխնոլոգիաների վերամշակում և ներդրում հոսքերի կառուցվածքում,
- շինարարական ֆիրմայի կազմակերպչական կառուցվածքի կատարելագործում՝ շինարարության մեջ կիրառվող լոգիստիկական մոտեցումների օգնությամբ:

Ինչպես նաև, լոգիստիկական ծառայությունները որպես ռազմավարական գործիք օգտագործելու համար կազմակերպություններին անհրաժեշտ է հստակ վերահսկել ծախսումները և եկամուտների աղբյուրները, իսկ ծառայության ոլորտում անհրաժեշտ է կառուցել մատակարարման շղթաներ, որոնք կհամապատասխանեն գործարարության ընդհանուր ռազմավարությանը:

**Ермине Албертовна Агаджанян**

*Национальный университет архитектуры и строительства Армении, РА, г. Ереван  
aghajanyanhemo@mail.ru*

## ЛОГИСТИЧЕСКИЕ ЗАДАЧИ КОМПАНИЙ СТРОИТЕЛЬНОЙ ПРОМЫШЛЕННОСТИ

*Представлены основные положения логистических систем и характеристики строительной отрасли, рассматриваются основные задачи подсистем материально-технического обеспечения строительных организаций, а также некоторые процессы, которые содействуют решению поставленных задач. Объясняется необходимость внедрения инструментов логистической системы на всех этапах строительного производства, для достижения конкурентных преимуществ на рынке. Показано также как эффективное управление логистикой положительно отражается на финансовом состоянии предприятия.*

**Ключевые слова:** *строительное производство, логистика, материально-техническое обеспечение, снабжение, материальный поток, логистическая цепочка.*

**Hermine Albert Aghajanyan**

*National University of Architecture and Construction of Armenia, RA, Yerevan  
aghajanyanhemo@mail.ru*

## LOGISTICS PROBLEMS IN CONSTRUCTION PRODUCTION COMPANIES

*The fundamentals of logistics and the characteristics of construction sector are given. The main problems of subsystems of material-technical support and some of the processes contributing to the solution of the given problems are considered. The need of using logistics system's tools in all phases of capital construction to reach competitive advantages in the market are explained. The positive impact of effective logistics management on the financial position of organization are given as well.*

**Keywords:** *construction production, logistics, material-technical support, supply, material flow, logistics chain.*



## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

1. **Бродецкая Н., Бродецкий Г.** : Эталонное представление денежных потоков для анализа инвестиционных проектов логистических систем (часть 2) // Логистика сегодня.- 2015.- № 6.
2. **Елина Л.А.** Застройщик, генподрядчик и инвестор – три в одном // Главная книга.- 2014. - № 16.
3. **Бурмистрова Е.В.** Анализ работ в строительной отрасли // Электронное научно-практическое периодическое издание «Экономика и Социум»- (апрель-июнь, 2014).- Вып. № 2(11)

## REFERENCES

1. **Brodetskaya N., Brodetskiy G.** Etalonnoe predstavlenie denezhnikh potokov dlya analiza investicionnikh proyektov logisticheskikh system (chast 2) // Logistika segodnya.- 2015.- № 6.
2. **Elina L. A.** Zastroyshik, genpodryadchik i investor – tri v odnom // Glavnaya kniga. – 2014 - № 16.
3. **Burmistrova E.V.** Analiz rabot v straitelnoy otrasli. Elektronnie nauchno-prakticheskoe periodicheskie izdanie «Ekonomika i Sotsium».- (aprel-iyun, 2014).- Vpusk №2(11).

*Հերմինե Ալբերտի Աղաջանյան, (ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ «Էկոնոմիկայի, իրավունքի, կառավարման» ամբիոնի դասախոս, +374(0)77-575704, aghajanyanhemo@mail.ru*

*Агаджанян Ермине Альбертовна, (РА, г. Ереван) - НУАСА, кафедра «Экономика, право и менеджмент», преподаватель, (+374)77575704, aghajanyanhemo@mail.ru*

*Aghajanyan Hermine Albert, (RA, Yerevan) – NUACA, chair of “Economy, rights and manajement”, lecturer +374(0)77-575704, aghajanyanhemo@mail.ru*

*Ներկայացվել է՝ 20.03.2018 թ.*

*Շնորհվել է արձագանքային՝ 06.04.2018 թ.*

ՀՏԴ 69.057.5

Վ.Ա. Աթանեսյան<sup>1</sup>, \*Տ.Դ. Հակոբյան<sup>2</sup>

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ՀՀ, ք. Երևան,  
Valteratanesyan@gmail.com

**ԿՈՂԱՎՈՐ ԳՄԲԵԹԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ**


Առաջարկությունը վերաբերվում է շինարարության ոլորտին, նպատակն է՝ մշակել գմբեթի նոր կոնստրուկտիվ լուծում, որը կապահովի քիչ ծախսերով, հեշտ և արագ կառուցում: Առաջարկվում է կողավոր գմբեթային կառուցվածք՝ կազմված հիմնական և հարակից մասերից: Գմբեթային կառուցվածքի կողերը գոտիներով և կապերով միացված մետաղական ֆերմաներ են: Կողերը ներքևում հենվում են ժապավենային հիմքին, վերևում միացված են միաժամանակ պատուհան հանդիսացող ութանկյուն օղակին: Գմբեթային կառուցվածքը կարող է օգտագործվել որպես թանգարան, առևտրի կենտրոն, ցուցասրահ, լողավազան և այլն:

**Առանցքային բառեր.** բրզաձև մասեր, ութանկյուն գոտիներ, աստղանման միացություններ, ֆերմայից կողեր, գմբեթ:


**Ներածություն**

Շինարարության բնագավառում շինությունների հեծանային տիպի ծածկերի կառուցումը համեմատաբար առավել աշխատատար և երկարատև է, իսկ երբ անհրաժեշտ է լինում ապահովել մեծ թռիչքներ, գմբեթային և կամարային տիպի ծածկերը մի շարք ծավալահատակագծային լուծումների դեպքում և որոշակի շահագործման պայմաններում կարող են առավել արդյունավետ լինել, որի դեպքում ապահովվում է շինության բավականին բարձրություն, առավելագույն տարածք, արժեքի տնտեսում և հարաբերական փոքր օգտակար բեռ: [1, 2] Ուստի առաջարկվել է նոր կողավոր գմբեթային կառուցվածքի կոնստրուկցիա:

Առաջարկվում է կողավոր գմբեթային կառուցվածք (նկ. 1, 2), որը կազմված է երկու մասից՝ պլանում ութանկյուն հիմնական և հարակից բրզաձև մասերից, որոնք ունեն կարկասային կառուցվածք: Հիմնական մասի կողերը (1) զուգահեռ գոտիներով, եռանկյուն վանդակներով թեք տեղադրված մետաղական ֆերմաներ են:




Նկ. 1. Կողավոր գմբեթային կառուցվածքի տեսքը պլանում




**Նկ. 2. Կողավոր գմբեթային կառուցվածքի կարկասի տեսքը դիմացից՝ Ա-սլաքի ուղղությամբ (նկ. 1)**

Այդ մասի կողերը (1) միացված են ըստ գմբեթի բարձրության զուգահեռ տեղադրված ութանկյուն գոտիներին (2), որոնք կողերի և կապերի (3) հետ կցմամբ (առանց միմյանց խաչվելու) կազմում են երեք թևանի աստղանման մետաղական միացություններ (4): Ֆերմայի գոտիները, վանդակները և ֆերմաները կապող գոտիները նախատեսվում է կատարել ուղղանկյուն հաստույթի խողովակներից: Կողերը (1) ներքևում հենվում են ժապավենային հիմքին (5), վերևում միացված են միաժամանակ պատուհան հանդիսացող վերնի ութանկյուն օղակին (6): Հարակից բրգաձև մասի կողերը (7) նույնատիպ թեք և ուղղաձիգ տեղադրված ֆերմաներ են (8)՝ միացված կապերով (9): Ուղղաձիգ ֆերմաները (8) վերնի մասում ութանկյուն օղակի (6) մակարդակում միացված են ֆերմաները (8) և օղակը (6) կապող ֆերմայով (10), որին միացված են կողերը (7): Հարակից բուրգաձև մասի առկայությունն ավելացնում է գմբեթի կոշտությունը և տալիս է դրան յուրահաստուկ ձև: Հարակից բրգաձև մասի ծայրում նախատեսված է մուտքի դուռ (11): Գմբեթային կարկասային կառուցվածքը կարող է երեսապատվել 5 ս/մ հաստությամբ ցինկապատված ձևավոր թերթով կամ ապակեպատվել: Գմբեթային կառուցվածքի լայնությունը հիմնական մասում ընդունվել է 50 ս, բարձրությունը՝ 20 ս, իսկ ընդհանուր երկու մասերի երկարությունը միասին՝ 80 ս: Գմբեթային կառուցվածքը պլանում ունի խխունջանման տեսք, որը կարող է ճարտարապետության տեսակետից որոշ հետաքրքրություն առաջացնել. այն կարող է օգտագործվել որպես թանգարան, առևտրի կենտրոն, ցուցասրահ, լողավազան և այլն: Հարակից բրգաձև մասը, բացի միջանցք հանդիսանալուց դեպի հիմնական գմբեթային մաս, կարող է ունենալ հանդերձարահներ, ցուցադրական և թանգարանային նմուշների պահեստավորման սենյակներ, սպասարկող անձնակազմի գործունեության և հանգստի սենյակներ և այլն: Մշակվել է գմբեթային կառուցվածքի ոչ ստանդարտ լուծում, որը բազմաֆունկցիոնալ է և արագ շահագործվող:

Բացի վերը նշվածից առաջարկվել է նաև մեծ և փոքր չափերի կողավոր բուրգաձև գմբեթների բլոկավորված համալիր (նկ. 3, 4), որը նմանակվել է Արարատ լեռանը:



Նկ. 3. Կողավոր գմբեթներն ըստ պլանի I-I կտրվածքի (նկ. 4)



Նկ. 4. Կողավոր գմբեթները պլանում

Գմբեթներն ունեն կարկասային հիմնակմախք, որոնց կողերը (1) զուգահեռ գոտիներով, եռանկյուն վանդակներով և կանգնակներով ֆերմաներ են՝ միացված ըստ գմբեթների բարձրության զուգահեռ տեղադրված ութանկյուն գոտիներին (2), դրանք կողերի և կապերի (3) հետ կցմամբ, առանց միմյանց խաչվելու կազմում են չորսթևանի աստղանման միացություններ (4): Կողերը (1) մի ծայրով ամրացված են ժապավենային հիմքերին (5), մյուսով՝ միաժամանակ պատուհան հանդիսացող վերին գոտիներին (6): Գմբեթների պարագծով հիմնական կողերին (1) ամրացված են Արարատ լեռան ստորոտում տեղադրված լրացուցիչ կողեր (7), գոտիներ (8), կապեր (9), պատուհաններ (10) և դռներ (11): Դրանցում կառուցված են սենյակներ՝ սպասարկող անձնակազմի գործունեության, հանգստի, թանգարանային նմուշների պահեստավորման համար և այլն: Հարակից գմբեթի երեք կողերը (12, 13, 14) միացված են կենտրոնական գմբեթի կողերին (1), և ստեղծված է անցում գմբեթների միջև: Գմբեթներն ունեն մուտքի դռներ (15) և ծած-

կույթ՝ կազմված վերին պաշտպանիչ շերտից (16)՝ խոշորահատիկ ավազով և հողով, ջրամեկուսիչ գլանափաթեթավոր ներքնակից (17), երեսավաղից (18), ջերմամեկուսիչ շերտից (19) և ձևավոր ցինկապատ թերթից (20) (գմբեթները կարող են նաև լինել ամբողջովին ապակեպատ): Պատուհանները (10) տեղադրված են հորիզոնին մոտ հարթություններում և դիմացից տեսանելի չեն: Հիմնական գմբեթի բարձրությունը նախատեսվում է մոտ 25 մ: Կապերը միմյանց չեն խաչվում, որի հետևանքով պահաջվում է փոքր քանակի տարբեր մասեր և հանգույցներ և դրա հետ կապված մոնտաժման և պատրաստման փոքր աշխատատարություն:

Առաջարկությունը հնարավորություն է տալիս ՀՀ Արարատի շրջանում նախատեսված ազգագրական այգում ունենալ Արարատ լեռան նմանությամբ կայուն և գեղեցիկ բոկավորված գմբեթավոր կառույցներ:

**\*Вальтер Ашотович Атанесян<sup>1</sup>, Тигран Давидович Акобян<sup>2</sup>**

<sup>2\*</sup>*Национальный университет архитектуры и строительства Армении, г.Ереван, РА,  
Valteratanesyan@gmail.com*

## РЕБРИСТЫЕ КУПОЛЬНЫЕ СООРУЖЕНИЯ

*Предложение касается области строительства, цель - разработать новое конструктивное решение купола, которое обеспечит простое и быстрое строительство с малыми затратами. Предлагаются ребристые купольные сооружения, состоящие из основных и смежных частей. Ребра купольных сооружений, соединенные поясами и узлами являются металлическими фермами. Внизу ребра упираются в ленточный фундамент, а сверху соединены с восьмиугольным кольцом, одновременно являющимся окном. Купольное сооружение может быть использовано как музей, торговый центр, выставочный зал, бассейн и др.*

**Ключевые слова:** пирамидальные части, восьмиугольные пояса, звездообразные соединения, ребра из ферм, прямоугольные трубы.

**\*Walter Ashot Atanesyan<sup>1</sup>, Tigran David Hakobyan<sup>2</sup>**

<sup>2\*</sup>*National University of Architecture and Construction of Armenia  
Valteratanesyan@gmail.com*

## RIBBED DOME STRUCTURES

*The proposal is related to the sphere of construction and it designed for developing new construction decisions of domes. These proposals will provide easy, fast erection of domes with the less costs. Ribbed dome structure have been proposed, composed of the main and adjacent parts. Ribs of the dome structure are metallic (steel) trusses which are joined together by belts and braces. Ribs at the bottom are rested against the continuous foundation and at the top are joined by octagonal ring which simultaneously serve as a window. The dome structures can be used as a museum, shopping centre, picture gallery, swimming pool etc.*

**Keywords:** pyramidal part, octagonal belt, star-shaped assembly ribs made of truss box pipe.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Мельников Н. П. Металлические конструкции.- М.: Стройиздат, 1983.- 538 с.
2. Иллюстрированный каталог проектов и работ.- Госгражданстрой.- М., 1985.- 41 с.

REFERENCES

1. Melnikov N. P. Metallicheskie konstrukcii.- M.: Stroyizdat, 1983.- 538 s.
2. Illyustrirovanni katalog proektov i rabot.- Gosgrajdanstroy.- M., 1985.- 41 s.

**Աթանեսյան Վալտեր Աշոտի** տեխ.գիտ. դոկ., ՃՀՀԱՀ, <<Ջրային համակարգի պահպանում, զարգացում և կատարելագործում>> ծրագրի ավագ գիտ. աշխատող **Տ. Գ. Դ.**, հեռ. 093335613 E-mail Valteratanesyan@gmail.com, հասցեն՝ ք. Երևան Բաբայան փ. 36, բն. 23: **Հակոբյան Տիգրան Դավթի**, ՃՀՀԱՀ, Շինարարական նյութերի, իրերի և կոնստրուկցիաների արտադրության տեխնոլոգիայի ամբիոնի հայցորդ, հեռ. 099300327, E-mail Transgazar-menia@gmail.com, հասցեն՝ ք. Երևան, Ավան-Առինջ 2/6 շ., բն. 4:

**Атанесян Вальтер Ашотович, д.т.н.** (РА, г.Ереван) – НУАСА, ст.науч.сотрудник проекта «Развитие и усовершенствование водных систем», (+374) 93335613, Valteratanesyan@gmail.com

**Atanesyan Valter Ashot, doctor of science (engineering)** (RA, Yerevan) - NUACA, Problem Laboratory of Water Systems after I. Eghiazarov, senior scientific worker, (+374) 93335613, Valteratanesyan@gmail.com, **Hakobyan Tigran Davit, postgraduate student** (RA, Yerevan) – NUACA, Chair of production technology of construction materials, items and structures, (+374)99300327, Transgazarmenia@gmail.com

Ներկայացվել է՝	05.02.2018 թ.
Ընդունվել է տպագրության՝	03.04.2018 թ.

ՀՏԴ 620.9.001.32

**Արատաշես Լևոնի Պետրոսյան**

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ՀՀ, Երևան,  
artashespetrosyan@mail.ru*

**ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՊԱՀԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՆՎԱԶՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

*Արժարժված են բնական գազի պահեստավորման խնդիրները, երբ այն սեղմման է ենթարկվում կոմպրեսորում: Հետագայում գազը ենթարկվում է դրոսելացման: Ներկայումս կոմպրեսորի սեղմման աշխատանքը ստացվում է գազային, ներքին այրման շարժիչում, որը բերում է գազի ծախսի աճի: Առաջարկվում է կիրառել էլեկտրաշարժիչ, որը կբերի գազի ծախսի և հիմնական ներդրումների, գազի ինքնարժեքի նվազման: Դրան կնպաստի ընդարձակիչ սարքի կիրառումը, երբ դրան հարակցված էլեկտրազենեքատորը վերականգնի ծախսված էլեկտրաէներգիայի 34...42 %-ը:*

*Առանցքային բառեր. գազի պահեստավորում, էլեկտրաշարժիչների և ընդարձակիչների կիրառում, պահեստավորված գազի բերված ծախսեր, ինքնարժեք:*

**Ներածություն**

Ազգաբնակչության, արդյունաբերական ձեռնարկությունների և այլ տիպի սպառիչների անխափան գազամատակարարման ապահովումը հնարավոր է իրականացնել բնական գազի որոշակի ծավալների պահեստավորման դեպքում: Պահեստավորումն ունի խիստ կարևոր նշանակություն, քանի որ մատակարարման խափանումները տարբեր տիպի սպառիչների համար կարող են բերել անցանկալի երևույթների. առաջինների համար վթարների, դժբախտ դեպքերի, անցանկալի երևույթների՝ հատկապես ձմռան ամիսներին, երկրորդների համար, երբ դրանցում տեղի են ունենում անընդմեջ տեխնոլոգիական գործընթացներ, դրանց խաթարման և արտադրական վթարների: Սակայն գազի պահեստավորումը, համապատասխան ծախսերի հետևանքով, բերում է դրա ինքնարժեքի աճի, ուստի և գազամատակարարման համակարգի տնտեսական ցուցանիշների վատացման: Սա էլ իր հերթին նշանակում է մատակարարվող գազի արժեքի աճ: Որպեսզի նման իրավիճակից գազամատակարար կազմակերպությունը խուսափի, ձգտում է նվազեցնել պահեստավորման ծավալները, տալով դրան տարբեր հիմնավորումներ: Ներկայումս գազի պահեստավորման համար օգտագործում են ստորգետնյա բնական հորերը, երբ բարձր ճնշման՝ 11...12 ՄՊա տակ այն մղվում է դեպի հոր: Վթարային պայմաններում կամ գազի սպառման ծավալների կտրուկ աճի դեպքում, գազը վերցվում է հորերից և ճնշման անկման ենթարկելով տրվում է գազատար ցանց:

Ինչպես նշվել է [1]-ում, սպառողների անխափան գազամատակարարման համար, պահեստավորվում է ստորգետնյա հորերում՝ բարձր ճնշման տակ: Ընշման բարձրացումն իրականացվում է կոմպրեսորների միջոցով, ծախսելով հսկայական մեխանիկական աշխատանք: Այն ներկայումս ստացվում է գազային ներքին այրման շարժիչների միջոցով: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ այդ եղանակն ունի վատ տնտեսական ցուցանիշներ՝ բերված ծախսեր, որը ներկայացնում է պահեստավորման համակարգի վրա հիմնական ներդրումների ու շահագործման ծախսերի հանրագումարը, իսկ դրա հարաբերությունն էլ պահեստավորված գազի ծավա-

լին, բերված նորմալ պայմանների, գազի ինքնարժեքը: Այս ցուցանիշների բարելավման համար մշակվել և առաջարկվել են այլ տեխնոլոգիական սխեմաներ, որոնք ամփոփված են պահեստավորման երեք համեմատելի տարբերակների ձևով: Սրա նպատակն այն է, որ պահպանվեն պահեստավորման անհրաժեշտ ծավալները, սակայն նվազեն պահպանման ծախսերը: Պահեստավորման տարբերակն այդ դեպքում պետք է ունենա լավագույն տեխնիկատնտեսական ցուցանիշներ:

Մշակված տարբերակների, դրանց համար նշված ցուցանիշների որոշումն ու դրանց համակողմանի վերլուծությունն էլ հանդիսանում է սույն հոդվածի նպատակը:

Որպես տարբերակներ դիտարկվել են.

ա) ներկայումս գործողը՝ գազային ներքին այրման շարժիչի մեխանիկական էներգիան օգտագործող եռաստիճանային մխոցավոր կոմպրեսորով տարբերակը, իսկ պահեստավորված գազի վերաօգտագործման դեպքում ճնշման իջեցումն իրագործվում է բազմաստիճան դրոսելազման շնորհիվ՝ կիրառվում են ճնշման անկման դրոսելային կարգավորիչներ,

բ) առաջարկվող միջանկյալ տարբերակ, երբ եռաստիճան մխոցավոր կոմպրեսորը մեխանիկական էներգիա է ստանում էլեկտրաշարժիչից, ճնշման իջեցումը՝ նախորդի նման,

գ) առավել էներգաարդյունավետ ու ժամանակակից տարբերակ՝ եռաստիճան մխոցավոր կոմպրեսորը մեխանիկական էներգիա է ստանում էլեկտրաշարժիչից, իսկ ճնշման իջեցումն իրականացվում է գազային ընդարձակիչի օգնությամբ:

Որպեսզի իրագործվի գազի պահեստավորումը բարձր ճնշման տակ, բնական հորերի առկայության պայմաններում, անհրաժեշտ են հիմնականում եռաստիճան կոմպրեսորներ, որոնց համար որպես մեխանիկական էներգիայի աղբյուրներ կարող են հանդիսանալ ավանդական, գազային վառելիքով աշխատող և մեծ հզորություն ունեցող ներքին այրման շարժիչները (ԳՆԱՇ), ինչպես նաև էլեկտրական շարժիչները: Պահեստավորված գազի վերաօգտագործման անհրաժեշտության դեպքում հորերից վերցված գազը ենթարկվում է բազմակի դրոսելազման մինչև միջին ճնշման գազատարերում պահպանվող 1...1,2 ՄՊա ճնշումը, ապա նոր տրվում է գազատար ցանց: Բազմակի դրոսելազումը թեև հեշտ և հուսալի իրականացվելիք գործընթաց է, սակայն, թերմոդինամիկական առումով, խիստ անհակադարձելի է և ուղեկցվում է էներգիայի հսկայական կորուստներով՝ սեղմման գործընթացում ծախսված գազի մեխանիկական աշխատանքն իսպառ կորչում է: Վերջինիս մի մասը, մինչև 34...37 %-ը [2], կարելի է վերականգնել «ընդարձակիչ-գեներատոր» տեղակայանքի օգնությամբ: Սակայն ընդարձակիչը, թեև կոմպրեսորի հակառակ ֆունկցիան կատարող սարքավորում է, բարդ է և ունի սակավ կիրառություն, ուստի և թանկ է, հատկապես մխոցավորը: Որպես պահեստավորման համակարգի հիմնական ներդրումներ որոշվել են ծախսերը հենց այդ սարքավորումների վրա: Քանի որ տնտեսական հաշվարկներում բերված ծախսերը գնահատման նպատակ ունեն, ապա կատարվել է, որոշակի մոտավորություն, դրանց տեսակարար արժեքներով, վերագրված 1 կՎտ դրվածքային հզորությանը: Համակարգի այլ սարքավորումների (օդասառեցուցիչներ, յուղանջատիչներ, սեպարատորներ, հովազման սարքեր և այլն), ինչպես նաև բնական հորերի պատրաստման ու պահպանման վրա ծախսերը հաշվարկներում հաշվի չեն առնել և ընդունվել է, որ համեմատելի տարբերակների համար նույնն են:

Սարքավորումների տեսակարար արժեքները, վերագրված 1 կՎտ դրվածքային հզորությանը, հետևյալն են՝  $k_{\text{գն.}} = 600$ ,  $k_{\text{մխ.կոմպ.}} = 300$ ,  $k_{\text{էլ.շ.}} = 150$ ,  $k_{\text{դրոս.}} = 500$ ,  $k_{\text{գեներ.}} = 250$  *ամ.դրոս./կՎտ*, իսկ



բերված ծախսերի որոշման արտահայտության մեջ (բերված ծախսերի մասին մանրամասն տես [1]).

$$\sum_{60 \times 24 \text{ օր}} Z_{\text{բն.գ.}}^i = (E_{\text{գ}} + k_{\text{վեր.}}) \cdot \sum K^i + \sum C_{\text{գազ}}^i + 3H, \quad (1)$$

Մրա մեջ մտնող սարքավորումների նորմատիվային և վերանորոգման գործակիցները՝  $E_{\text{գ}}, k_{\text{վեր.}}$  - ը, կախված են ծառայության ժամկետներից և կազմում են համապատասխանաբար՝

$$E_{\text{գազ}} = 1/15 = 0,067, E_{\text{կոմպ.}} = 1/20 = 0,05, k_{\text{վեր.}}^{\text{գազ}} \approx 0,3E_{\text{գազ}} = 0,02, k_{\text{վեր.}}^{\text{կոմպ.}} \approx 0,3E_{\text{կոմպ.}} = 0,015,$$

$$E_{\text{էլ.2}} = 1/15 = 0,067, E_{\text{գեմ.}} = 1/20 = 0,05, E_{\text{դետ.}} = 1/15 = 0,067, k_{\text{վեր.}}^{\text{գեմ.}} = 0,015, k_{\text{վեր.}}^{\text{էլ.2}} \approx 0,3E_{\text{էլ.2}} = 0,02,$$

$$k_{\text{վեր.}}^{\text{դետ.}} = 0,02, k_{\text{վեր.}}^{\text{էլ.2}} \approx 0,3E_{\text{էլ.2}} = 0,015$$

(1)-ի միջոցով  $Z_{\text{սեղ.}}$ -ի մեծությունը որոշվել է ստորգետնյա հորի ֆիզիկական ծավալի տարբեր արժեքների համար.  $V_{\text{հոր}}^{\text{ֆիզ.}} = 50, 90, 150, 200, 250 \text{ հազ. մ}^3$  դեպքում, որպեսզի հնարավոր լինի գնահատել այդ ծավալի ազդեցությունը տնտեսական ցուցանիշների վրա:

Որպեսզի որոշենք  $K^i$ -ի մեծությունը յուրաքանչյուր տարբերակի համար, անհրաժեշտ է ունենալ յուրաքանչյուր սարքավորման դրվածքային հզորությունը, իսկ  $\sum C_{\text{գազ}}^i$  մեծությունն առաջին տարբերակի դեպքում կորոշվի ըստ ԳՆԱՇ-ի կարիքների ապահովման համար անհրաժեշտ գազի ծախսի: Մյուս տարբերակների դեպքում նախ որոշվել են կոմպրեսորների էլեկտրաշարժիչների դրվածքային հզորություններն ու էլեկտրաէներգիայի ծախսը դրանց կարիքների ապահովման համար, ապա, էլնելով ՀՀ էներգահամակարգում 1 կՎտ էլեկտրաէներգիայի արտադրման վառելիքային համարժեքից, նաև վառելիքի ծախսը: Երրորդ տարբերակի դեպքում, քանի որ ընդարձակիչին հարակցված գեներատորի կողմից արտադրվում է էլեկտրաէներգիա, ապա նույն կերպ, ինչ որ ծախսի դեպքում էր, որոշվում է արտադրված վառելիքային համարժեքը և այն հանվում է ծախսից:

Ունենալով բերված ծախսերը յուրաքանչյուր տարբերակի համար, ինչպես նաև պահեստավորված գազի ծավալը, բերված նորմալ պայմանների, կարելի է որոշել տվյալ հորի ֆիզիկական ծավալին համապատասխան պահեստավորված գազի ինքնարժեքը: Նշված մեթոդին համարժեք դիտարկենք վերը նշված տարբերակները և պահեստավորման տվյալ պարամետրերի պայմաններում՝  $p_{\text{գազ}}^{\text{III}} = 12,5 \text{ ՄՊա}$ , որոշենք հորի նշված ֆիզիկական ծավալին համապատասխան գազի ինքնարժեքը:

Առաջին տարբերակի դեպքում, երբ կոմպրեսորում գազի սեղմումն իրագործվում է ԳՆԱՇ-ից ստացված մեխանիկական աշխատանքի հաշվին և կատարվում է բազմակի դրոսելացում, նախ անհրաժեշտ է ունենալ սեղմման իրական գործընթացում տեսակարար աշխատանքի մեծությունները կոմպրեսորի երեք աստիճաններում: Դրա համար, ինչպես նշել է [1]-ում, հարկ կա կառուցել եռաստիճան սեղմման գործընթաց բնական գազի  $p$ - $i$  դիագրամում, ընդունելով անհակադարձելիության գործակիցների արժեքները կոմպրեսորի աստիճաններում համապատասխանաբար  $\eta_{oi}^I = 0,75, \eta_{oi}^{II} = 0,72, \eta_{oi}^{III} = 0,7$ : Այդ դեպքում տեսակարար աշխատանքները կոմպրեսորի տարբեր աստիճաններում կկազմի համապատասխանաբար 193, 208, 179 կՋ/կգ: Ըստ այդմ էլ ԳՆԱՇ-ից պահանջվող մեխանիկական աշխատանքը կամ հզորությունը կորոշվի հետևյալ արտահայտությամբ.

$$N_{\text{գազ}}^{\text{հր.գա.}} = M_i \cdot l_{\text{հր.կոմպ.}}^i / \eta_{\text{ժող.}}, \quad (2)$$

որտեղ  $M_i$  -ն գազի զանգվածային ծախսն է կոմպրեսորի յուրաքանչյուր աստիճանում, կգ/վ,  $\eta_{\text{ֆոն.}}$  - ը կոմպրեսոր – ԳՆԱՇ համախմբի միջև մեխանիկական էներգիայի փոխանցման գործակիցն է և երբ ունենք կցորդիչային փոխանցում, ապա  $\eta_{\text{ֆոն.}} = 0,95$  :

$M_i$  -ի արժեքը կորոշվի յուրաքանչյուր աստիճանի համար, երբ ունենք  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոռ.}}$ , ապա և (2)–ի օգնությամբ՝ ԳՆԱՇ–ի պահանջվող հզորությունը: Մասնավորապես, առաջին աստիճանի համար, երբ հորի ֆիզիկական ծավալը կազմում է 90000  $\text{ւ}^3$ , կստացվի՝

$$V_{\text{հոռ.}}^i = \frac{V_o}{Z_{\text{գ.}}} = \frac{8,75 \cdot V_{\text{ֆիզ.}}^{\text{հոռ.}}}{60 \cdot 24 \cdot 3600} = \frac{8,75 \cdot 90000}{86400 \cdot 60} = 0,152 \text{ } \text{ւ}^3/\text{վ}, \quad V_h^i = \frac{V_o}{\lambda_i} = 0,152/0,66 = 0,23 \text{ } \text{ւ}^3/\text{վրկ}, \quad M_i = \frac{V_o}{v_2} = \frac{0,23}{0,069} = 3,34 \text{ կգ/վ}:$$

Համանման եղանակով այն կորոշվի նաև այլ աստիճանների համար (աղ. 1):

Նման հաշվարկների արդյունքում կորոշվեն  $N_{\text{գնԱՇ}}^{\text{հոռ. հգ.}}$  - ի մեծությունները  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոռ.}}$  -ի այլ արժեքների դեպքում: Դրանք համապատասխանաբար կազմում են՝  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոռ.}} = 50000 \text{ } \text{ւ}^3 - N_{\text{գնԱՇ}}^{\text{հոռ. հգ.}} = 726,5, 150000 - 2202,8, 200000 - 2908,2, 250000 - 3631,8 \text{ կՎտ}:$

ԳՆԱՇ–ի ընդհանուր ջերմային օգգ–ն, համաձայն [3]–ի, որոշվում է հետևյալ արտահայտությամբ.

$$\eta_{\text{ԿԳԿ(գ,վ)}}^{\text{ԱՇՀոռ.}} = 0,285 + 0,674 = 0,959, \tag{3}$$

(3)–ում 0,285 մեծությունը ներկայացնում է ընդհանուր ջերմային օգգ–ում՝ 0,959, որը համարժեք է վառելիքի ընդհանուր ծախսի մեջ որ մասն է կազմում մեխանիկական աշխատանքի ստացմանը մարը:

**Աղյուսակ 1**

**Միացավոր կոմպրեսորի առանձին աստիճանների բնութագրիչ մեծությունները, երբ**

$$V_{\text{ֆիզ.}}^{\text{հոռ.}} = 90000 \text{ } \text{ւ}^3$$

Աստիճանները	Պարամետրերը			
	$V_{\text{հոռ.}}^i$ , $\text{ւ}^3/\text{վ}$	$V_h^i$ , $\text{ւ}^3/\text{վ}$	$M_i$ , $\text{կգ/վ}$	$N_{\text{գնԱՇ}}^{\text{հոռ. հգ.}}$ , $\text{կՎտ}$
I	0,152	0,230	3,34	677,7
II	0,084	0,120	1,85	405,0
III	0,078	0,105	1,21	227,9
Ընդամենը կՎտ				1310,6

Սա նշանակում է, որ 1 կՎտ մեխանիկական էներգիա արտադրելու համար ԳՆԱՇ–ը կծախսի.  $Q_{\text{ջերմ. էն.}}^{\text{գնԱՇ}} = \frac{1 \cdot 0,674}{0,285} = 2,365 \text{ կՎտ}$  ջերմային էներգիա: Արդյունքում ջերմային էներգիայի ընդհանուր քանակը վերը դիտարկվածի համար կկազմի.  $\sum_{i=I...III} Q_{\text{ջերմ. էն.}}^{\text{գնԱՇ}} = 2,365 \cdot 1310,6 = 3099,45 \text{ կՎտ} / \text{ջերմ. էն.}$ , իսկ բնական գազի ծախսը ԳՆԱՇ–ում, երբ նրա մեխանիկական օգգ–ն կազմի 0,285, կորոշվի.  $B_{\text{բն. գ.}}^{\text{գնԱՇ}} = \frac{1310,6}{0,285 \cdot 35000} = 0,1314 \text{ } \text{ւ}^3/\text{վ} = 472 \text{ } \text{ւ}^3/\text{ժ}$ : Նման ձևով էլ կորոշվի նաև հորի ֆիզիկական ծավալի այլ արժեքների համար՝  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոռ.}} = 50000 \text{ } \text{ւ}^3 - B_{\text{բն. գ.}}^{\text{գնԱՇ}} = 262,2 \text{ կՎտ}, 150000 - 797,1, 200000 - 1049,6, 250000 - 1310,7 \text{ } \text{ւ}^3/\text{ժ}:$

Ընդունելով պահեստավորման տևողությունը՝  $\sum Z_{\text{լիցք.}}^{\text{տարի}} = 60$  օր/տարի, հորի լցման վրա ԳՆԱՇ-ի կարիքների համար ծախսած գազի տարեկան ծախսը և արժեքը, երբ նման սպառիչների համար 1000  $\text{m}^3$  տեսակարար արժեքը կազմում է 242,1  $\text{ամ. դոլ.}$ , դիտարկված ֆիզիկական ծավալների համար կորոշվի.  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 50000 \text{ m}^3 - \sum_{i=60 \text{ օր}} B_{\text{բն.գ.սեզ.}}^{\text{գլուց}} = 378432$ ,  $\sum_{i=60 \text{ օր}} C_{\text{բն.գ.սեզ.}}^{\text{գլուց}} = 91618,4$  90000 – 679104, 164411, 150000 – 1147737,6, 277867,3, 200000 – 1511136, 365846, 250000 – 1886976  $\text{m}^3/\text{տարի}$ , 456839,9  $\text{ամ.դոլ.}/\text{տարի}$ :

Օգտվելով (1) արտահայտությունից և դրա մեջ մտնող մեծությունների թվային արժեքներից, որոնք բերվեցին վերը, կարելի է որոշել հորի ֆիզիկական ծավալին համապատասխան դրանցում բնական գազի պահպանման վրա բերված ծախսերը՝  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 50000 \text{ m}^3 - \sum_{60 \times 24 \text{ Ժ}} E_{\text{բն.գ.}}^{\text{գլուց}} = 146182$ , 90000 – 260890, 150000 – 438370,2, 200000 – 576968,4, 250000 – 719887,9  $\text{ամ. դոլ.}/\text{տարի}$ :

Որպեսզի որոշվի պահպանվող բնական գազի ինքնարժեքը, անհրաժեշտ է հաշվարկել դրա նորմալի բերված ծավալը, որն էլ, ըստ հորի տարբեր ֆիզիկական ծավալների, որոշվել է հետևյալ արտահայտությամբ.  $\sum_{60.24} V_{\text{պահ.գ.}}^{\text{ն.պ.}} = 0,8 \times 90000 \times \left( \frac{12,5}{0,1} \times \frac{280}{320} \right) = 7875000$   $\text{նմ}^3/\text{տարի}$ : Ունենալով այս մեծությունը հորի տարբեր ֆիզիկական ծավալների համար, կստացվեն  $\sum_{60 \times 24 \text{ Ժ}} V_{\text{բն.գ.ն.պ.}}^{\text{գլուց}}$  հետևյալ թվային արժեքները՝  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 50000 \text{ m}^3 - \sum_{60 \times 24 \text{ Ժ}} V_{\text{բն.գ.ն.պ.}}^{\text{գլուց}} = 4375$ , 90000 – 7875, 150000 – 1312, 200000 – 1750, 250000 – 2187,5  $\text{հազ.նմ}^3/\text{տարի}$ : Արդյունքում կարելի է որոշել պահպանվող բնական գազի ինքնարժեքն ըստ հորի տարբեր ֆիզիկական ծավալների՝  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 50000 \text{ m}^3 - \sum_{60 \times 24 \text{ Ժ}} C_{\text{բն.գ.ն.պ.}}^{\text{գլուց}} = 16,21$ , 90000 – 16,07, 150000 – 16,19, 200000 – 15,99, 250000 – 15,96  $\text{դրամ}/\text{նմ}^3$ :

Ինչպես երևում է ստացված արդյունքներից, պահպանվող բնական գազի ինքնարժեքն ամենամեծն է ամենավոքը ֆիզիկական ծավալի՝  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 50000 \text{ m}^3$ -ի դեպքում, իսկ ծավալի մեծացումից հետո այն նվազում է, թեև ոչ համամասնորեն ու համաչափ: Սա կնշանակի՝ որքան մեծ է հորի ֆիզիկական ծավալը, այնքան փոքր է պահպանվող բնական գազի ինքնարժեքը, այսինքն եթե նպատակ կա ու տեխնիկապես հնարավոր է ունենալ մեծ ծավալի հորեր, այն կբերի ինքնարժեքի նվազման: Մինչև  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 200000 \text{ m}^3$  ծավալը, պահեստավորված գազի միջին ինքնարժեքը կազմում է 16,16  $\text{դր.}/\text{տարի}$ , իսկ դրանից հետո՝ 15,97: Ընդհանուր միջինը կկազմի 16,06, որն էլ հետագայում կօգտագործվի տարբերակների համեմատության համար: Միաժամանակ անցումը 150  $\text{հազ. m}^3$  - ից 200  $\text{հազ. m}^3$  - ին բերում է ինքնարժեքի նվազմանը 1,25 % -ով, սակայն 200  $\text{հազ. m}^3$  -ից 250  $\text{հազ. m}^3$  - ին՝ 0,19 % -ով: հետևաբար առավել նպատակահարմարը կարող է լինել  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 90000 \text{ m}^3$  ծավալը: Այդպիսի արդյունք է ստացվել այլ հաշվարկների իրականացման արդյունքում:

Որպես երկրորդ տարբերակ դիտարկվել է առաջարկվող միջանկյալ տարբերակը, երբ **եռաստիճան միացավոր կոմպրեսորը մեխանիկական էներգիա է ստանում էլեկտրաշարժիչից, ճնշման իջեցումն իրագործվում է բազմաստիճան դրոսելաքսամբ**: Ի տարբերություն նախորդի, այս դեպքում անհրաժեշտ է որոշել միացավոր կոմպրեսորում գազի սեղմման համար անհրաժեշտ մեխանիկական էներգիայի մեծությունը, սակայն հաշվի առնելով, որ էլեկտրաշարժիչի օգգն՝  $\eta_{\text{էլ.շ}} = 0,97$ , ապա որոշել վառելիքի ծախսը էլեկտրակայանում, ընդունելով, որ ՀՀ էներգահամա-

կարգում էլեկտրաէներգիայի արտադրման համար վառելիքի տեսակարար ծախսը կազմում է 0,3 մՅ/1 կՎտ.ժ: Արդյունքում այս տարբերակի համար, երբ  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոռ.}}$ -ն ձեռք է բերում վերը նշված արժեքները, էլկտրաշարժիչի պահանջվող էլեկտրական հզորությունը, էլեկտրաէներգիայի տարեկան ծախսը, դրա վառելիքային համարժեքն ու դրա վրա տարեկան շահագործման ու բերված ծախսերը, պահեստավորված բնական գազի ծավալը նորմալ պայմաններում կորոշվեն նախորդ տարբերակի նման: Դրանց փաստացի արժեքները բերված են աղ. 2-ում, որտեղից երևում է որ  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոռ.}}$ -ի աճին համարժեք, աճում են էլեկտրական շարժիչի հզորությունը, դրան համարժեք վառելիքի տարեկան ծախսն ու արժեքը, պահեստավորված գազի ծավալի բերված ծախսերը: Սակայն պահեստավորված գազի ինքնարժեքը գնալով նվազում է:

Աղյուսակ 2

Որոնելի մեծություններն ըստ հորի տարբեր ֆիզիկական ծավալների

$V_{\text{ֆիզ.}}^{\text{հոռ.}}, \text{մ}^3$	50000	90000	150000	200000	250000
մեծությունները					
$N_{\text{էլ.շ.}}^{\text{հոռ. հզ.}}, \text{կՎտ}$	749	1351	2279,9	2994,5	3774,1
$\sum_{Z=i \text{ օր}} N_{\text{էլ.էն.}}^{\text{էլ.շ.}}, \text{կՎտ.ժ/տարի}$	1078560	1945440	3270096	4312080	5391504
$\sum_{Z=i \text{ օր}} B_{\text{բն.գ.սեգ.}}^{\text{էլ.շ.}}, \text{մ}^3/\text{տարի}$	323568	583632	981028,8	1293624	1617451,2
$\sum_{Z=i \text{ օր}} C_{\text{բն.գ.սեգ.}}^{\text{էլ.շ.}}, \text{ամ.դոլ./տարի}$	78335,8	141297,3	237507,1	313186,4	391584,9
$\sum_{60 \times 24 \text{ ժ}} V_{\text{բն.գ.ն.ս.}}^{\text{էլ.շ.}}, \text{հազ.նմ}^3/\text{տարի}:$	4375	7875	13125	17500	21875
$\sum_{Z=i \text{ օր}} E_{\text{բն.գ.}}^{\text{էլ.շ.}}, \text{ամ.դոլ./տարի}$	105157	187722,6	313889	413122,3	515938,3
$\sum_{60 \times 24 \text{ ժ}} C_{\text{բն.գ.ն.ս.}}^{\text{էլ.շ.}}, \text{դրամ/նմ}^3$	11,66	11,56	11,6	11,45	11,44

Միաժամանակ հետևում է, որ այն ամենամեծն է հորի ամենափոքր ֆիզիկական ծավալի համար: Դրա աճին համարժեք, մինչև 150000 մ<sup>3</sup> ծավալը, այն մնում է միջինը 11,61 սահմաններում կամ միմյանցից դրանք տարբերվում են 0,9% -ի չափով:  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոռ.}}$ -ի հետագա աճից հետո ինքնարժեքը 1,45% -ի չափով նվազում է ու մնում համարյա նույն մակարդակի վրա: Արդյունքում ինքնարժեքի միջինը կկազմի 11,53 դրամ/տարի: Եթե դրանք համեմատվեն նախորդ տարբերակի համանման արդյունքների հետ, ապա կստացվի, որ էլեկտրաշարժիչի կիրառումը պահպանվող գազի ինքնարժեքը նվազեցնում է 39,3%-ով: Սա հետևանք է մեխանիկական էներգիայի ստացման աղբյուրի էներգաարդյունավետության բարձրացման՝ նվազում են վառելիքի ծախսերը օգգ-ի աճի հետևանքով, ինչպես նաև հիմնական ներդրումների ծավալները՝ էլեկտրաշարժիչի տեսակարար արժեքը 4 անգամ ավելի փոքր է ԳՆԱՇ-ից և այլն: Այսինքն ոչ արդյունավետ և թանկ սարքավորումը բերում է ինքնարժեքի մեծացմանը, սակայն հարկ է նշել, որ ԳՆԱՇ-ի կիրառման դեպքում զագամատակարար կազմակերպությունն ավելի անկախ է ու

պահեստավորման պրոցեսը կախված չէ տվյալ էներգահամակարգ ու էլեկտրաէներգիայի ու դրան համարժեք վառելիքի գնից, թեև վերջինս ինքն է ձևավորում:

Առավել էներգաարդյունավետն ու ժամանակակիցն այն տարբերակն է, երբ եռաստիճան միացավոր կոմպրեսորը մեխանիկական էներգիա է ստանում էլեկտրաշարժիչից, իսկ ճնշման իջեցումն իրականացվում է գազի ընդարձակիչի օգնությամբ և դրա հետ հարակցված գեներատորի կողմից արտադրված էլեկտրաէներգիան հետ է վերադարձվում էներգահամակարգ: Արդյունքում հետ է վերադարձվում ծախսածի որոշակի մասը (հաշվարկները ցույց են տվել մոտ 42% -ը): Սա կնշանակի, որ ծախսված էլեկտրաէներգիայի վառելիքային համարժեքից հարկ կա հանել այդ մեծությունը: Սակայն հարկ կա հիմնական ներդրումների որոշման դեպքում հաշվի առնել ընդարձակիչի և գեներատորի ծախսերը և դրանից հետո որոշել տեղակայանքի վրա բերված ծախսերը: Անդրադառնանք դրան:

Ինչպես նշվեց, էլեկտրաէներգիայի արտադրման վրա վառելիքի ծախսը ու դրա արժեքները տարբեր  $V_{\Phi H Q}^{hnp}$  - ի համար նույն են, ինչ որ նախորդ դեպքում էր և դրանք ներկայացված են աղ. 2-ում: Սակայն այդ ծախսերի մի մասը կկոմպենսացվի, երբ կիրառվի «ընդարձակիչ-գեներատոր» տեղակայանքը և պահեստավորված բնական գազի ճնշման անկման դրոսելացման գործընթացը դրոսելային փականում փոխարինվի ընդարձակման գործընթացով ընդարձակիչում, իսկ դրա հետ միացած գեներատորում ստացված էլեկտրաէներգիան տրվի ընդհանուր էներգահամակարգ: Կառուցելով ընդարձակման երկաստիճան գործընթացի կորերը բնական գազի  $p - i$  դիագրամում, սկզբում ադիաբատ, ապա պոլիտրոպ, կարելի է որոշել տեսակարար աշխատանքները յուրաքանչյուր աստիճանում, երբ դրանցում անհակադարձելիության կորուստների գործակիցները, մասնավորապես ДГА-2500 СД մակնիշի «ընդարձակիչ-գեներատոր» տեղակայանքի համար, կազմում են.  $\eta_{oi}^{III} = 0,6$ : Այդ դեպքում տեսակարար աշխատանքների համար կստացվի.

$$l_{(p_{\text{H}n}, i_{\text{H}n})_{1-2}}' = \frac{l_{(p_{\text{H}n}, i_{\text{H}n})_{1-2}}}{\eta_{\text{H}n}} = 98 \cdot 0,6 = 58,8, \quad l_{(p_{\text{H}n}, i_{\text{H}n})_{3-4}}' = \frac{l_{(p_{\text{H}n}, i_{\text{H}n})_{3-4}}}{\eta_{\text{H}n}} = 130 \cdot 0,6 = 78 \quad \text{կՋ/կգ},$$

Եթե ընդունվի, որ հորի տարբեր  $V_{\Phi H Q}^{hnp}$  - ի համար օգտագործվում է միևնույն «ընդարձակիչ – գեներատոր» տեղակայանքը, սակայն տարբեր են պահեստավորված գազի ընդարձակման տևողությունները, ապա տվյալ տեղակայանքի տարբեր աստիճաններում և ընդհանուր էլեկտրական հզորությունները, երբ գեներատորի օգգ–ն 0,96 է, կկազմեն.

$$N_{\text{է.է.գ.}}^{\text{գե. I}} = M_{\text{գ}}' \cdot l_{(p_{\text{H}n}, i_{\text{H}n})_{1-2}}' \cdot \eta_{\text{գե. I}} = 8,16 \cdot 58,8 \cdot 0,96 = 460,62, \quad N_{\text{է.է.գ.}}^{\text{գե. II}} = M_{\text{գ}}'' \cdot l_{(p_{\text{H}n}, i_{\text{H}n})_{3-4}}' \cdot \eta_{\text{գե. II}} = 1,45 \cdot 78 \cdot 0,96 = 108,6,$$

$$\sum N_{\text{է.է.գ.}}^{\text{գե. I, II}} = N_{\text{է.է.գ.}}^{\text{գե. I}} + N_{\text{է.է.գ.}}^{\text{գե. II}} = 460,62 + 108,6 = 569,2 \quad \text{կՎտ},$$

Համեմատելով ծախսված և վերականգնված էլեկտրական հզորությունները, մասնավորապես հորի  $V_{\Phi H Q}^{hnp} = 90000 \text{ m}^3$  ծավալի համար, կստանանք.

$$\frac{\sum N_{\text{է.է.գ.}}^{\text{գե. I, II}}}{\sum N_{\text{է.է.գ.}}^{\text{է.շարժ. I, II, III}}} = \frac{569,2}{1351} \cdot 100\% = 42,1\%, \quad \text{որից}$$

հետևում է՝ «ընդարձակիչ – գեներատոր» տեղակայանքի կիրառման հետևանքով կվերականգնվի ծախսածի 42 %-ը, որն էլ վկայում է նման տարբերակի կիրառման բարձր էներգաարդյունավետության մասին, սակայն տվյալ ընդարձակիչի կողմից արտադրված սեզոնային էլեկտրաէներգիայի քանակը՝  $\sum_{Z=i \text{ օր}} \sum N_{\text{է.է.գ.}}^{\text{գե. I, II}}$  կախված է ոչ միայն հզորությունից, այլ նաև ընդարձակման

պրոցեսի տևողությունից՝  $Z_{\text{ը-գ.տ.}}^{\text{հոր.գ.այ.}}$ : Արդյունքում կորոշվի գեներատորում արտադրված էլեկտրա-  
էներգիայի սեզոնային քանակին համապատասխան վառելիքային համարժեքը՝  $\sum_{Z=i\text{օր}} B_{\text{ըն.գ.սեզ.}}^{\text{գեց.}}$  ու դրա  
արժեքը: Այդ մեծությունները հետևյալն են.

$$V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 50000 u^{\beta}, Z_{\text{ը-գ.տ.}}^{\text{հոր.գ.այ.}} = 12,1 \text{ օր/տարի}, \sum_{Z=i\text{օր}} \sum N_{\text{էլ.էն.}}^{\text{գեց.1.1}} = 452995,2 \text{ կՎտ.ժ/տարի}, \sum_{iZ=i\text{օր}} B_{\text{ըն.գ.սեզ.}}^{\text{գեց.}} = 135898,6$$

$$u^{\beta}/\text{տարի}, \sum_{iZ=i\text{օր}} C_{\text{ըն.գ.սեզ.}}^{\text{էլ.2}} = 32901,04 \text{ ամ.դոլ./տարի}, V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 90000 - 21,9, 298602,3, 817084,8, 245125,4,$$

$$V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 150000 - 36,4, 458657,8, 1373440,3, 412032,1, V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 200000 - 48,6, 1811073,6, 543322,1, 131538,3,$$

$$V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 250000 - 60,7, 2264431,7, 679329,5, 164465,6:$$


Սակայն, ի վերջո, վճռորոշը տեղակայանքի վրա բերված ծախսերն են: Այն կորոշվի վերը  
բերված արտահայտությամբ, սակայն  $\sum_{Z=i\text{օր}} C_{\text{ըն.գ.սեզ.}}^{\text{գեց.}}$  մեծությունը կհանվի կոմպրեսորում գազի սեղմ-  
ման համար անհրաժեշտ էլեկտրաէներգիայի սեզոնային արժեքից՝  $\sum_{i=ii\text{օր}} C_{\text{ըն.գ.սեզ.}}^{\text{էլ.2}}$ : Արդյունքում,  
բերված ծախսերն ու պահեստավորված գազի ինքնարժեքը, հորի տարբեր ֆիզիկական ծավալ-  
ների դեպքում, կկազմեն.

$$V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 50000 u^{\beta}, \sum_{Z=i\text{օր}} E_{\text{ըն.գ.}}^{\text{էլ.2}} = 89681,4 \text{ ամ. դոլ. / տարի}, c_{\text{պահ.գ.}}^{\text{էլ.2-ըն.գեց.}} = 9,5 \text{ դրամ / } u^{\beta} V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 90000 -$$

$$111480, 10, V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 150000 - 266329,1 \text{ 9,84}, V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 200000 - 355674,2, 9,86, V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 250000 - 434959,5, 9.64:$$

Ստացված արդյունքներից հետևում է, որ պահեստավորված գազի ինքնարժեքը հորի  
տարբեր ֆիզիկական ծավալների դեպքում առավել փոքրն է  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 50000$  ծավալի դեպքում, ապա  
այն  $V_{\text{ֆիզ.}}^{\text{հոր}} = 90000$ -ի համար աճում է մինչև առավելագույնը, ապա այն սկսում է նվազել մինչև 9,4  
դր./ $u^{\beta}$ :

Որպեսզի հնարավոր լինի համեմատել դիտարկված տարբերակների համար պահեստա-  
վորված գազի ինքնարժեքը հորի տարբեր ֆիզիկական ծավալների դեպքում կառուցվել են  
համապատասխան գրաֆիկները, որոնք բերված են նկարում.



**Նկար. Գազի պահեստավորման ինքնարժեքը հորի ֆիզիկական ծավալի տարբեր արժեքների և տարբերակների դեպքում**
*Փոքրախմբաքանակ բեռների փոխադրումները կարևոր նշանակություն ունեն ինչպես ազգաբնակչության և երկրի տնտեսության տրանսպորտային պահանջարկները բավարարելու գործում: Թերևս կարևոր է ըստ բեռի զանգվածի, բեռի խմբաքանակի ճշգրիտ բաշխումը, որը զգալի ազդեցություն ունի փոքրախմբաքանակ բեռների փոխադրման տևողության և ավտոմոբիլի շահագործման արդյունավետության վրա: Հայաստանի Հանրապետության համար կարևոր և արդիական խնդիր է նման փոքրախմբաքանակ բեռների փոխադրման գործընթացի կատարելագործումը, ինչը կուղեկցվի լոգիստիկ շղթայի հզորացմամբ: Աշխատանքում վերլուծվել է Հայաստանի Հանրապետությունում փոքրախմբաքանակ բեռների տեսականին, նշվել է էլեկտրասարքավորումների, կենցաղային սարքավորումների և համակարգչային տեխնիկայի ու գրքերի, ամսագրերի, այլ պարբերականների ներմուծումը և արտահանումը:*

***Առանցքային բառեր.** փոքրախմբաքանակ բեռ, լոգիստիկ շղթա, փոխադրման տևողություն, քանակային հարաբերություն, փոխադրման գործընթաց:*

**Ներածություն**

Մեր օրերում լոգիստիկական համընդհանուր տարածում է գտել տնտեսության բոլոր ճյուղերում: Այն ստեղծում է գործունեության բոլոր պայմանները, որոնք թույլ են տալիս ապահովել կազմակերպության երկարատև առկայությունը շուկայում: Հայաստանի Հանրապետությունում առավել լայն տարածում է գտել լոգիստիկ շղթայի միջոցով իրականացնել փոքրախմբաքանակ բեռների փոխադրում, բայց ցավոք այն դեռ կատարելագործման փուլում է գտնվում: Մտորն կծանոթանանք Հայաստան ներկրվող բեռների մի քանի տեսակների վերլուծությանը:

Ներկայումս շատ երկրներում (այդ թվում՝ հատկապես Հայաստանի Հանրապետությունում) փոքրախմբաքանակ բեռների փոխադրումների զարգացումն իրականացվում է առավելապես ներկրվող բեռների ծավալների աճի հաշվին: Ընդ որում, տարբեր հեղինակների կողմից կատարած ուսումնասիրությունների արդյունքում ապացուցվել է, որ տրանսպորտային ընկերության լոգիստիկ շղթա մտնող բեռների խմբաքանակը պատահական բնույթ է կրում [1, 2]: Եթե ժամանակի որոշակի հավասար միջակայքերի ընթացքում պարբերաբար դիտարկենք լոգիստիկ շղթա մտնող բեռների խմբաքանակները հոսքում՝ ըստ բեռի զանգվածի և բեռների խմբաքանակների բաշխման բնույթի, ամեն անգամ այն տարբեր կլինի: Բեռի խմբաքանակի բաշխման պատահական բնույթն այն է, որ անհնար է նախօրոք կռահել բեռների խմբաքանակների ճշգրիտ զանգվածը և այն ճշգրիտ ժամանակը, թե երբ դրանք կներկայացվեն փոխադրման: Հոսքում՝ ըստ բեռի զանգվածի, բեռի խմբաքանակի ճիշտ բաշխումը զգալի ազդեցություն ունի փոքրախմբաքանակ բեռների փոխադրման տևողության և ավտոմոբիլի շահագործման արդյունավետության վրա:

Ավտոմոբիլային տրանսպորտով փոխադրված բեռների 25%-ը փոքրախմբաքանակ բեռներ են [3, 4]: ՀՀ ներկրվող հիմնական բեռնահոսքերից կարելի է նշել [5].


1. կենցաղային սարքավորումներ (127,000 տ), էլեկտրասարքավորումներ (177,000 տ), համակարգչային տեխնիկա (խոշոր ներմուծողներ են «Արայ» ընկերությունը և «Զիգգագ» ՍՊԸ),
2. տպագիր գրքեր (229 տ), լրագրեր, ամսագրեր, այլ պարբերականներ (219 տ), մանկական գիրք նկարներ՝ նկարելու կամ գունավորելու համար (9,7 տ), քարտեզներ (2,6 տ) և այլն (գրքեր խոշոր խմբաքանակով ներմուծողը «Բուկինիստ» ՍՊԸ),
1. դեղորայք և բժշկական սարքավորումներ,
2. հեռախոսներ, բջջային հեռախոսներ,
3. ջեռուցման սարքավորումներ, կաթսաներ, սալիկներ, տարբեր պիտույքներ և այլն,
4. սննդային հավելումներ, հումք՝ սննդարդյունաբերության համար, քիմիական արտադրանք,
5. կոսմետիկա, պարագաներ, հագուստ, կոշիկ,
6. պտուղ-բանջարեղեն, պահածոյացված բանջարեղեն, ձկնեղեն և այլն,
7. ալկոհոլային, թույլ ալկոհոլային և ոչ ալկոհոլային խմիչքներ,
8. սպասք և այլ արտադրանքներ:

Հետևաբար, մեր հանրապետության համար կարևոր և արդիական խնդիր է նման փոքրախմբաքանակ բեռների փոխադրման գործընթացի կատարելագործումը, ինչը կուղեկցվի լոգիստիկ շղթայի հզորացմամբ և փոխադրման տևողության կրճատմամբ:

Մեր կողմից իրականացված դիտարկումները ցույց են տվել հետևյալը.

**1. Կենցաղային սարքավորումներ, էլեկտրասարքավորումներ, համակարգչային տեխնիկա (նկ. 1):**


Այս տեսակի ներմուծվող բեռների քանակը կազմում է փոխադրումների 95...97 %-ը: Դրանք բնութագրվում են մեծ տեսականիով. 5...15 անուն ապրանք ամեն մի խմբաքանակում: Հոսքում բեռի խմբաքանակի միջին զանգվածը տատանվում է 0,3...1,4 տ-ի սահմաններում, իսկ 1 տ բեռի միջին արժեքը՝ 10...100 հազար դոլլարի սահմաններում: Լոգիստիկ շղթա շաբաթական մտնում է 3...7 խմբաքանակ: Բեռի այս տեսակի համար հոսքում՝ ըստ բեռի զանգվածի, բեռի խմբաքանակի բաշխման բնույթը հետևյալն է, խմբաքանակների 74 %-ի զանգվածը մինչև 1 տ է, 8%-ինը՝ 1...2 տ, 13%-ինը՝ 2...5 տ և 5 %-ինը՝ 5...20 տ:



**Նկ. 1. Կենցաղային սարքավորումների, էլեկտրասարքավորումների և համակարգչային տեխնիկայի բաշխման բնույթը**

**2. Գրքերի, ամսագրերի, այլ պարբերականների, քարտեզների և այլ բեռների ներմուծում (նկ. 2):**

Այս տեսակի բեռների համար ներմուծողների և արտահանողների քանակական հարաբերությունը գրեթե 92...95 % է կազմում: Յուրաքանչյուր խմբաքանակ պարունակում է 2...3 անուն ապրանք, հոսքում բեռի խմբաքանակի միջին զանգվածը տատանվում է 1,8...4,5 տ-ի սահմաններում: Լոգիստիկ շղթա շարաթական մտնում է բեռի 1...3 խմբաքանակ: Բեռի այս տեսակի համար հոսքում ըստ զանգվածի բեռի խմբաքանակի բաշխման բնույթը հետևյալն է. խմբաքանակների 25 %-ի զանգվածը մինչև 1 տ է, 22 %-ինը՝ 1...2 տ, 16 %-ինը՝ 2...5 տ 37 %-ինը՝ 5...20 տ:



**Նկ. 2. Գրքերի, ամսագրերի, այլ պարբերականների և քարտեզների բաշխման բնույթը**

Տարբեր տեսակի բեռների խմբաքանակների հնարավոր բաշխումը և խմբակայնության համեմատումը ցույց է տրված, համապատասխանաբար, աղյուսակում և նկ. 3-ում:

*Աղյուսակ*

**Տարբեր տեսակի բեռների խմբաքանակների հնարավոր բաշխման համեմատությունը**

Բեռի խմբաքանակի զանգված, տ	Կենցաղային սարքավորումներ, էլեկտրասարքավորումներ, համակարգչային տեխնիկա, %	Գրքեր, ամսագրեր, այլ պարբերականներ, քարտեզներ, %
Մինչև 1	74	25
1...2	8	22
2...5	13	16
5...20	5	37

**Жанна Юриковна Гаспарян**

*Национальный политехнический университет Армении, г.Ереван, РА,  
jannagasparyan.1995@mail.ru*

**АНАЛИЗ ПЕРЕВОЗОК МАЛОГАБАРИТНЫХ ГРУЗОВ С ПРИМЕНЕНИЕМ  
ТЕРМИНАЛЬНЫХ ТЕХНОЛОГИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

*Транспортировка малогабаритных грузов имеет большое значение как для граждан, так и для удовлетворения транспортных потребностей экономики страны. Важно точно различать массу*

груза и количество партий, которые оказывают значительное влияние на время отгрузки и эффективность работы автомобиля. Актуальной проблемой Республики Армения является усовершенствование перевозок малогабаритных грузов, которые будут сопровождаться укреплением логистической цепочки. Проанализирован ассортимент малогабаритных грузов в Республике Армения, включая импорт и экспорт электрооборудования, бытовой и компьютерной техник, книг, журналов и других периодических изданий.

**Ключевые слова:** малогабаритный груз, логистическая цепочка, длительность транспортировки, количественные отношения, процесс транспортировки.

**Zhanna Yurik Gasparyan**

National Polytechnic University of Armenia, jannagasparyan.1995@mail.ru

## ANALYSIS OF SMALL CARGO TRANSPORTATION ORGANIZATION BY USING THE TERMINAL TECHNOLOGIES IN REPUBLIC OF ARMENIA

*Minor cargo transportation is very important both for the satisfaction of the population and country's economic needs. Indeed the accurate distribution of the load according to its weight and batch is very important, which has a significant impact on shipment duration and on the efficacy of the automobile operation. The improvement of the minor cargo transportation is an actual and crucial issue for RA, and it will be accompanied by the strengthening of the logistic chain. In this work the assortment of the minor cargo in RA was analyzed, particularly the export and import of the electrical equipments, household equipments, computer equipments, books, magazines and other periodicals.*

**Keywords:** small cargo, logistic chain, transportation duration, quantity ratio, transportation process.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Беляев В.М.** Терминальные системы перевозок грузов автомобильным транспортом.- М.: Транспорт, 1986.- 57 с.
2. **Корнеев Ю.Н.** и др. Оптимизация структуры грузового автомобильного транспорта.- Киев: УкрНИИТИ, 1979.- 43 с.
3. <http://customs.am/Content.aspx?itn=csCIExportstatistics>
4. <http://customs.am/Content.aspx?itn=csCIImportStatistics>
5. Հայաստանի վիճագրական տարեգիրք.- Երևան. 2010.- էջ 20-55:

### REFERENCE

1. **Belyaev V.M.** Terminalnie sistemi perevozok gruzov avtomobilnim transportom [Terminal systems of freight transportation by vehicles].-M.: Transport, 1986.-57s.
2. **Korneev Y.N. i dr.** Optimizacia strukturi avtomobilnogo transporta [Optimisation of the freight transport structure].- Kiev: UkrYIINTI, 1979.- 43 s.
3. <http://customs.am/Content.aspx?itn=csCIExportstatistics>
4. <http://customs.am/Content.aspx?itn=csCIImportStatistics>
5. Hayastani vichagrakan taregirq [Armenia's statistical yearbook]: Yerevan. 2010.- ej 20-55:

**Ժաննա Յուրիկի Գասպարյան** Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան «Տնտեսագիտության և փոխադրումների կազմակերպման» ամբիոնի 2-րդ կուրսի մագիստրանտ  
Հեռ. +37498985253, էլ. հասցեն՝ *jannagasparyan.1995@mail.ru*,

*Гаспарян Жанна Юриковна, магистрант, (РА, г. Ереван) - НУАСА, кафедра "Экономика и организация перевозок", (+374)98985253, jannagasparyan.1995@mail.ru*

*Gasparyan Zhanna Yurik, master student, (Yerevan, RA) – NUACA, National Polytechnic University of Armenia, Chair of Economics and Transportation Organization, (+374)98985253, jannagasparyan.1995@mail.ru*

*Ներկայացվել է՝*

*25.01.2018 թ.*

*Ընդունվել է տպագրության՝*

*02.04.2018 թ.*

ՀՏԴ 657.6.012.16

**\*Լուիզա Ժիրայրի Ռուշանյան<sup>1</sup>, Արա Արամի Հովհաննիսյան<sup>2</sup>**

<sup>1</sup>Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ՀՀ, ք. Երևան, luiza0126@mail.ru

**ՁԵՌՆԱՐԿՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ**

*Դիտարկվում են ձեռնարկությունների ակտիվների կառավարման, ձեռնարկությունների ֆինանսական քաղաքականության, ֆինանսական գործիքների կիրառման, ֆինանսական կանխատեսման, պլանավորման և բյուջետավորման հիմնախնդիրները: Վերլուծվում է պետության ազդեցությունը ձեռնարկությունների ֆինանսական հարաբերությունների վրա: Յուրաքանչյուր ձեռնարկատիրոջ խնդիրն է գործի շահավետ կառավարումն առկա ռեսուրսների օպտիմալ օգտագործմամբ, ծախսերի նվազեցումը, ինչպես նաև առավելագույնի հասցնել սոցիալ-տնտեսական կարիքները բավարարելու հնարավորությունները: Հետազոտության նպատակն է՝ ինչպես բարելավել ձեռնարկության ֆինանսական արդյունքները, բարձրացնել ձեռնարկությունների շահութաբերությունը և նվազեցնել ռիսկայնությունը:*

**Առանցքային բառեր.** *ֆինանսական լներիջ, ֆինանսական քաղաքականություն, ֆինանսատեղեկատվական ոլորտ, դրամական հարաբերություն:*

Ձեռնարկությունն ինքնուրույն տնտեսական սուբյեկտ է, որն ունի իրավաբանական անձի կարգավիճակ, արտադրում է ապրանքներ, մատուցում ծառայություններ, կատարում աշխատանքներ, կարող է զբաղվել տնտեսական գործունեության տարբեր տեսակներով, որոնց նպատակն է շահույթի ստացումը՝ հետևաբար կապիտալի ավելացումը:

Ֆինանսական հարաբերությունների նյութական հիմքը դրամն է, իսկ առաջացման անհրաժեշտ պայմանը՝ դրամական միջոցների իրական շարժը, որի արդյունքում ձևավորվում և օգտագործվում են դրամական միջոցների կենտրոնացված ու ապակենտրոնացված ֆոնդերը: Շուկայական տնտեսության պայմաններում կարևոր է ձեռնարկատիրական գործունեության արդյունավետ կազմակերպումն ու գրագետ կառավարումը:

Ֆինանսները դրամական հարաբերություններ են, սակայն ոչ բոլոր դրամական հարաբերություններն են համարվում ֆինանսներ: Ֆինանսները դրամական հարաբերությունների բաղկացուցիչ մասն է, որը մի ամբողջական համակարգ է միայն իրեն յուրահատուկ հատկանիշներով: Դրամական հարաբերություններն ընդունում են իրենց դրսևորման մի առանձին ձև, որոնք անվանվում են ֆինանսական հարաբերություններ: Ֆինանսների գործողության ոլորտը երկրի ողջ տնտեսությունն է: Ձեռնարկությունը, որը բիզնես-ծրագրին համապատասխան զբաղվում է այս կամ այն ապրանքատեսականու արտադրությամբ կամ ծառայությունների մատուցմամբ, կամ սպասարկման աշխատանքներով, կատարում է որոշակի ծախսեր: Այն իր արտահայտությունն է ստանում ֆինանսական հատուկ ձև ընդունող ապրանքադրամային հարաբերությունների ձեռնարկության ծախսերի մեջ: Ստեղծված արդյունքն ապրանքն է (ծառայություն, սպասարկում), որը ենթակա է իրացման (վաճառքի) կամ որպես արտադրական նշանակություն ունեցող արտադրանք, օգտագործվում է այլ ձեռնարկությունների կողմից կամ որպես ապրանք սպառվում է, այսինքն՝ գնվում է սպառողների կողմից: Այդ գործունեության հետևանքով առաջանում են ապրանքադրամային հարաբերություններ և ստեղծվում է համախառն եկամուտ [1]:

Ձեռնարկության ֆինանսները ֆինանսական կամ դրամական հարաբերությունների այն համախումբն են, որոնք առաջանում են հիմնական ու շրջանառու կապիտալի, ձեռնարկության դրամական ֆոնդերի ձևավորման և օգտագործման ընթացքում:

Ձեռնարկության ֆինանսական քաղաքականությունը որոշվում է ձեռնարկության հիմնադիրների կողմից, մշակվում է ձեռնարկության ֆինանսավորման ոլորտի ղեկավարների կողմից և իրականացվում է ֆինանսական ծառայությունների, արտադրական կառույցների և ձեռնարկության այլ ստորաբաժանումների կողմից: Ֆինանսական քաղաքականությունը ֆինանսական միջոցների նպատակաուղղված ձևավորման, կազմակերպման և օգտագործման համար նախատեսված միջոցառումներն են ձեռնարկության նպատակներին հասնելու համար [2]: Ֆինանսական քաղաքականությունը կարող է սահմանվել նաև որպես ձեռնարկության կողմից ընդհանուր ֆինանսատեղեկատվության շրջանակներում իրականացվող մի շարք գործողությունների ոլորտ՝ հաշվի առնելով ձեռնարկության գործունեության արտաքին և ներքին գործունեությունը:

Ֆինանսատեղեկատվական ոլորտը համակարգված ֆինանսական տեղեկատվություն է, որտեղ պարունակվում է տեղեկատվական բազա և արտացոլվում առևտրային կազմակերպության իրական ֆինանսական վիճակը [3]:

Ձեռնարկության ֆինանսները առանձնացված են պետության ֆինանսներից՝ պետությունը պատասխանատվություն չի կրում տնտեսավարող սուբյեկտների ֆինանսական պարտավորությունների համար և հակառակը: Կազմակերպություններն ինքնուրույն են որոշում իրենց տնտեսական քաղաքականությունը, գործունեությունը, արտադրության ծավալները, սահմանում են գները, ակտիվների և պարտավորությունների չափն ու կառուցվածքը, զուտ շահույթի օգտագործումը և դրամական միջոցների ներդրումը: Մակայն չի կարելի ասել, որ կազմակերպությունները ամբողջությամբ ինքնուրույն են: Ֆինանսական հարաբերությունների զգալի մասը կարգավորվում է պետության կողմից.

- հարկային քաղաքականություն - հարկերը և հարկային տոկոսադրույքները մեծ ազդեցություն են ունենում կազմակերպության եկամուտների վրա,
- ամորտիզացիայի քաղաքականություն – իրականացվում է ամորտիզացիայի կրճատման կարգավորում, արագացված մաշվածություն կիրառելու հնարավորություն, հիմնական ֆոնդերի գերազնահատում,
- վարկային քաղաքականություն – այն արտահայտվում է վարկային տոկոսադրույքով, դրամական միջոցների պարամետրերով, գնաճի մակարդակով, արտարժույթի կայունությամբ,
- հակամենաշնորհային քաղաքականություն – պետության կողմից համալիր միջոցառումներ՝ ուղղված արտադրանքի մոնոպոլիզացման դեմ, արտադրողների և ծառայություն մատուցողների միջև մրցակցության զարգացմանը,
- ներդրումային քաղաքականություն – միջոցառումների համակարգ է, որը սահմանում է կապիտալի ծավալը, կապիտալ ներդրումների կառուցվածքը և ուղղությունը, հիմնական միջոցների աճը և դրանց թարմացումը գիտության ու տեխնոլոգիայի առաջընթացի հիման վրա: Պետությունը կարող է ձեռնարկություններին հատկացնել ուղղակի ներդրումներ, փոխել վարկի արժեքը կամ երաշխավորել դրա ստացումը,
- դրամավարկային քաղաքականություն – տնտեսական, իրավական և կազմակերպական ձև և միջոցառում է՝ պետական մարմինների, բանկերի, ֆինանսական հաստատությունների արտարժույթային հարաբերություններով արտահայտված [4]:

Երբ ձեռնարկությունը որոշել է, թե որքան կապիտալի կարիք ունի և ինչ աղբյուրներից, անհրաժեշտ է հայթայթել այդ կապիտալը ֆինանսական շուկայում: Ֆինանսական շուկան այն օբյեկտն է, որտեղ ներդրողներն ու կապիտալի կարիք ունեցող ձեռնարկությունները հանդիպում են մեկմեկու: Կապիտալի շուկաներում վաճառվում են երկարաժամկետ արժեթղթերը՝ բաժնետոմսերն ու պարտատոմսերը:

Կապիտալի համարժեք կառուցվածքը ենթադրում է ֆինանսական լներիջի (լծակի) «ճիշտ» մակարդակի ընտրություն: Ֆինանսական լներիջն ակտիվների ֆինանսավորումն է նշագրված պարտավորությունների և արտոնյալ բաժնետոմսերի միջոցով [5]: Ֆինանսական լներիջի մակարդակի բարձրացումը հնարավորություն է տալիս բարձրացնելու սեփական կապիտալի շահութաբերությունը: Այդուհանդերձ, այդ արդյունքը ստացվում է լներիջի մինչև որոշակի մակարդակ բարձրացման դեպքում: Բարձր լներիջի դեպքում կարիք է առաջանում ունենալու ավելի մեծ ծավալների գործառնական եկամուտ՝ փակելու համար նշագրված լրացուցիչ պարտավորությունները (տոկոսավճարներն ու արտոնյալ շահաբաժինները):

Ընդհանուր առմամբ, ֆինանսական լներիջի օգտագործումը հանգեցնում է ֆինանսական արդյունքների բարելավման պայմանով, որ միջոցների շահութաբերությունն ավելի բարձր է, քան դրանց ներգրավված արժեքը: Այդուհանդերձ, բարձր լներիջը բարձրացնում է նաև ռիսկայնության մակարդակը, ուստի պետք է նկատի ունենալ, որ ֆինանսական լներիջի օգտագործումը և դրա մակարդակը բաժնետերերի համար գտնվում է բարձր հատույց/բարձր ռիսկ համատեքստում: Ֆինանսական լներիջը կարող է արտահայտվել այնպիսի գործակցի միջոցով, ինչպիսին է պարտավորությունների և ընդհանուր կապիտալի հարաբերակցությունը: Ֆինանսական լներիջը կարող է արտահայտվել նաև որպես գործառնական շահույթի (շահույթը մինչև տոկոսների վճարումը և հարկումը, կամ ՇՄՏՀ) միավորի փոփոխության արդյունքում շահույթի տոկոսային փոփոխություն: Այս ցուցանիշը կոչվում է ֆինանսական լներիջի աստիճան (ՖԼԱ) և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ՖԼԱ} = \text{ՇՄՏՀ} / \{ \text{ՇՄՏՀ} - \text{Տ} - (\text{ԱՇ} / (1 - \text{ՀՏ})) \},$$

որտեղ ՇՄՏՀ-ն շահույթն է՝ մինչև տոկոսների վճարումը և հարկումը, Տ-ն՝ տոկոսավճարն է, ԱՇ-ն՝ արտոնյալ բաժնետոմսերի գծով վճարվող շահաբաժինը, ՀՏ-ն՝ հարկային տոկոսադրույքը:

Որքան բարձր է ֆինանսական լներիջի աստիճանը, այնքան ռիսկային է բիզնեսը, քանի որ, մի կողմից, «լծակի», գործառնական շահույթի աճի պարագայում կարող է հանգեցնել ըստ սեփական կապիտալի շահութաբերության ցուցանիշի ավելի բարձր աճի, սակայն մյուս կողմից, նույն «լծակի» օգնությամբ, առաջինի նվազման պարագայում երկրորդը կնվազի ավելի մեծ չափով [5]:

Երկրի սոցիալ-տնտեսական կյանքում ֆինանսների դերը դրսևորվում է դրա բաշխիչ և վերահսկիչ գործառույթներում: Լայն առումով, ՀՀ ֆինանսական համակարգը հանրային և մասնավոր ֆինանսների ամբողջությունն է, իսկ նեղ առումով ՀՀ ֆինանսական համակարգը ասելով հասկացվում են հանրային ֆինանսները, որոնք ծառայում են հասարակական բազմատեսակ կարիքների բավարարմանը: ՀՀ ֆինանսական համակարգում կենտրոնական տեղ է զբաղում ՀՀ պետական բյուջեն, որի միջոցով ստեղծվում և օգտագործվում է հանրապետության կենտրոնացված դրամական հիմնադրամը [6]:

Պետական կառավարման մարմինները, ինչպես նաև յուրաքանչյուր բյուջետային կազմակերպություն, մշակում են ծախսերի նախահաշիվ, որում արտացոլվում են հատկացվող բյուջետային միջոցների ծավալները, նպատակային ուղղվածությունը և եռամսյակային բաշխումը: Ընդ որում, այդ հիմնարկների ծախսերի նախահաշիվներում, բյուջետային ֆինանսավորումն



ընդգրկում է հավասար քանակությամբ նպատակային հոդվածներ: Բյուջետային կազմակերպությունների սեփական եկամուտների համար կազմվում են այլ բնույթի նախահաշիվներ [7]:

Այսպիսով, ձեռնարկությունների ֆինանսական կայունության ամրապնդումը կարևորագույն տնտեսական խնդիրներից մեկն է, քանի որ ֆինանսական կայունության անբավարար մակարդակը կարող է հանգեցնել ձեռնարկությունների անվճարունակության և արտադրության զարգացման համար միջոցների բացակայության: Հետևաբար, ֆինանսական կառավարման դերը մեծանում է, որի նպատակներն են մշակել և կիրառել ռազմավարական և մարտավարական նպատակների հասնելու առավել արդյունավետ մեթոդներ:

Ներկայացված տեղեկատվությունը թույլ կտա վերլուծել այն տվյալները, որոնք կարող են ցույց տալ եկամտի ավելացման (ռեսուրսային) աղբյուրները և ծախսերի կրճատումը, ինչը կարևոր է նաև առևտրային կազմակերպության իրացվելիության և արդյունավետության համար, ինչպես նաև նպաստել ձեռնարկության ֆինանսական և տնտեսական գործունեությունում կիրառվող նպատակների և ֆինանսական քաղաքականության իրականացմանը: Հաշվի առնելով առկա տարբերակներից յուրաքանչյուրի օգտագործման հետևանքները, հնարավոր կլինի կատարել լավագույն ընտրությունը և խուսափել ֆինանսական քաղաքականության խնդիրներից:

**\*Луиза Жирайровна Рушанян<sup>1</sup>, Ара Арамович Оганнисян<sup>2</sup>**

*Национальный университет архитектуры и строительства Армении, г. Ереван, РА  
luiza0126@mail.ru*

## **ПРОБЛЕМЫ ФИНАНСОВОЙ ПОЛИТИКИ ПРЕДПРИЯТИЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ**

*Рассматриваются проблемы управления активами предприятий, финансовая политика предприятий, применение финансовых инструментов, финансовое прогнозирование, планирование и бюджетирование. Анализируется влияние государства на финансовые отношения предприятий. Проблема каждого предпринимателя заключается в эффективном управлении бизнесом с оптимальным использованием имеющихся ресурсов, сокращение расходов, а также максимальное использование возможностей для удовлетворения социальных и экономических потребностей. Целью исследования является улучшение финансовых показателей предприятия, повышение рентабельности предприятий и снижение рисков.*

**Ключевые слова:** *финансовый рычаг, финансовая политика, финансовая информационная сфера, денежные отношения.*

**\*Luiza Zhirayr Rushanyan<sup>1</sup>, Ara Aram Hovhannisyan<sup>2</sup>**

*National University of Architecture and Construction of Armenia, RA, Yerevan  
luiza0126@mail.ru*

## **PROBLEMS OF THE FINANCIAL POLICY OF ENTERPRISES IN THE REPUBLIC OF ARMENIA**

*Directions of management of the enterprises, financial policy of the enterprises, application of financial instruments, financial forecasting, planning and budgeting are considered. The influence of the state on the financial relations of enterprises is analyzed. A natural task of every entrepreneur is profitable doing business through the optimal use of available resources, minimize costs and maximize the possibility*

of meeting socio-economic needs. Therefore, the aim of the study is to improve the financial performance of the company, how to maximize profitability and reduce risk.

**Keywords:** financial leverage, financial policy, financial information sphere, monetary ratio.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Վարդանյան Վ. Ա. Ֆինանսական մենեջմենթ, Երևան, Արտագերս, 1998, էջ 133:
2. Шеремет АД, Ионова А.Ф. Финансы предприятий: менеджмент и анализ.- М.: ИНФРА-М, 2004. - 538 с.
3. Измestьева О.А. Влияние финансово-информационной сферы на финансовое состояние коммерческой организации: дис. ... канд. экон. наук. - Тольятти, 2010. - 152 с.
4. Обущенко Т. Н. Финансы строительства, Москва, Форум, 2014, 9 с.
5. Գալստյան Մ. Ձեռնարկության ֆինանսներ, Երևան 2003 էջ 91-92
6. Մուրադյան Ս. Ֆինանսական իրավունք, Երևան, Աստղիկ, 2003 էջ 9
7. Բայադյան Ա.Հ., Վարձիկյան Մ. Բյուջետային կազմակերպությունների ֆինանսներ, Երևան, Լիմուշ, 2010, էջ 62-63

REFERENCES

1. Vardanyan V. A. Finansakan menejment [Financial Management], Yerevan, Artagers, 1998, ej 133
2. Sheremet AD. Ionova A. F. Finansi Predpriyatii: menejment i analiz [Finance of enterprises: management and analysis]. - M.: INFRA-M, 2004.- 538s.
3. Izmesteva O.A. Bliyanie finansovo-informacionnoh sferi na finansovoe sostoyanie kommercheskoh organizacii [Influence of the financial and information sphere on the financial condition of the commercial organization]: dis. ... kand. Ekon. Nauk. - Tolyatii, 2010. - 152 s.
4. Obushenko T. N. Finansi stroitelstva [Construction Finance], Moscow, Forum, 2014, 9 s.
5. Galstyan M. Dzernarkutyayn finansner [Enterprise finance], Yerevan, 2003, ej 91-92
6. Muradyan S. Finansakan iravunq [Financial Law], Yerevan, Asoxik, 2003, ej 9
7. Bayadyan A.H., Karchikyan M. Byujetaryin kazmakerputyunneri finansner [Budget organizations finances], Yerevan, Limush, 2003, ej 62-63

*Լուիզա Ժիրայրի Ռուշանյան, մագիստրանտ (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի իրավունքի և կառավարման ամբիոն, (+374) 99 63 37 11, luiza0126@mail.ru, Արա Արամի Հովհաննիսյան (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի իրավունքի և կառավարման ամբիոն, դասախոս, տ.գ.թ, դոցենտ, հեռ. 093 203898, cps@dolphin.am*

*Рушанян Луиза Жирайровна, магистрант (РА, г. Ереван) - НУАСА, кафедра «Экономика, право и управление», (+374)99633711, luiza0126@mail.ru, Ара Арамович Оганнисян, (РА, г. Ереван) - НУАСА, кандидат экономики, доцент, кафедра «Экономика, право и управление», преподаватель 093 203898, cps@dolphin.am*

*Rushanyan Luiza Zhirayr, master student (Yerevan, RA) – NUACA, Chair of economics, law and management (+374) 99 63 37 11, luiza0126@mail.ru, Hovhannisyayn Ara Aram, (Yerevan, RA) – NUACA, Candidate of Economics, Associate Professor, Chair of economics, law and management, lecturer, 093 203898, cps@dolphin.am*

*Ներկայացվել է՝ 12.02.2018 թ.  
 Ընդունվել է տպագրության՝ 02.04.2018 թ.*

ՀՏԴ 658.7.011.1

**Հովհաննես Ռոբերտի Աբրահամյան**

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ՀՀ, ք.  
Երևան, hovhannes.abrahamyan@icloud.com*

**ԼՈՂԻՍՏԻԿԱՅԻ ԴԵՐԸ ԵՎ ՏԵՂԸ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԲԻԶՆԵՍ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ**

*Ղիտարկվում են լոգիստիկայի կարևորությունը բիզնեսում և տնտեսությունում, վերջինիս ճիշտ կազմակերպումից և կառավարումից՝ կազմակերպությունների շահութաբերության մեծացման, մատակարարման շղթայի յուրաքանչյուր օղակում ծախսերի և ապրանքի ինքնարժեքի նվազեցման, ապրանքաշարժի արդյունավետ կառավարման և ժամանակային ռեսուրսի օպտիմալացման խնդիրները, այդ օղակների սերտ փոխկապվածության պարագայում՝ մեկից մյուսը սահուն անցումն իրականացնելը և մատակարարման շղթայի կանոնավոր աշխատանքի ապահովումը: Հետազոտության նպատակն է՝ ցույց տալ լոգիստիկայի կարևորությունը բիզնեսի վարման մեջ՝ ժամանակակից շուկայական հարաբերություններում, բիզնեսի շահութաբերության ուղղակի կախվածությունը լոգիստիկայի ինքնարժեքից, երկրների տնտեսություններում մատակարարման շղթայի դերը և տեղը:*

***Առանցքային բառեր.** լոգիստիկա, տրանսպորտային լոգիստիկա, մատակարարման շղթայի կառավարում, լոգիստիկ, գործառույթների հանձնում (առխորսինգ), լոգիստիկ օպերատոր:*

**Ներածություն**

Բիզնեսի միջավայրում լոգիստիկան երկմակարդակ հիերարխիայի համակարգ է, որը պարունակում է մակրո- և միկրո մակարդակներ:

Ժամանակակից շուկայական տնտեսությունում՝ առավելապես տնտեսապես զարգացած երկրներում կազմակերպություններն իրենց բիզնեսի կարևոր գործառույթներից մեկը հանձնում են տվյալ բնագավառում մասնագիտացող մեկ այլ ընկերության սպասարկմանը՝ մատակարարման շղթայի ամբողջական կամ մասնակի կառավարումը հանձնելով լոգիստիկ օպերատորներին: Այն կարող է ներառել մատակարար կազմակերպություններից ապրանքի գնման գործընթացից մինչև տվյալ ապրանքի վաճառակետ առաքման միջև ընկած բոլոր լոգիստիկ գործընթացների իրականացումը:

Մակրոմակարդակում (արտաքին միջավայրում) լոգիստիկան ղիտարկվում է որպես տնտեսության ոլորտ, որտեղ ստեղծվում է ապրանքների և ծառայությունների ավելացած արժեքն ամբողջ տնտեսության զարգացման համատեքստում, որն ապահովում է միջֆիրմային կապերն ազգային և միջազգային տնտեսության շրջանակներում: Լոգիստիկայի երկրորդ համատեքստը նրա դերն է ու տեղը, իսկ գլխավորը երկրի ամբողջ տնտեսության վրա ունեցած ազդեցությունը:

Միկրոմիջավայրում ղիտարկվում է լոգիստիկ գործընթացների ազդեցությունը որոշակի, առանձին վերցրած ընկերության (ներքին միջավայր) գործունեության վրա: Այս համատեքստում լոգիստիկայի առաքելությունը ղիտարկվում է այն մրցունակ առավելությունների տեսանկյունից, որոնք կարող են ֆիրմային բերել ճիշտ կառուցված լոգիստիկ համակարգ:

Լոգիստիկայի օգտակարությունն ավելացած արժեքի (value added) ստեղծման գործընթացի համար ավելացված արժեքի միացումն է սկզբնական նյութերի արժեքին՝ կիրառման համար պատրաստի արտադրանքի ընդհանուր օգտակարության ձևավորման մեջ: Շուկայական տնտեսության պայմաններում գոյություն ունեն 4 հիմնական տեսակի տնտեսական օգտակարություններ, որոնք ավելանում են ապրանքների և ծառայությունների արժեքին: Տնտեսագիտական գրականության մեջ օգտագործվում է «օգտակարություն» հասկացությունը՝ “utility” [1]: Այդ ավելացված արժեքները կապված են՝

- արտադրական գործընթացի հետ և լոգիստիկայի ոլորտում ավելացված արժեքի տվյալ տեսակը բեռնման-բեռնաթափման աշխատանքներն են՝ տեսակավորումը, փաթեթավորումը, վերափաթեթավորումը և այլն, այսինքն բոլոր լոգիստիկ գործընթացները, որոնք ծագում են արտադրանքի արտադրության ընթացքում,
- արտադրանքի տեղաշարժման գործընթացի հետ, ուր լոգիստիկան մասնակցում է տվյալ տեսակի ավելացված արժեքի ստեղծման մեջ առաջին հերթին՝ կազմակերպելով և ապահովելով ապրանքների տեղափոխումը և դրանք միջանկյալ պահպանումն առաքման ընթացքում,
- ապրանքի կիրառման հետ, լոգիստիկան մասնակցում է տվյալ տեսակի ավելացված արժեքի ստեղծման ընթացքում ապրանքների պաշարների և ապրանքային հոսքերի արդյունավետ դեկավարման միջոցով և նպաստում է նրան, որ ապրանքները հայտնվեն անհրաժեշտ տեղում պայմանավորված ժամանակով: Ավելացված արժեքը, կապված արտադրանքի կիրառման հետ, հաճախ ձևավորվում է որպես լոգիստիկայի 7R կանոն.
- անհրաժեշտ ապրանք (right product),
- անհրաժեշտ տեղում (right place),
- անհրաժեշտ ժամին (right time),
- անհրաժեշտ քանակով (right quantity),
- անհրաժեշտ որակի (right quality),
- անհրաժեշտ գնով (right price),
- անհրաժեշտ հաճախորդի մոտ (right client):
- ապրանքի սեփականատիրոջ փոփոխման հետ, լոգիստիկան մասնակցում է այս գործընթացին, օժանդակելով ընկերության շուկայական գործունեության հետ, օգնելով շուկաներում ապրանքների շարժին և սպառմանը:

Լոգիստիկայի ազդեցությունը մակրոմակարդակում՝ (երկրի տնտեսության մակարդակով) ավելացված արժեքի ստեղծման գործընթացում շատ մեծ է: ԱՄՆ-ում, որտեղ ՀԱԱ-ն 21-րդ դարի սկզբին հասավ 10 տրիլիոն դոլարի, լոգիստիկ ծառայություններից օգտվողներն ավելի քան 280 միլիոն այդ երկրի քաղաքացիներ են, որոնց ապրանքները և ծառայությունները հասնում և մատուցվում են միջինում մոտավորապես 36.000 դոլարի ամեն տարի [2]:

Լոգիստիկայի ոլորտում ավելացված արժեքի ստեղծումը պահանջում է մեծ ծախսեր: Չնայած նման տեսակի ծախսերը դժվար են հաշվվում, բայց համարվում է, որ ԱՄՆ-ում ամենամյա լոգիստիկ ծախսերը կազմում են ամբողջ ՀՆԱ-ի մոտ 10%-ը: Նշված թիվն էականորեն փոխվում է երկրներում, կազմելով մինչև 20% Սինգապուրում և 16% Իսրայելում, մինչև 10,1% Ճապոնիայում: Այս թիվը մի փոքր շատ է Ավստրալիայում, Ֆրանսիայում, Ֆինլանդիայում՝ 11%: Աշխարհում՝ միջինում այն կազմում է 11,7% (Սաիայում 11%, Արևմտյան Եվրոպայում 12,2%, Հյուսիսային Ամերիկայում 11,7%):

**Խոշոր տնտեսությունների ՀՆԱ-ի, հիմնական տրանսպորտային լոգիստիկայի շուկաների և ծախսերի ծավալը 2012 թ. (մլրդ ԱՄՆ դոլար)**

Երկիր, տարածաշրջան	ՀՆԱ	Լոգիստիկ ծախսեր	Տրանսպորտային լոգիստիկայի ծախսեր	Լոգիստիկայի աուօսոսոսինգի շուկա	Աուօսոսոսինգի կշիռը (%)
ԱՄՆ	15650,0	1332,0	1141,9	928,3	81,3
Եվրոպա	16210,0	1487,6	1197,9	773,9	64,6
Չինաստան	8260,0	1486,8	1210,6	593,2	49,0
ՌԴ	2013,0	382,5	307,7	99,7	32,4
Ընդհանուր	7183,0	8350,6	7322,0	4027,0	55,0

Միկրոմակարդակում լոգիստիկայի նշանակությունը իր ընդունակություններն են՝

- օժանդակել ընկերության մրցունակ առավելությունների աճին և դրանով նպաստել ընկերության արտադրանքի գնի ավելացմանը,
- նպաստել ծախսերի կրճատմանը, առաջին հերթին լոգիստիկ ծախսերի, ինչպես նաև ընկերության ծախսերն ամբողջությամբ,

Իր հայտնի գրքում «Մրցունակ առավելություններ»՝ Մայքլ Ե. Փորթերը որոշել է ընկերության 3 տեսակի մրցունակության առավելությունները: Առաջին՝ գնային առաջնորդություն, այսինքն՝ ընկերությանն անհրաժեշտ է տվյալ ապրանքը կամ ծառայությունը դարձնել ամենաէժանր: Երկրորդ՝ տարբերությունը մյուսներից, որը թույլ է տալիս հաճախորդներին ընտրել հենց այդ ընկերությանը ապրանքներ արտադրողներից կամ ծառայություններ մատուցողներից: Երրորդ՝ որոշակի ուղություններով (շուկայի սեզմենտներ) ջանքերի կենտրոնացումն է, որոնց միջոցով ընկերությունը ցանկանում է հաջողության հասնել [3]: Համապատասխան նշված հայեցակարգի, շատ ընկերություններ լոգիստիկայում տեսնում են հաջողության հասնելու հնարավորություն, ծայրահեղ դեպքում՝ նշված մրցունակ առավելություններից որևէ մեկում:

Ազդեցության խնդիրը լուծելու համար, որը երևում է լոգիստիկ ընկերության մրցունակ առավելությունների, ընկերության համար կարևոր է լոգիստիկայի և հիմնական բիզնես գործընթացների միջև հարաբերությունների հավասարակշռության հիմնումը [4]:

1. Կապ լոգիստիկայի և արտադրական գործընթացի միջև արտադրանքի (հումքի) առաքումը ճիշտ կազմակերպելու համար: Այն անհրաժեշտ է ապրանքի արտադրության, պաշարների ստեղծման և պահպանման համար, դրական իմաստող էապես կարող է ազդել արտադրական ցիկլերի երկարակեցության վրա: Լոգիստիկ համակարգի կազմակերպումից և գործունեությունից կարող է կախված լինել ընկերության ամբողջ գնման ռազմավարությունը, որն իր հերթին ազդում է ծախսերի վրա:
2. Լոգիստիկայի և շուկայաբանական գործառույթի միջև կապ լոգիստիկան մեծ դեր է խաղում ապրանքների շարժի և դրանց վաճառքի հարցերում: Այսինքն՝ լոգիստիկան ապահովում է ապրանքի առկայությունն անհրաժեշտ տեղում, անհրաժեշտ ժամանակում և անհրաժեշտ քանակով: Ինչպես նաև մեծ է առաքման գնի ազդեցությունը՝ շուկայում վերջնական գնի կայացման մեջ: Բացի այդ, լոգիստիկան ուղիղ ազդեցություն ունի ապրանքի վաճառքի ցուցանիշների վրա, չէ որ ապրանքի ճիշտ փաթեթավորումը, որն լոգիստիկ գործընթացների մի մասն է, նպաստում է վաճառքի ավելացմանը:

3. Լոգիստիկայի և հաճախորդների միջև կապն արտահայտվում է նրանում, որ լոգիստիկան ապահովում է ապրանքի առաքումը հաճախորդին պատվերի մեջ նշված քանակով և պատշաճ որակով: Ընդ որում հենց առաքող ընկերությունը շատ հետաքրքրված է ապրանքի՝ առանց կորստի և ճիշտ ժամանակին առաքման մեջ:
4. Կապ լոգիստիկայի և ընկերության գնումների քաղաքականության հետ - այս կապն արտահայտվում է հումքի, կիսաֆաբրիկատների, համալրման պարագաների ճիշտ կազմակերպված առաքման դերով, որը նպաստում է ընկերության հաջող գործունեությանը: Տարբեր ապրանքների գնման վայրի որոշումը, որոնք անհրաժեշտ են արտադրական գործընթացն իրականացնելու համար և դրանց անհրաժեշտ քանակով, անհրաժեշտ ժամանակում նվազագույն միջոցներով մատակարարումն այն խնդիրներ են, որոնք հենց լոգիստիկայի բաժնի գործառույթներից են:
5. Կապը լոգիստիկայի և ընկերության ղեկավար անձնակազմի միջև՝ լոգիստիկ դեպարտամենտի համար որակավորված կադրերի պատրաստման և ընտրության հարցում:
6. Լոգիստիկայի և ընկերության մյուս բաժինների միջև կապը պլանավորման և ֆինանսական քաղաքականության հարցերի (օրինակ՝ ընկերության լոգիստիկայի դեպարտամենտի առաջարկով ընկերությունը կարող է որոշում ընդունել սեփական տրանսպորտային միջոցների և պահեստի ձեռքբերման մասին), ինչպես նաև հաշվապահության և արտադրական բաժինների հարցերում:

Ժամանակակից միտումներից մեկը սպասարկման որակի ձևավորումն է: Ցանկացած գործառույթներիների որակի բարձրացման գործընթացը (այդ թվում նաև լոգիստիկ) նախատեսում է «որակի հսկողություն» (Quality Control), «երաշխավորված որակ» (Quality Assurance), «որակի լրիվ հսկողություն» (Total Quality Control), «սպառողների սպասումներին համապատասխան որակ» (Customer Value): 90-ական թվականների կեսերին արևմտյան երկրներում ձևավորվեցին լոգիստիկ սպասարկման աճող որակի փուլերի բնութագրերը [5]:

Լոգիստիկ սպասարկման որակի բարձրացումը նպաստում է բիզնեսի հաջող վարմանը: Լոգիստիկ օպերացիաների կատարման բարձր ստանդարտները ընկերությունը պետք է ընդունի որպես իր գործունեության հիմնական չափանիշ:

Այսպիսով, գործառույթների պահպանում է ընկերության համակարգային կայունությունը, ինտեգրացիոն օղակ է բիզնեսի մյուս ճյուղերի միջև, հարթում է հակասությունները և օպտիմիզացնում է միջֆունկցիոնալ և միջֆիրմային որոշումները:

**Оганнес Робертович Абраамян**

*Национальный университет архитектуры и строительства Армении, РА, г. Ереван*

*hovhannes.abrahamyan@icloud.com*

## РОЛЬ И МЕСТО ЛОГИСТИКИ В ЭКОНОМИКЕ И ОКРУЖАЮЩЕЙ БИЗНЕС СРЕДЕ

*Рассмотрены важность логистики в бизнесе и во всей экономике, вопросы правильной организации и управления, повышение рентабельности организации, снижение издержек в каждой цепочке поставок, снижение стоимости товаров, эффективное управление товарами в каждом кольце, оптимизация ресурса времени, а в случае тесного сосуществования этих колец - плавный переход и регулярное снабжение цепочки поставок. В современной рыночной экономике, особенно в экономике развитых странах, одной из ключевых составляющих бизнеса является предоставление*

аутсорсинга, частичное или полное управление цепочкой поставок логистическим оператором. Аутсорсинг может включать реализацию всех процессов логистики между поставщиками товаров и процессом закупок до поставки продукта. Цель исследования - показать важность логистики в управлении бизнеса в современных рыночных отношениях, прямую зависимость рентабельности бизнеса от стоимости логистики, роль и место поставок в экономике стран.

**Ключевые слова:** логистика, транспортная логистика, управление цепями поставок, логистик, передача функций (аутсорсинг), логистический оператор.

**Hovhannes Robert Abrahamyan**

National University of Architecture and Construction of Armenia, RA, Yerevan

hovhannes.abrahamyan@icloud.com

## THE ROLE AND PLACE OF LOGISTICS IN THE ECONOMY AND THE BUSINESS

*The importance of logistics in business and the entire economy, the issues of proper organization and management, improving the profitability of the organization, reducing costs in each supply chain, reducing the cost of goods, efficient management of goods in each circle, optimization of the resource of time, in the case of close coexistence of these rings smooth transition and regular supply chain are considered. In contemporary market economy, especially in economically developed countries, one of the key components of their business is the provision of outsourcing, partial or complete supply chain management to logistics operators. It may include the implementation of all logistics processes between the suppliers of goods and the procurement process prior to the delivery of the product. The research purpose is to show the importance of logistics in business management, in contemporary market relations, the direct dependence of the profitability of business on the cost of logistics, the role and place of supply in the economies of countries.*

**Keywords:** logistics, transport logistics, supply chain management, logistic outsourcing, logistic operator.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Саркисов С. В.** Логистика и транспортное обеспечение ВЭД: Всероссийская академия внешней торговли Минэкономразвития России.– М.: ВАВТ, 2015.- 217 с.
2. **Абель Э. Б., Бернанке Б. С.** Макроэкономика: 5-е изд.– СПб.: Питер, 2008, (Серия «Классика МВА»), 768 с.
3. **Сергеев В.И.** Логистика в бизнесе. Риторика и ораторское искусство.- М.: ИНФРА-М, 2001. - 680 с.
4. **Волгин В.В.** Склад: логистика, управление, анализ / В. В. Волгин.– 11-е изд., переб. и доп.– М.: Изд-во «Дашков и К», 2015.– 724 с.
5. **Майкл Портер** Конкурентное преимущество: Как достичь высокого результата и обеспечить его устойчивость / Пер. с англ.- 2-е изд.- М.: Альпина Бизнес Букс, 2006.- 715 с.
6. **Фишер С., Дорнбуш Р., Шмалензи Р.** Экономика: пер. с англ. с 2-го изд.– М.: «Дело ЛТД», 1993.– 864 с.

## REFERENCES

1. **Sarkisov S. V.** Logistika I transportnoe obespechenie VED, Vserossiyskaya academia vneshney trgovli Minekonomravitia Rossii – M., VAVT, [Logistics and transport support of foreign

- economic activity: All-Russian Academy of Foreign Trade of the Ministry of Economic Development of Russia] 217 p
2. **Abel E. B., Bernanke B. S.** Makroekonomika – 5-oe izdanie. – SPb.: Piter 2008. (Seria «Klassika MBA») – [Macroeconomics. 5th edition] 768 p.
  3. **Sergeev V.I.** Logistika v biznese. Ritrika I oratorskoe iskusstvo – M.: INFRA-M, 2001. – [Logistics in business. Rhetoric and Oratory], 680 p
  4. **Volgin V.V.** Sklad: logistika, upravlenie, analiz / V. V. Volgin. – 11-e izd., pereb. i dop.- M.: Izd-vo «Dashkov i K», 2015 – [Warehouse: logistics, management, analysis / V. Volgin. - 11 th ed., Pereb. and additional], 724 p.
  5. **M. Porter** Konkurentnoe preimushество: Kak dostich visokogo rezultata I obespechit ego ustoychivost/ Per. S angl. – 2-e izd. – M.: Alpina Biznes Buks, 2006 – [Competitive Advantage: How to achieve a high result and ensure its stability] 715 p.
  6. **Fisher S., Dornbush R., Shmalenzi R.** Ekonomika: Per. s angl. So 2-go izd [Economics: Trans. with English. Since the 2nd ed.].– M.: «Delo LTD», 1993.– p. 864

**Հ. Ռ. Աբրահամյան, մագիստրանտ (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի իրավունքի և կառավարման ամբիոն, (+374) 55 44 88 22, hovhannes.abrahamyan@icloud.com**

**Абрамян Оганес Робертович, магистр (РА, г. Ереван) - НУАСА, кафедра «Экономика, право и управление», (+374) 55 44 88 22, hovhannes.abrahamyan@icloud.com**

**Abrahamyan Hovhannes Robert, master student (Yerevan, RA) – NUACA, Chair of economics, law and management, (+374) 55 44 88 22, hovhannes.abrahamyan@icloud.com**

Ներկայացվել է՝ 26.03.2018 թ.  
 Ընդունվել է տպագրության՝ 03.04.2018 թ.



ՀՏԴ 658.153

**Աննա Մեյրանի Դավթյան**

*Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան,  
ՀՀ, Լոռու մարզ, գ. Ազնվաձոր, davtyan-an93@mail.ru*

**ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐԻ ԱՌԻԴԻՏԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

*Դիտարկվում է կազմակերպության դեբիտորական պարտքերի աուդիտի իրականացման կարգը: Ներկայացված են դեբիտորական պարտքերի ստուգումների ընթացքում աուդիտի պլանավորման ընթացակարգը, դեբիտորական պարտքերի առաջացման աղբյուրները, ստուգման ժամանակ պարտքերի առաջացման և մարման գործառույթների հաշվային թղթակցությունների ճշտությունը, դեբիտորական պարտքերի առաջացման վաղեմության ստուգումը: Դեբիտորական պարտքերի կուտակումների աճը հանգեցնում է կազմակերպությունների ֆինանսական կայունության թուլացմանը: Այդ հիմնախնդրի լուծման համար կարևոր նշանակություն ունեն դեբիտորական պարտքերի հաշվապահական հաշվառման հստակ կազմակերպումը, վերլուծությունը և օպտիմալացման ուղիների որոնումը:*

***Առանցքային բառեր.** դեբիտորական պարտքեր, ֆինանսական հաշվետվություն, աուդիտ, ստուգում, անհուսալի, կորուստ, պահուստ:*

**Ներածություն**

Դեբիտորական պարտքերի աուդիտությունը տնտեսավարման բնականոն երևույթ է, քանի որ միայն կանխիկ վաճառքով կամ գնումով գործունեության ծավալումը նեղացնում է գնորդների շրջանակը: Սակայն, մյուս կողմից, դեբիտորական պարտքերի կուտակումների աճը հանգեցնում է կազմակերպությունների դրամական միջոցների ներհոսքի կրճատմանը, անհուսալի սպասելիքների ձևավորմանը, շրջանառու կապիտալի պտույտի դանդաղեցմանը, որը վերջին հաշվով նպաստում է ֆինանսական կայունության թուլացմանը: Այդ հիմնախնդրի լուծման համար կարևոր նշանակություն ունի դեբիտորական պարտքերի հաշվապահական հաշվառման հստակ կազմակերպումը, վերլուծությունը և օպտիմալացման ուղիների որոնումը:

**Հիմնական մաս**

Կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ընթացքում շրջանառու միջոցների մի մասը որոշակի ժամանակահատվածում գտնվում է այլ անձանց մոտ, որպես դեբիտորական պարտք: Դեբիտորական պարտքերի աուդիտի նպատակն է՝ հիմնավոր կարծիք կազմել կազմակերպության ֆինանսական հաշվետվությունների մեջ դեբիտորական պարտքերի հավաստիության և լրիվության մասին: Դեբիտորական պարտքերի ստուգումների ընթացքում աուդիտը պետք է պլանավորի հետևյալ ընթացակարգերը.

- կազմակերպության հաշվեկշռում արտացոլված դեբիտորական պարտքերից ելնելով՝ առանձնացնում է հիմնական դեբիտորներին,
- ընտրում է համեմատաբար նշանակալի գումարներով դեբիտորական պարտքեր ունեցողներին և ստուգում է դրանց առաջացման սկզբնական փաստաթղթերը, պայմանագրերը,

- ստուգում է տվյալ տարվա վերջում իրականացված դեբիտորական պարտքերի գույքագրման արժանահավատությունը, փոխադարձ հաշվարկների ստուգման ակտերի առկայությունը,
- ստուգում է հաշվապահական հաշվառման մեջ դեբիտորական պարտքերի ձևակերպումների ճշտությունը և օրինականությունը,
- գնահատում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլված դեբիտորական պարտքեր պարունակող հոդվածների հավաստիությունը,
- ստուգում է դեբիտորական պարտքերի դուրսգրման օրինականությունը:

Դեբիտորական պարտքերի հաշվառման համար նախատեսված են հաշվապահական հաշվառման հաշիվների հաշվային պլանի 22 խմբի հաշիվները:

Հետագոտվող կազմակերպությունում դեբիտորական պարտքեր են առաջացել.

ա) վաճառքների,

բ) տրված կանխավճարների,

գ) բյուջեի գծով:

Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի հաշվառումն իրականացվում է 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների ծով» հաշվով, որը նախատեսված է վաճառքի գներով (ներառյալ անուղղակի հարկերը) արտադրանքի, ապրանքների, աշխատանքի, ծառայությունների, այլ պաշարների, ֆինանսական ներդրումների, հիմնական միջոցների և այլ ակտիվների վաճառքների գծով դեբիտորական պարտքերի առկայության և շարժի վերաբերյալ տեղեկատվության ընդհանրացման համար: Ստուգման ժամանակ աուդիտորը պարզում է պարտքերի առաջացման և մարման գործառնությունների հաշվային թղթակցությունների ճշտությունը: Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի առաջացման հիմնական թղթակցությունները ներկայացված են աղյուսակ 1-ում, իսկ պարտքերի մարման ձևակերպումները՝ աղ. 2-ում:

*Աղյուսակ 1*

**Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի ձևավորման հիմնական թղթակցությունները**

Դտ	221 «Վաճառքների գծով դեբիտորական պարտքեր»	Կտ
1.	Կտ 611 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ»	
2.	Կտ 621 «Ոչ ընթացիկ ակտիվների օտարումից եկամուտներ»	
3.	Կտ 631 «Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների ծառայությունների իրացումից հասույթ ընդհատված գործունեությունից»	
4.	Կտ 614 «Գործառական այլ եկամուտներ»	
5.	Կտ 622 «Ընթացիկ ֆինանսական ակտիվների օտարումից եկամուտներ»	
6.	Կտ 632 «Ընդհատված գործունեությունը կազմող ակտիվների կամ օտարման խմբերի օտարումից և վերաչափումից եկամուտներ»	
7.	Կտ 524 «Պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով»	
8.	Կտ 625 «Արտարժույթի փոխարժեքային տարբերությունից օգուտներ»	

**Ծանոթություն.** Դտ- դեբետ, Կտ- կրեդիտ

**Վաճառքների գծով դեբիտորական պարտքերի մարման հիմնական թղթակցությունները**

Դտ	221 «Վաճառքների գծով դեբիտորական պարտքեր»	Կտ
	<ol style="list-style-type: none"> <li>1. Պարտքի մարում դրամական միջոցների վճարումով՝ Դտ 251, 252, 253</li> <li>2. Ստացված կանխավճարների հետ հաշվանցմամբ՝ Դտ 523</li> <li>3. Ապրանքների վերադարձման դեպքում. Դտ 612</li> <li>4. Մատակարարների հանդեպ ունեցած կրեդիտորական պարտքերի հաշվանցմամբ՝ Դտ 521</li> <li>5. Կազմակերպությունից ձեռքբերված ապրանքների և ծառայությունների դիմաց աշխատակիցների աշխատավարձից պահումների միջոցով՝ Դտ 527</li> <li>6. Արտարժույթով արտահայտված պարտքերի գծով բացասական փոխարժեքային տարբերության գումարով՝ Դտ 725</li> </ol>	


Կազմակերպությունում դեբիտորական պարտքերը ձևավորվում են ոչ միայն ապրանքների իրացման գործընթացում, այլև մատակարարներին տրված ընթացիկ կանխավճարների գծով: Տրված կանխավճարները դասակարգվում են ոչ ընթացիկի և ընթացիկի: Այն կանխավճարները, որոնք տրվել են ընթացիկ ակտիվներ ձեռքբերելու, ծառայություններ, աշխատանքներ ստանալու նպատակով, դասակարգվում են ընթացիկի և հաշվառվում են 224 «Տրված ընթացիկ կանխավճարներ» առաջին կարգի հաշվով:

Ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու նպատակով տրված կանխավճարները դասակարգվում են ոչ ընթացիկի և հաշվառվում 152 «Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվներ ձեռք բերելու համար» առաջին կարգի հաշվով: Ընթացիկ կանխավճարների՝ մատակարարներին տրամադրման և դրանց օգտագործման գործառնությունները արտացոլված են աղ. 3-ում:


**Տրված ընթացիկ կանխավճարների հետ կապված հիմնական գործառնությունների ձևակերպումները**

Դտ	224	Կտ
Մատակարարներին կանխավճարների կատարում՝ Կտ 251, 252, 253	<p>Կանխավճարների դիմաց ապրանքի ստացում՝ Դտ 211, 216</p> <p>Կանխավճարների դիմաց ծառայությունների ստացում՝ Դտ 712, 713</p> <p>Կանխավճարների հետ վերադարձ՝ Դտ 252</p> <p>Կանխավճարների դուրսգրում՝ Դտ 714</p>	

Դեբիտորական պարտքեր են առաջանում նաև բյուջե փոխանցված հարկերի կանխավճարների, հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկերի գծով: Նման պարտքերի հաշվառման համար նախատեսված են 225 «Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով», 226 «Հաշվանցման (փոխհատուցման) ենթակա անուղղակի հարկեր» հաշիվները: Այդ հաշիվների թղթակցությունները ներկայացված են նկ. 1 և 2-ում:



Նկ. 1. Հարկերի գծով կանխավճարների տրամադրումը, հաշվանցումը և մարումը



Նկ. 2. Անուղղակի հարկերի հաշվանցումը

Հաշվապահական հաշվառման մեջ արտացոլված հաշվային թղթակցությունները ստուգելուց բացի շատ կարևոր է նաև դեբիտորական պարտքերի առաջացման վաղեմության ստուգումը: Դեբիտորական պարտքերը կարող են և ամբողջությամբ չփոխհատուցվել, կապված գնորդների լուծարման, սնանկացման կամ ժամանակավոր անվճարունակության հետ: Այդ դեպքում դրանք որակվում են որպես անհուսալի դեբիտորական պարտքեր և դուրս են գրվում նախօրոք ստեղծված պահուստի հաշվին՝ որոշ ժամանակ արձանագրվելով որպես պայմանական ակտիվ արտա-

հաշվեկշռային հաշիվներում: Առողիտորը պետք է պարզի, թե ինչ կարգով են հաշվի առնվել հայցի վաղեմության ժամկետները, որ աղբյուրների հաշվին են դուրս գրվել պարտքերը [1]:

ՀՀ կազմակերպություններում անհուսալի դեբիտորական պարտքերի կորստի պահուստի ձևավորման հաշվառումը կարգավորվում է՝ էլնելով «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի պահանջներից: Ըստ նշված կարգի պահուստին (պահուստաֆոնդին) մասհանումները (դեբիտորական պարտքերի մասնակի դուրսգրումները) կատարվում են դեբիտորի կողմից չմարված դեբիտորական պարտքի գումարի նկատմամբ՝ հետևյալ տոկոսադրույքներով (աղ.4).

**Աղյուսակ 4**

**Դեբիտորական պարտքերի կորուստների պահուստին հարկային նպատակով մասհանումների դրույքաչափերը**

Դեբիտորական պարտքի կետանցված դառնալուց հետո անցած օրերի թիվը	Պահուստին մասհանման տոկոսադրույքը՝ դեբիտորական պարտքի չմարված գումարի նկատմամբ (աճողական), %
Կետանցված դառնալու օրվանից մինչև 90-րդ օրը ներառյալ	-
Կետանցված դառնալու 91-րդ օրվանից մինչև 180-րդ օրը ներառյալ	25
Կետանցված դառնալու 181-րդ օրվանից մինչև 270-րդ օրը ներառյալ	50
Կետանցված դառնալու 271-րդ օրվանից մինչև 365-րդ օրը ներառյալ	75

Դեբիտորական պարտքը ճանաչվում է անհուսալի.

ա) կետանցված դառնալու 366-րդ օրվանից՝ եթե դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը կազմակերպությանը չի գերազանցում 100 հազ. դրամը, կամ դեբիտորական պարտքի գումարը բռնագանձելու վերաբերյալ դատարանի համապատասխան վճռի առկայության դեպքում, եթե սովյալ դեբիտորի պարտքի ընդհանուր գումարը կազմակերպությանը գերազանցում է 100 հազ. դրամը,

բ) պարտապանի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անվճարունակ (սնանկ) ճանաչվելու կամ պարտապան կազմակերպության լուծարվելու (պարտապան ֆիզիկական անձի մահվան) դեպքերում՝ անկախ պարտքի մարման ժամկետից [2]:

Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստի գծով թղթակցությունները ներկայացված են աղ. 5-ում:

**Աղյուսակ 5**

**223 «Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ» հաշվի հիմնական թղթակցությունները**

Դտ	223 «Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ»	Կտ
Անհուսալի դեբիտորական պարտքերի դուրսգրում՝ Կտ 221, 222	Մասհանումներ պահուստին՝ Դտ 714	
Պահուստի հակադարձում՝ Կտ 614		

Եթե ձևավորված պահուստի գումարը բավարար չէ անհուսալի ճանաչված դեբիտորական պարտքի դուրսգրման համար, ապա պարտքի մնացած մասը դուրս է գրվում որպես ժամանակաշրջանի ծախս: Ձևակերպվում է.

Դտ 714 «Գործառական այլ ծախսեր»,

Կտ 221 «Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով»:

Առդիտի ժամանակ մարման ժամկետներն անցած դեբիտորական պարտքեր հայտնաբերելու դեպքում անհրաժեշտ է միջոցառումներ մշակել պարտքերի գանձման համար [2]:

Գիտական նորույթը դեբիտորական պարտքերի առդիտի մեթոդական մոտեցումների հիմնավորումը և մշակումն է, ինչը թույլ է տալիս հաշվի առնել տեղեկատվության ձևավորման, ընդհանրացման և բացահայտման առանձնահատկություններն անհատական և համախմբված հաշվետվություններում: Ուսումնասիրության արդյունքում կարող ենք նշել.

- դեբիտորական պարտքերի առդիտի տեսական հիմքերի մշակում՝ «դեբիտորական պարտք» հասկացության ճշգրիտ մեկնաբանում, որպես հաշվապահական հաշվետվության տարր,
- մշակել կազմակերպատեխնոլոգիական, ծրագրանպատակային և տեղեկատվավերլուծական տարրեր, որպես դեբիտորական պարտքերի առդիտի մեթոդական մոտեցում,
- վերլուծական ընթացակարգերի կազմակերպում՝ դեբիտորական պարտքերի առդիտի տարրեր փուլերում, որոնք փոխկապակցված են դեբիտորական պարտքերը բնութագրող հարկային համակարգի բացարձակ և հարաբերական ցուցանիշների ձևավորման հետ:

### **Եզրակացություն**

Դեբիտորական պարտքերը ժամկետային պարտքեր են և դրանց կուտակումների աճը հանգեցնում է կազմակերպությունների դրամական միջոցների ներհոսքերի կրճատմանը, անհուսալի պարտքերի ձևավորմանը և վերջին հաշվով՝ ֆինանսական կայունության թուլացմանը: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ներդնել դեբիտորական պարտքերի գոյացման ժամկետների և ժամանակին մարման համակարգված վերահսկողության համակարգ և օգտվել առդիտորական ծառայություններից, ընկերության ֆինանսական դրությունը ճիշտ գնահատելու, ակտիվների իրացվելիության և վճարունակության հեռանկարները գնահատելու և ժամանակին արդյունավետ միջոցներ ձեռնարկելու նպատակով:

***Анна Сейрановна Давтян***

*"СИПИЭС ОИЛ КОРПОРЕЙШН" ООО, Лорийская область, с.Азнавадзор, Армения,  
davtyan-an93@mail.ru*

### ***ПРОЦЕДУРА АУДИТА ДЕБИТОРСКОЙ ЗАДОЛЖЕННОСТИ***

*Рассматривается порядок аудита дебиторской задолженности предприятия. Представлены процедуры планирования аудита во время проверки дебиторской задолженности, источники дебиторской задолженности, точность расчетных счетов во время проверки возникновения и погашения задолженностной деятельности, проверка происхождения старой дебиторской задолженности. Рост накоплений дебиторских задолженностей приводит к более слабой финансовой стабильности организаций. Для решения этой проблемы важны: четкая организация учета дебиторской задолженности, анализ и поиск путей оптимизации.*

**Ключевые слова:** дебиторская задолженность, финансовая отчетность, аудит, проверка, ненадежность, убыток, резерв

**Anna Seyran Davtyan**

**National University of Architecture and Construction of Armenia, Lori region, Aznavdзор village, RA,  
davtyan-an93@mail.ru**

**PROCEDURE OF AUDIT OF RECEIVABLES**

*The order of audit of a debt receivable of the enterprise is considered. The procedures for planning the audit during the audit of accounts receivable, sources of accounts receivable, the accuracy of settlement accounts during the audit of the occurrence and repayment of arrears, verification of the origin of the old receivables are presented. The growth of accumulation of accounts receivable leads to a weaker financial stability of organizations. To solve this problem, it is important to clearly organize accounts receivable, analyze and find ways to optimize.*

**Keywords:** accounts receivable, financial statements, audit, verification, unreliability, loss, reserve

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. **Օգանեզովա Ն., Մարջանյան Ա.** Առևտրային դեբիտորական պարտքերի հաշվառման և ներքին աուդիտի հիմնահարցեր.- Երևան, 2004.- 218 էջ:
2. <http://www.arlis.am>
3. **Лиференко Г.Н.** Финансовый анализ предприятия: Уч. пос. М: Изд-во “Экзамен”, 2005.- 97с.

**REFERENCES**

1. **Oganezova N., Marjanyan A.** Arevtrain debitorakan partqeri hashvarman ev nerqin auditi himnaharcer [Trade receivables accounting and internal audit issues] .- (2004).- 218 ej (in Armenian)
2. <http://www.arlis.am>
3. **Liferenko G.N.** Finansovii analiz predpriatia [Financial analysis of enterprises].- Uch. Pos. M. Izd-vo “Ekzamen” (2005).- 97s. (in Russian)

*Աննա Սեյրանի Դավթյան, Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, «Էկոնոմիկայի, իրավունքի և կառավարման» ամբիոն, մագիստրանտ, Հեռ. 098 51 88 21, 091 19 93 18, davtyan-an93@mail.ru:*

*Анна Сейрановна Давтян, Магистрант Армянского национального университета архитектуры и строительства, кафедра "Экономики, права и управления", тел. 098 51 88 21, 091 19 93 18, davtyan-an93@mail.ru.*

*Anna Seyran Davtyan, Master Student, Armenian National University of Architecture and Construction, Chair of Economics, Law and Management, phone: 098 51 88 21, 091 19 93 18, davtyan-an93@mail.ru.*

*Ներկայացվել է՝ 16.04.2018 թ.  
Ընդունվել է տպագրության՝ 02.04.2018 թ.*

ՀՏԴ 351/354

**Նարինե Լեոնիկի Կիրակոսյան**

*Եվրոպական համալսարան, ՀՀ, ք. Երևան, kirakosyannarine@yahoo.com*

**ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴՈՒ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

*XXI դարում առանձնակի կարևորություն է ստանում այնպիսի անփոխարինելի ռեսուրսի կառավարումը, ինչպիսին է ժամանակը: Մասնավորապես, արդիական է համարվում ժամանակի կառավարման երևույթի գիտական վերլուծությունը: Ժամանակի ճիշտ կառավարումից է կախված աշխատանքի արդյունավետությունը, հոգնածության նվազեցումը, հանգստի ճիշտ և արդյունավետ կազմակերպումը: Հողվածում հիմնավորվել է ժամանակի կառավարման անհրաժեշտությունը, բացահայտվել է ժամանակի վատնման պատճառները, առաջարկվել է դրանց վերացման մեխանիզմներ:*

***Առանցքային բառեր.** ժամանակի կառավարում, ժամանակի վատնում, ժամանակի կառավարման մեթոդներ, ժամանակի պլանավորում, սովորություններ*

**Ներածություն**

Ժամանակի կառավարումը տեսական և կիրառական գիտության միջառարկայական ոլորտ է, որը նվիրված է մարդկային կենսագործունեության տարբեր ոլորտներում ժամանակի արդյունավետ օգտագործման հիմնախնդրի ուսումնասիրմանը: Ի սկզբանե ժամանակի կառավարման օրինաչափությունների ուսումնասիրմամբ զբաղվել է ընդհանուր մենեջմենթը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ժամանակի կառավարման հիմնախնդիրը շատ ավելի լայն բնույթ ունի և դժվար է տեղավորվում միայն տնտեսագիտության ոլորտի սահմաններում, այն ունի միջառարկայական կապեր մի շարք այլ գիտությունների հետ, ինչպիսիք են՝ փիլիսոփայությունը, հոգեբանությունը, սոցիոլոգիան, կենսաբանությունը, ֆիզիկան և այլն:

Խոսելով ժամանակի կառավարման մասին՝ անհրաժեշտ է հասկանալ, որ անհնար է կառավարել այն երևույթը, որը չէս ճանաչում: Այդ պարագայում ժամանակի կառավարման հիմնախնդիրը շատ սերտորեն կապվում է այնպիսի գործընթացի հետ, ինչպիսին ժամանակի ընկալումն է:

Մարդկության ողջ պատմության ընթացքում ժամանակը չի արժևորվել այնպես, ինչպես այժմ և, հետևապես, մեծապես փոփոխության են ենթարկվել ժամանակի ընկալման օրինաչափությունները մարդկանց մոտ, ինչը պայմանավորված է այնպիսի գործոններով, ինչպիսիք են գլոբալ տեղեկատվական տարածության ստեղծումը, տեղեկատվական տեխնոլոգիաների ներգործությունը մարդու գործունեության բոլոր ոլորտների վրա:

Ժամանակի խնդիրը մարդու կյանքում հատուկ կարգավիճակ ունի և միշտ հանդիսացել է փիլիսոփայական ռեֆլեքսիայի կենտրոնական թեմաներից մեկը: Այն ամենը, ինչ շարժվում, գործում, մտածում է, այդ ամենը կապված է ժամանակի հետ: Ժամանակի վերաբերյալ հետազոտությունների քանակն աճում է երկրաչափական պրոգրեսիայով: Հետազոտողները կապեր են բացահայտում ժամանակի ընկալման առանձնահատկությունների և ցանկացած այլ որակների միջև, սակայն ժամանակի ընկալման հետ կապված հենքային խնդիրները շատ հաճախ մնում են



չբացահայտված: Մինչ այսօր, օրինակ, բացակայում է ժամանակի մեկ միասնական հայեցակարգ, ինչպես նաև «ժամանակ» հասկացության այնպիսի մի սահմանում, որն ամբողջությամբ կարտացոլեր այդ երևույթի բոլոր առանձնահատկությունները:

Ժամանակի ռացիոնալ օգտագործումն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հատկապես կառավարչի գործունեության մեջ: Դա պայմանավորված է, առաջին հերթին, անհրաժեշտությամբ՝ հնարավորություն ունենալ կենտրոնացնել ուշադրությունը ռազմավարական որոշումների ընդունման վրա, իսկ երկրորդ, արտաքին միջավայրի փոփոխություններին արագ արձագանքելու ցանկությամբ:

Ժամանակի կառավարումը նոր մոտեցում է, որը կոչված է ուսումնասիրելու ժամանակի արդյունավետ օգտագործման ուղիները՝ ժամանակի ծախսման պլանավորումը, կարգավորումը, կազմակերպումն ու վերահսկումը [1]: Ժամանակի կառավարումը մի հմտություն է, որն անհրաժեշտ է աշխատանքների ճիշտ պլանավորման, դրանց առաջնայնության որոշման համար: Ժամանակի կառավարման հմտություն ձեռք բերելուն խանգարող հիմնական պատճառներից է մարդկային էությունը: Իրականում ժամանակի կառավարման բոլոր «կանոնները» հակասում են մարդկային էության «օրենքներին»: Մի կողմից մարդու բնավորությունը կարող է ազդել ժամանակի կառավարման վրա, մյուս կողմից՝ մարդու սովորույթները:

Գլխավոր պատճառներից մեկը, որը դժվարեցնում է մարդկանց ընդունել ժամանակի կառավարման հմտությունները, այն է, որ դրանք ուղղակի առնչվում են իրենց անձնական սովորություններին: Շատ հաճախ աշխատակիցներից ումանք, մասնակցելով այս կամ այն դասընթացներին կամ սեմինարներին, վերադառնում էին աշխատանքի ոգևորությամբ և որոշումներով լի, սակայն մոտ երկու շաբաթ հետո շարունակում են աշխատել, ինչպես նախկինում: Ժամանակի կառավարման մեջ առաջընթաց գրանցելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել սովորությունները, ցանկանալ և ձգտել փոխել դրանք, քանի որ մարդկանց մեջ արմատացած սովորությունները նրանց դրդում են կատարել որոշակի գործողություններ՝ առանց խորը դատելու:

Ժամանակի կառավարման գլխավոր խնդիրներից մեկն է բացահայտել, թե ինչպես ինքնակառավարվել: Մթիվ Պավլինսան, որը զբաղվում է անձնական արդյունավետության, ժամանակի կառավարման հարցերով, գտնում է, որ ժամանակի կառավարման հիմնաքարերն հետևյալներն են [4].

✓ *Օրվա կառավարման սկզբունքը:* Կարևոր է արթնանալուց հետո առաջին ժամվա անցկացման եղանակը: Դա թելադրում է մարդու ամբողջ օրվա ռիթմը: Եթե այդ ժամվա ընթացքում նա ցուցաբերել է ալարկոտություն և ցրվածություն, դա համապատասխանաբար ազդում է ամբողջ օրվա վրա: Առավել կարևոր առաջադրանքների իրագործումը հենց օրվա սկզբում մարդուն լիցքավորում է էներգիայով ամբողջ օրվա համար: Եթե մարդն իր առջև նպատակ է դրել չստուգել էլեկտրոնային փոստը և չթափառել անհիմաստ կայքերում մինչև, օրինակ, երեկոյան ժամը հինգը՝ նա կազատվի այդ վատ սովորությունից: Եթե ցանկանում է այսօրվա օրը դարձնել արդյունավետ՝ պետք է սկսել առավոտվանից: Եթե ցանկանում է, որ օրն անցնի հանգիստ, ապա նա կարող է օրը սկսել մեղիտացիայից կամ գրքի ընթերցանությունից: Եթե մարդը ցանկանում է որ օրն անցնի պասիվ ալարկոտության պայմաններում՝ կարելի է քնել սովորականից ավելի երկար, բաց թողնել առավոտյան վարժությունները և դիտել հեռուստացույց: Եթե ցանկանում է, որ օրը ծախսվի պարզագույն բաների վրա՝ կարելի է այն սկսել էլեկտրոնային փոստի ստուգումով, նորությունների ընթերցմամբ և այլն:

✓ *Վատնել անձնական ժամանակը:* Ժամանակն ամենաթանկ ռեսուրսն է: Հետազոտությունները ցույց են տալիս, որ միջին վիճակագրական գրասենյակային աշխատողն օրվա ընթացքում աշխատում է ընդամենը մեկ ու կես ժամ: Մնացած ժամանակը ծախսվում է կայքեր այցելելու, փոստի ստուգման, նորություններ ընթերցելու, շփման, ճաշի և այլնի վրա: Վերլուծելով իր արդյունքները, Սթիվ Պավլինը տեսավ, որ գրասենյակում իրական աշխատանք կատարելու համար շաբաթական ծախսում է ընդհամենը 15 ժամ, թեև այստեղ անցկացնում է 60 ժամ: Նրա իրական եկամուտը ձևավորվում է այդ 15 ժամում կատարած աշխատանքի արդյունքում: Սթիվ Պավլինը նկատել է, որ ամենից շատ ժամանակ ծախսվում է այն աշխատանքի վրա, որը մարդը չի ցանկանում անել, քանի որ այն ուղեկցվում է գործից ուշադրության հաճախակի շեղումներով: Այդ ժամանակ Սթիվը փորձեց սկսել վերջից: Նա դիտավորությամբ կրճատեց աշխատանքային ժամանակը՝ այն հասցնելով օրական 5 ժամի: Ուղեղն ընկալեց աշխատանքի համար հատկացված ժամանակը որպես պակասորդային և սկսեց աշխատել 5 ժամ անընդմեջ 90% արդյունավետությամբ: Շաբաթվա վերջում Սթիվը նկատեց, որ չնայած շաբաթվա ընթացքում աշխատանքային ժամանակի կրկնակի կրճատմանը՝ այն 60-ից հասցնելով 30 ժամի, իրական աշխատանքի ժամանակն աճ է գրանցել՝ 15-ից հասնելով 25-ի: Երբ ուղեղն աշխատանքի համար հատկացված ժամանակն ընկալում է որպես պակասորդային (խիստ ժամանակային սահմանափակումների դեպքում)՝ արդյունավետությունն աճում է մի քանի անգամ: Հասկանալու համար՝ ուր է կորում ժամանակը, անհրաժեշտ է ունենալ վատնված ժամանակի օրագիր և այն լրացնել աշխատանքային օրվա ընթացքում: Այնտեղ անհրաժեշտ է գրել այն բոլոր գործողությունները և այն ժամանակը, որը ծախսվել է այդ գործողություններն իրականացնելու համար: Օրվա վերջում պետք է գրանցումները դասակարգել ըստ կատեգորիաների:

Ժամանակի կառավարումը պետք է սկսել պլանավորումից: Արդյունավետ կառավարելու համար պետք է հստակ պատկերացնել և պլանավորել անելիքները և սահմանել հստակ ժամկետներ դրանց իրականացման համար:

Մարդիկ սովորություն ունեն հետաձգել իրենց գործերը վաղվան: Այդպիսի մարդկանց մոտ անընդհատ անավարտ գործեր են մնում և իրավիճակը կառավարել չկարողանալու զգացում է առաջանում, քանի որ մարդիկ չեն կարողանում առանձնացնել կարևոր գործերը երկրորդայիններից, չեն կարողանում կառավարել իրենց ժամանակը: Պետք է ավարտել մի գործը և նոր անցնել մյուսին: Գործերը հետաձգելու պատճառներից մեկն էլ այն է, որ մի գործը կիսատ են թողնում, քանի որ այլ գործի մասին են հիշում: Բայց պետք է հիշել, որ օրվա վերջում ավարտված մեկ գործն ավելի լավ է, քան երկու անավարտը: Իսկ դա առաջացնում է ամենավատ զգացումներից մեկը, երբ մարդը գիտակցում է, որը չկարողացավ անել այն, ինչ պետք է անել և կարող էր անել: Այնպես որ, պետք է մոռանալ վաղվա մասին:

Ժամանակի վատնումը բացասական ազդեցություն է թողնում ժամանակի կառավարման ճիշտ կազմակերպման վրա: Ժամանակի վատնումը նվազեցնելու համար կարելի է առաջնորդվել հետևյալ քայլերով [3].

- նշանակել վերջնաժամկետներ նպատակների իրականացման համար,
- ամենաանհետաքրքիր գործերը իրականացնել սկզբում,;
- առաջադրանք տալիս կամ ստանալիս փորձել համոզվել, որ բոլորը հասկացել են, թե ինչ է պահանջվում: Եթե գործը ճիշտ չարվի, նորից պետք է անդրադարձ կատարել դրան,

- պլանավորել հանդիպումները՝ նշանակելով ընդունելության ժամեր կամ անջատել հեռախոսը, եթե անհրաժեշտ է հանգիստ մթնոլորտում աշխատել:

Ժամանակ վատնելու առավել տարածված ձևերից են՝ գրառումների, հեռախոսահամարների, հասցեների որոնումը, հետաձգված հանդիպումները, ժողովները, չգրանցված այցելուները, թափթփված աշխատանքային սեղանը, թերի կամ ուշացված տեղեկատվությունը, ոչ հստակ հետադարձ կապը կամ դրա բացակայությունը, մերժելու անկարողությունը, աշխատանքի ժամկետի և ծավալի սխալ գնահատումը, վերջնաժամկետների որոշման բացակայությունը, միշտ օգտակար լինելու ցանկությունը, բնական դանդաղաշարժությունը: Սրանց առանձնահատկությունն այն է, որ դրանք տարբեր են տարբեր մարդկանց համար:

Ժամանակի վատնման դեմ պայքարի համար մշակվել են մի շարք մեթոդներ [4].

- ✓ աշխատատեղի պատշաճ կազմակերպում,
- ✓ լիազորությունների բաշխում,
- ✓ անհատականության գծերի հաշվառում,
- ✓ մերժելու ռազմավարության օգտագործում,
- ✓ առցանց հանդիպումների իրականացում,
- ✓ պատճառական մեթոդների կիրառում և այլն:

*Աշխատատեղի պատշաճ կազմակերպում:* Աշխատավայրը կարևոր գործոն է, որը որոշում է գործունեության արդյունավետությունը և որակը: Փաստաթղթերի, գրառումների, հասցեների, հեռախոսահամարների, էլեկտրոնային փոստի դասավորությունը բավականին ժամանակ է պահանջում: Արևմուտքում հաշվարկել են, որ ղեկավարը միջինում իր աշխատավայրում փաստաթղթերի և տեղեկատվական նյութերի որոնման համար ծախսում է տարվա ընթացքում 6 շաբաթ, ինչը կազմում է իր աշխատանքային բյուջեի մոտ 15 %-ը:

Հետևելով պարզ կանոնների, ինչպիսիք են՝ սեղանի վրա մեկից ոչ ավել փաստաթղթերի առկայություն, որի վրա տվյալ պահին աշխատանք է արվում, հստակ և տրամաբանական ֆայլինգ-համակարգի առկայություն և այլն, կարելի է նվազեցնել ժամանակի կորուստները՝ կապված փաստաթղթերի որոնման հետ: Անհրաժեշտ է աշխատանքային օրվա վերջում.

- սեղանի վերին դարակում դնել ընթացիկ օրվա անավարտ գործերը և վաղվա աշխատանքային պլանը,
- երկրորդ դարակում դնել կարևոր և հրատապ գործերը և այդ գործերի հետ աշխատելու անհրաժեշտ փաստաթղթերը: Այդ նույն դարակում դրվում են մոտակա շաբաթվա գործերը և կարևոր, բայց ոչ հրատապ գործերի համար անհրաժեշտ փաստաթղթերը,
- երրորդ դարակում պետք է դրված լինեն մոտակա ամսվա գործերը և փաստաթղթերը:

*Լիազորությունների բաշխում:* Կառավարման մեջ լիազորությունների բաշխումն ենթադրում է դրանց փոխանցումը այն աշխատողին, ով իր վրա է վերցնում դրանց իրականացման պատասխանատվությունը և հստակ ժամկետներ սահմանել աշխատանքների կատարման համար: Այս մեթոդը թույլ է տալիս ազատել աշխատանքային ժամանակը մյուս ընթացիկ գործերից և անդրադառնալ առավել կարևոր և գլոբալ խնդիրների լուծմանը: Լիազորությունների բաշխման հարցը լուծելու նպատակով կառավարման բնագավառի օտարերկրյա փարձագետները խորհուրդ են տալիս օգտագործել Էյզենհաուերի մատրիցը:

Հարկ է նշել, որ այդ մատրիցը յուրացնելու և դրա օգնությամբ ժամանակը գործերի համար գրագետ բաշխելու դեպքում հնարավոր է հասցնել ամեն ինչ անել ճիշտ ժամանակին և առանց շտապելու, ինչպես նաև ձեռք բերել մեծ քանակությամբ ազատ ժամանակ:

*Անհատականության գծերի հաշվառում:* Շատ դեպքերում խնդիրների բաշխման ընթացքում դեկավարին անհրաժեշտ է հաշվի առնել անձի առանձնահատկությունները: Այսպիսով, արդյունավետ գործունեության վրա ազդում է վերահսկողության լոկուսը, որն իրենից ներկայացնում է անձնական հատկանիշ՝ առաջին անգամ նկարագրված և ուսումնասիրված Ջ. Լոտտերի կողմից: Մարդիկ կարող են բնութագրվել վերահսկողության արտաքին և ներքին լոկուսով: Նրանք, ովքեր բնութագրվում են վերահսկողության արտաքին լոկուսով, ենթադրում են, որ կյանքի բոլոր իրադարձությունները մեծամասամբ պատահականության կամ հաջողության արդյունք են: Նրանք մշտապես իրենց զգում են ճակատագրի գերիներ, որի խաղի կանոնները նրանց ենթակա չեն: Մարդիկ, որոնք բնութագրվում են վերահսկողության ներքին լոկուսով, կարծում են, որ նրանք կարող են ազդել իրենց կյանքի ընթացքի վրա և այն, ինչ նրանց հետ կատարվել է կամ կատարվելու է, իրենց սեփական որոշումների արդյունք են հանդիսանում: Նրանք համարում են իրենց սեփական ճակատագրի տեր: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ վերահսկողության ներքին լոկուսով անձինք ստանում են աշխատանքից ավելի մեծ բավարարվածություն, աշխատելով կառավարման պարտիսիպանտիվ պայմաններում, այսինքն, ինքնակառավարման տարրերի, մինչդեռ վերահսկողության արտաքին լոկուսով աշխատողներն իրենց հարմարավետ են զգում կառավարման դիրեկտիվ պայմաններում:

*Մերժելու կարողության օգտագործում:* Խնդիրների առաջնահերթությունը որոշելիս ի հայտ է գալիս որոշ գործերին «այո» ասելու անհրաժեշտությունը, իսկ մյուս գործերին, որոնք չեն համապատասխանում նպատակներին, ասել՝ «ոչ» և հետաձգել դրանց իրականացումը: Վերլուծելով պարտադրվող գործերին հակադրելու տարբեր ուղիները, Գ. Ա. Արխանգելսկին առանձնացնում է մի քանի տիպիկ սցենարներ, որոնք առավել հաճախ են օգտագործվում մերժելու իրավիճակում [5].

- «Ռազմավարական խորամանկություն»: Ռազմավարություն, որի դեպքում խնդրանքը մերժվում է՝ պատճառաբանելով կեղծ հանգամանքներ: Այս ռազմավարությունը հաճախ տալիս է դրական արդյունք, սակայն մեթոդը վատ է նրանով, որ սուտը ուշ թե շուտ կարող է բացահայտվել:
- «Տրամաբանական պատճառաբանություն»: Ռազմավարությունն այն է, որ տրվում են մեկ կամ մի քանի համոզիչ պատճառներ, մերժման փաստարկներ, ինչը բավականին խելամիտ է, այդ իսկ պատճառով հաճախ կիրառվում է: Բարդությունը ենթակայի կողմից հակափաստարկների կիրառման հնարավորության մեջ է:
- «Հետաձգման» ռազմավարություն: Մա անուղղակի հերքում է՝ խոստումների իրականացման հետաձգման պայմանով: Այս ռազմավարությունը հաճախ ընտրում են իր պարզության պատճառով. զրույցի վրա ծախսվում է նվազագույն ժամանակ, ուղիղ մերժումը բացակայում է:
- «Երրորդ ճանապարհ»: Ռազմավարություն, որի դեպքում առաջարկվում են խնդրի լուծման տարբերակներ: Այս մոտեցման գլխավոր թերությունն այն է, որ մարդն արդյունքի ամբողջ պատասխանատվությունը թողնում է երրորդ անձի վրա: Ընտրելով որպես մերժման ռազմավարություն այս տարբերակը, պետք է պատրաստ լինել իրադարձու-

թյունների զարգացման բացասական ընթացքին, ինչպես նաև հիշել, որ լուծման տարբերակի կամ անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար ենթակայի համար կպահանջվի ժամանակ:

- Ցանկալի կերպարի անշուք ձևով ստեղծում: Տվյալ ռազմավարությունը «ռազմական խորամանկության» և «տրամաբանական պատճառաբանության» համադրում է և այն է, որ բոլոր միջոցներով փորձում են ցույց տալ, որքան անշուք է այն, ինչը խնդրում են: Հաճախ լինում է, որ պատճառաբանություններն այնքան համոզիչ են, որ անձն ինքնակամ հրաժարվում է իր խնդրանքից:
- «Հստակ ոչ»: Մերժելու ունակությունն առավել կարևոր է ժամանակակից ղեկավարների համար, այդ իսկ պատճառով կադրերի հավաքագրման ընկերությունները և գործատուները մասնագետների ընտրության ժամանակ, մասնավորապես բարձր օղակների ղեկավարների դեպքում, որպես կանոն, փորձարկում են նրանց, այդ թվում նաև նրանց մերժելու ունակությունը: «Ոչ»-ի արվեստին տիրապետելը չի նշանակում մերժել միշտ և բոլորին: Անհրաժեշտ է իրավունք վերապահել ասելու «ոչ» այն դեպքերում, երբ դա տեղին է:

Ուսումնասիրված սցենարներից և մեթոդներից յուրաքանչյուրն ունի իր թույլ և ուժեղ կողմերը: Խնդիրների առաջնահերթությունը և պարտադրված հրատապ գործերի տարբերակումը որոշելիս անհրաժեշտ է ընտրել ժամանակի կառավարման սեփական ռազմավարություն, որը համապատասխանում է առաջացած հանգամանքներին, հաշվի է առնում իրավիճակի իրականությունը, ինչպես նաև նվազեցնում է ժամանակի կորուստները և հնարավոր ռիսկերը:

Այսպիսով, ժամանակի կառավարումն ոչ միայն անձի աշխատանքի արդյունավետությունը բարձրացնող միջոց է, այլև նրա սթրեսակայունությունը բարձրացնող և տազնապայնության աստիճանի իջեցմանը նպաստող գործոն: Ժամանակի կառավարման ռազմավարությունը պետք է մշակվի՝ հաշվի առնելով յուրաքանչյուր անձի անհատական առանձնահատկությունները:

**Нарине Лерниковна Киракосян**

*Европейский университет, РА, г. Ереван, kirakosyannarine@yahoo.com*

**РОЛЬ И ВАЖНОСТЬ УПРАВЛЕНИЯ ВРЕМЕНИ В РАЗВИТИИ ЧЕЛОВЕКА И ОБЩЕСТВА**

*В XXI в. особое значение приобретает такое управление незаменимыми ресурсами, как время. В частности, актуальным считается научный анализ явления управления временем. Продуктивность работы зависит от правильного управления временем, снижения усталости, правильной и эффективной организации досуга. Обоснована необходимость управления временем, выявлены причины потери времени, предложены механизмы устранения этих причин.*

**Ключевые слова:** *управление временем, потеря времени, методы управления временем, планирование времени, привычки.*

**Narine Lernik Kirakosyan**

*European University, Yerevan, Republic of Armenia, kirakosyannarine@yahoo.com*

**ROLE AND IMPORTANCE OF THE TIME MANAGEMENT IN HUMAN AND SOCIETY DEVELOPMENT**

*In the 21st century the management of irreplaceable resources such as time is of particular importance. Particularly, the scientific analysis of the time management phenomenon is considered to be*

topical. Effective work efficiency, reduced fatigue, proper and effective resting depends on time management. The article substantiated the need for time management, the reasons for waste of time were revealed, mechanisms for their elimination were proposed.

**Keywords:** time management, waste of time, time management techniques, time planning, habits

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Մասնագիտական հմտություններ, Մեկնաբանություններ և թեստեր / Ն.Լ. Կիրակոսյանի ընդհ. խմբ.- Երևան, Դար, 2008, 80 էջ:
2. <https://www.stevepavlina.com/blog/2006/02/time-management//25.02.2018//17:20>
3. **Коваленко В.** Как на практике использовать time-management // Деловой мир, 2012/ <http://improvement.ru/news/030303.shtm//01.03.2018//15:45>
4. **Лукашенко М.** Тайм-менеджмент в корпоративной культуре и конкурентоспособность компании // Современная конкуренция.– 2012.– №2(32).– С. 8.
5. Тайм-менеджмент. Полный курс: уч. пос. /Г.А. Архангельский, М.А. Лукашенко, Т.В. Телегина, С.В. Бехтерев.- М.: Альпина Паблишер, 2012. – С. 188-189.

**REFERENCES**

1. Masnagitakan hmtutyunner, Meknabanutyunner ev tester [Professional Skills, Comments and Tests], N.L. Kirakosyani yndh. khmb.- [with general editions], Erevan, Dar, (2008), 80p.
2. <https://www.stevepavlina.com/blog/2006/02/time-management//25.02.2018//17:20>
3. **Kovalenko V.** Как на praktike ispolzovat time-menegment [How to use time-management in practice], (2012), <http://improvement.ru/news/030303.shtm//01.03.2018//15:45>
4. **Lukashenko M.** Taym-menegment v korporativnoy kulture i konkurentosposobnost kompanii [Time management in corporate culture and competitiveness of the company], Sovremennaya konkurenciya [Contemporary competition], (2012), №2(32), 8 p.
5. Taym-menegment. polniy kurs: uch. pos. [Time management. Full course: study guide] **G.A. Archangel, M.A. Lukashenka, T.B. Telegina, S.V. Bekhterev**, Moskow (2012), 188-189 p.

**Նարինե Լեռնիկի Կիրակոսյան**, Եվրոպական համալսարան, տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ  
093-26-07-05, 091-13-33-15, kirakosyannarine@yahoo.com

*Нарине Лерниковна Киракосян, к.э.н., доцент (РА, г.Ереван) - Европейский университет (+374)93260705, (+374)91133315, kirakosyannarine@yahoo.com*

*Kirakosyan Narine Lernik, PhD in Economics, Associate Professor, (Yerevan, RA) - European University, 093-26-07-05, 091-13-33-15, kirakosyannarine@yahoo.com*

Ներկայացվել է՝ 26.03.2018 թ.  
Ընդունվել է տպագրության՝ 06.04.2018 թ.

ՀՏԴ 339.944.2

**Լիլյա Ալբերտի Ավետիսյան**

Եվրոպական համալսարան, ՀՀ, ք. Երևան, likaavetisyan@yahoo.com

**ՖՐԱՆԶԱՅԳԻՆԳԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

*Ֆրանչայզինգի զարգացման արդի միտումների ուսումնասիրությունն աշխարհի առաջատար երկրներում արդիական է Հայաստանում ֆրանչայզինգային հարաբերությունների զարգացման գործում: Հողվածի նպատակն է ֆրանչայզինգի համաշխարհային շուկայի առանձնահատկությունների ու միտումների վերլուծության միջոցով բացահայտել ՀՀ տնտեսությունում ֆրանչայզինգի զարգացման հիմնախնդիրները և հեռանկարները: Հողվածում ներկայացվել են ֆրանչայզինգի համաշխարհային շուկայի հիմնական խաղացողների՝ ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Գերմանիայի, Չինաստանի, Հնդկաստանի փորձը, միջազգային ֆրանչայզինգի զարգացումը պայմանավորող գործոնները, վերլուծվել է ՀՀ ֆրանչայզինգի շուկայի ներկայիս վիճակը, զարգացման խոչընդոտները և դրանց հաղթահարման հնարավոր ուղիները:*

*Առանցքային բառեր. ֆրանչայզինգ, իրավատերեր, օգտագործող, համալիր թույլտվության պայմանագիր, ապրանքային նշան:*

**Ներածություն**

Ներկայումս համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվությունը (ֆրանչայզինգ) ամուր դիրքեր է զբաղեցնում գրեթե բոլոր երկրներում, ֆրանչայզերների և ֆրանչայզինգային ցանցերի քանակն աճում է բարձր տեմպերով: Ըստ Ֆրանչայզինգի միջազգային ասոցիացիայի տվյալների՝ 20-րդ դարի առաջին տասնամյակի վերջում աշխարհում արդեն իսկ գործում էր 16,5 հազար իրավատերեր (ֆրանչայզերներ), ավելին քան 1,2 միլիոն օգտագործողներ (ֆրանչայզինգեր), ֆրանչայզինգային ցանցերի վաճառքի ընդհանուր ծավալը կազմում էր 1,4 տրիլիոն դոլար, իսկ զբաղվածությունը տվյալ ոլորտում տատանվում էր 12 միլիոնի միջակայքում:

Վերջին տարիներին ֆրանչայզինգի գլոբալ շուկայի ընդհանուր միտում է աճի դրական դինամիկական շնորհիվ Հարավային Ամերիկայի, Արևելյան Եվրոպայի և Ասիայի զարգացող երկրներում ավելացող միջին դասի: Ֆրանչայզերները, որոնք առաջարկում են զարգացածային պահանջակի Եվրոպական, ամերիկյան և ճապոնական ապրանքներ, շահագրգռված են ընդլայնել իրենց ներկայությունը նոր շուկաներում և ձգտում են բացել ֆրանչայզինգային կետեր աշխարհի տարբեր անկյուններում:

2015թ. սկզբի դրությամբ ֆրանչայզինգը հաջողությամբ զարգանում էր աշխարհի ավելի քան 80 երկրներում. 2,5 միլիոնից ավել ֆրանչայզինգային ձեռնարկություններ պատկանում էին ավելի քան 30 հազար ֆրանչայզերներին: Եվրոպական ֆրանչայզերների բաժինը հասնում էր 36%, ասիականներինը՝ 32%, հյուսիսամերիկյաններինը՝ 12%, լատինամերիկյաններինը՝ 10%, իսկ Աֆրիկայի ու Ավստրալիայի և Օվկիանիայի ֆրանչայզերների բաժինը կազմում էր դրանց ընդհանուր համաշխարհային քանակի, համապատասխանաբար, 4% և 6%:

Ըստ շուկայում գործող ֆրանչայզերների քանակի երկար տարիներ առաջատար էր ԱՄՆ-ը, բայց վերջին տարիներին միտումը փոխվել է: 2015թ. ամենամեծ թվով ֆրանչայզինգային ցանցեր (5000) գործում էր Չինաստանում, հետո ԱՄՆ-ում (3680): Ֆրանչայզերների թվով առաջատար-

ներ են նաև Կորեայի Հանրապետությունը (2420 ֆրանչայզեր), Բրազիլիան (1688 ֆրանչայզեր), Հնդկաստանը (1575 ֆրանչայզեր), Թուրքիան (1400 ֆրանչայզեր), Ֆրանսիան (1389 ֆրանչայզեր) և Ռուսաստանը (1300 ֆրանչայզեր) [1]:

Այսպիսի իրավիճակը կարելի է բացատրել ամերիկյան շուկայի հարաբերական հազեցմամբ, բիզնեսի վարման նշված մոդելով և այլընտրանքային ձևերի զարգացմամբ: Ինչ վերաբերում է Չինաստանին, Բրազիլիային, Հնդկաստանին, Թուրքիային, Ռուսաստանին, ապա այստեղ ֆրանչայզինգը մեծ ճանաչում է ձեռք բերում շնորհիվ այնպիսի առավելությունների, ինչպիսիք են՝ սպառողների շրջանում հեղինակություն վայելող ապրանքային նշանի օգտագործումը, ժամանակով ստուգված բիզնես մոդելով աշխատելու հնարավորությունը, բիզնեսի կայացման, ուսուցման, շուկայաբանության գծով ներդրումների զգալի տնտեսումը: Բացի դրանից, ֆրանչայզերների քանակի աճը պայմանավորված է օրենսդրական փոփոխություններով: Շատ երկրներում ընդունվել են ֆրանչայզինգային գործունեությունը կարգավորող օրենքներ: Այդ գործընթացը գազաթնակետին է հասել 1990-2000 թթ.: Ավստրալիայում, Բրազիլիայում, Վենեսուելայում, Ինդոնեզիայում, Իտալիայում, Չինաստանում, Մալայզիայում, Մեքսիկայում, Ռուսաստանում, Ֆրանսիայում և Հարավային Կորեայում գոյություն ունեն գործունեության այս ոլորտում սեփական իրավական նորմերը: Ստեղծվել են նաև միջազգային ֆրանչայզինգային կազմակերպություններ: Շնորհիվ դրանց գործունեության, այս կամ այն երկրում իրավական կարգավորման բացակայությունը չի խոչընդոտում ֆրանչայզերների մուտքին այդ երկրների շուկա և տրամադրում է ավելի մեծ ազատություն նոր շուկաներ ընտրելիս:

Ժամանակակից փուլում ներգրավման համար հեռանկարային են համարվում ԲԲԻՔՍ երկրները՝ Բրազիլիան, Ռուսաստանը, Հնդկաստանը, Չինաստանը:

Չինաստանում ֆրանչայզինգի զարգացումը պայմանավորված է երկրում միջին դասի ձևավորմամբ և աճով: Չինաստանում հատկապես հանրաճանաչ են ֆրանչիզները սննդի ու խմիչքի և մանրածախ առևտրի ոլորտներում (ֆրանչիզների մոտ 40%): Հեռանկարային ուղղություններ են համարվում ավտոմեքենաների վարձույթը և սպասարկումը, կրթությունը ու առողջ ապրելակերպը (ֆիթնես): Չինաստանի խանութների ցանցերի և ֆրանչայզինգի ասոցիացիայի վիճակագրությունից հետևում է, որ երկրի թոփ 100 ֆրանչիզների վաճառքի ընդհանուր ծավալը կազմել է մոտ 66 մլրդ դոլար 124086 վաճառակետերում [2]: Չինաստանում գործում են 4500 ավելի ֆրանչիզներ և խանութների ցանցեր, որոնց շնորհիվ երկրում ստեղծվել են ավելի քան 5 մլն աշխատատեղեր:

Մեկ այլ երկիր արևելյան տարածաշրջանում, որտեղ ֆրանչայզինգը գտնվում է զարգացման գազաթնակետում, Հնդկաստանն է: Հնդկաստանի ֆրանչայզինգի ասոցիացիայի տվյալների համաձայն՝ դեռևս 2012 թ. առկա էր 45 հազար ֆրանչայզի և 2,5 հազար ֆրանչայզերներ, ընկերությունների համախառն շրջանառությունը կազմել էր 13,4 մլրդ. դոլար: 2017 թ. սպասվում էր աճ մինչև 168 հազար ֆրանչայզի և 3,5 հազար ֆրանչայզեր, իսկ շրջանառությունը՝ ավելի քան 50 մլրդ դոլար [3]: Հնդկաստանում ֆրանչայզինգը զարգացած է հետևյալ ոլորտներում՝ կրթություն, հագուստ և հասարակական սնունդ:

Լավ ցուցանիշներ ունի Թայվանի շուկան. ավելի քան 2,5 հազար ֆրանչայզերներ և մոտ 130 հազար վաճառքի կետեր, ներառյալ կորպորատիվ: Շրջանառությունը 2005 թ. ավելացել է 1,5 անգամ և կազմում է 70 մլրդ դոլար: Հիմնական առանձնահատկությունը միջազգային ներգրավվածությունն է. թայվանական ֆրանչիզները լայնորեն ներկայացված են ողջ Ասիայում և Ամերիկայում շնորհիվ ձեռնարկատիրության պետական աջակցության:



«Տնտեսական հրաշք» կարելի է անվանել ֆրանզայզինգը Մինգապուրում: Մինգապուրի ֆրանչայզինգի և լիցենզավորման ասոցիացիայի տվյալների համաձայն, այստեղ իրենց զարգացումն են ստացել 700 ֆրանշիզներ. 40 %՝ սնունդ և խմիչք, 30 %՝ կրթություն, 20 %՝ անհատական սպասարկում, մնացածը բաշխված է ըստ այլ ճյուղերի:

Չնայած զարգացող շուկաները (Չինաստան, Հնդկաստան, Բրազիլիա, Թուրքիա, Թայվան) գլոբալ ռեյտինգում առաջատար են դարձել քանակական առումով (շուկայում գործող ֆրանչայզերների թվով), ըստ հասույթի առաջատարներ են այն երկրները, որոնք ավանդաբար տարբերվում են տվյալ ոլորտի օրենսդրական կարգավորման բարձր մակարդակով, ինչպես նաև տնտեսության զարգացվածությամբ և փոքր ձեռնարկատիրության աջակցությամբ (ԱՄՆ, Կանադա, Ճապոնիա, Ավստրալիա, Կորեայի Հանրապետություն, Ֆրանսիա, Գերմանիա):

ԱՄՆ-ն առաջատար դիրք է զբաղեցնում ֆրանշիզների միջազգային շուկայում ըստ մրցունակության մակարդակի, մասշտաբների և նոր նախագծերի քանակի: Ճյուղում զբաղված է 11 *մլն* մարդ, իսկ ֆրանչայզինգային բիզնեսի տարեկան շրջանառությունը կազմում է 2,31 *տրլն* դոլար (համաշխարհային ֆրանչայզինգի շրջանառությունը՝ 3 *տրլն դոլար* տարեկան) [3]: Բիզնեսի վարման ֆրանչայզինգային մոդելը կիրառվում է 90 ճյուղերում: Ըստ Ֆրանչայզինգի միջազգային ասոցիացիայի տվյալների՝ ԱՄՆ-ում աշխատանքային օրվա յուրաքանչյուր ութերորդ թույլտվում ստեղծվում է նոր ֆրանշիզային կետ [4]: Ամերիկյան ֆրանչայզինգի բնորոշ գիծը ներգրավումն է: Ֆրանչայզերների 56 %-ը նշում է, որ վաճառքն արտերկրում աճում է ավելի արագ, քան ներքին շուկայում: Առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Կանադան և Մեծ Բրիտանիան, որտեղ բացակայում է լեզվական խոչընդոտը, ինչպես նաև Մեքսիկան՝ ելնելով աշխարհագրական դիրքից:

Ֆրանչայզինգն ակտիվ զարգանում է Ֆրանսիայում, որը զբաղեցնում է առաջին տեղը Եվրոպայում ըստ տվյալ բիզնես մոդելի տարածման տեմպերի: 10 տարիների ընթացքում երկրում ֆրանչայզինգային ցանցերի թիվը կրկնապատկվել է: 2016 թ. ցանցերի քանակը կազմել է 1900, ֆրանշիզային առևտրի կետերը՝ 71508, շրջանառությունը՝ 55,1 *մլրդ եվրո*, աշխատատեղերը՝ 618 845 [5]: Շնորհիվ Ֆրանսիայի ֆրանչայզինգի ֆեդերացիայի (FFF) և խոշոր ֆրանչայզինգային ցանցերի հենց ֆրանսիական մոդելն է հաջողությամբ արտահանվում այլ երկրներ:

Եվրոպական երկրների շրջանում Գերմանիան զբաղեցնում է առաջատար դիրքերից մեկը ֆրանչայզինգի զարգացման ոլորտում: Գերմանական ֆրանչայզինգի ինդուստրիայի շրջանառությունը 2016 թ. աճել է 4,8 %՝ հասնելով 103,9 *մլրդ եվրոյի*: Գերմանիայում 2016 թ. գործել է շուրջ 950 ֆրանչայզերներ, մոտ 120000 անկախ ֆրանչայզիներ աշխատատեղերով են ապահովել 700000 հոգու, ֆրանչայզինգային համակարգերի 39 % սպասարկման ոլորտում էր, 30 %՝ մանրածախ առևտրում, 22% կազմել է սննդի կազմակերպումն ու զբոսաշրջությունը [6]:

2017 թ. սպասվում էր ֆրանչայզինգի համաշխարհային շուկայի աճ 36 *մլրդ դոլարով*, որի աճի հիմնական շարժիչը ռեստորանային բիզնեսն է: Ֆրանչայզինգային հիմունքներով բացվող ձեռնարկությունների քանակը պետք է աճեր 1,6 %, հասնելով 744,437 կետերի, որոնցում ներգրավվելու էին 8 *մլն* աշխատողներ, ինչը 3,3% ավել է, քան 2016 թ. [7]:

2018 թ. ֆրանչայզինգի շուկայում նախանշվում են հետևյալ միտումները [8].

- օնլայն շփումը և սոցիալական ցանցերը: Ավանդական շուկայաբանությունը կորցնում է իր արդիականությունը: Ավելի մեծ թվով մարդիկ են օգտագործում սոցիալական ցանցերը, կայքերն ապրանքային նշանների հետ փոխազդեցության համար: Ընկերությունների առջև կանգնած է անգամ ոչ թե «օգտագործել արդյոք սոցիալական ցանցեր»

հարցը, այլ «ինչպես օգտագործել դրանք, որպեսզի ապահովել իրենց հաճախորդների լավագույն սպասարկումը»,

- մեծ թվով ֆրանչայզիների ի հայտ գալը, որոնք ներկայացնում են միանգամից մի քանի ապրանքային նշաններ: Ավելի մեծ թվով ֆրանչայզիներ սկսում են ձեռք բերել մի քանի ֆրանշիզներ, քանի որ այսպիսի ռազմավարությունը օգնում է բարելավել դրամական հոսքը, ինչպես նաև հանդիսանում է «անվտանգության բարձիկ» կոնկրետ բիզնեսում անկումներից,
- ֆրանշիզների ժողովրդականությունը «Առողջություն» և «Կրթություն» կատեգորիաներում: Մարդիկ ավելի մեծ ուշադրություն են դարձնում իրենց և ընտանիքի բարեկեցության վրա, այդ պատճառով նպատակ են դնում հասնել առողջության և կրթության բարձր մակարդակի,
- դեպի հաճախորդները կողմնորոշվածության աճը: Ձեռնարկատիրոջ նպատակն է ստեղծել ոչ թե սմալիտանի ունիվերսալ արտադրանք, որը կարող է հարմար լինել շատ հաճախորդներին, այլ արտադրանքը դարձնել ճկուն և տալ հաճախորդներին այն, ինչ նրանք ցանկանում են՝ հարմարեցնելով որոշակի պահանջներին,
- ըստ պահանջի ծառայությունների և արտադրանքի ժողովրդականությունը: Ժամանակակից աշխարհում սպառողների նախասիրությունները հաճախ փոխվում են և ծագում են նոր միտումներ: Գրագետ ձեռնարկատերը վերլուծում է շուկայի դինամիկան և առաջարկում է սպառողներին անհրաժեշտ լուծումներ:

Տնտեսության մեջ ֆրանչայզինգի կիրառումը մեծ նշանակություն ունի ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար:

Անդրկովկասյան հանրապետությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում ինչպես ամերիկյան, այնպես էլ եվրոպական ֆրանչայզերների համար, քանի որ վերջին տարիներին տարածաշրջանը ցույց է տալիս ՀՆԱ-ի և միջին եկամտի կայուն աճ: Տարածաշրջանում արդեն գործում են հարյուրից ավելի ֆրանչայզինգային ապրանքային նշաններ, իսկ հաշվի առնելով երկրների զարգացման հեռանկարներն ու զբոսաշրջիկների տարեկան աճող հոսքը, կարելի է կանխատեսել, որ առաջիկա հինգ տարիներին տարածաշրջանում կարող են բացվել ֆրանչայզինգով աշխատող մոտ հազար ձեռնարկություն, որոնցում կընդգրկվեն մինչև 15 հազ. աշխատակիցներ [9]:

Հարկ է շեշտել այն փաստը, որ ի տարբերություն ԱՊՀ մի շարք երկրների, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 53-րդ գլուխը կարգավորում է համալիր թույլտվության պայմանագիրը [10]: Մասնավորապես՝ օրենսգիրքը սահմանում է նորմեր իրավատիրոջ և օգտագործողի պարտականությունների իրականացման համար:

Դիտարկելով ֆրանչայզինգի զարգացման արդի միտումները ՀՀ-ում՝ պետք է նշել, որ ՀՀ շուկան իր չափերով շատ փոքր է և օտարերկրյա ընկերությունների, ներդրողների մեծ մասը ծանոթ չէ դրա առանձնահատկություններին և գործելաոճին, այդ իսկ պատճառով նրանց համար դժվարություն է ներկայացնում այստեղ գործունեության վարումն ու մասնաձյուղերի ստեղծումը ռիսկայնության բարձր մակարդակի պատճառով: Այս առումով արտասահմանյան ընկերությունների համար ֆրանչայզինգն առաջին հերթին իրենց ապրանքային նշանի կիրառման իրավունքը վաճառելու միջոցով շահույթի ավելացման և ռիսկերի նվազեցման մեթոդ է, քանի որ ֆրանչայզինգային իրավունք տվող ընկերությունը կարող է կրել միայն հեղինակային, գործառնական, սակայն ոչ ֆինանսական ռիսկեր:

Այստեղ հատկանշական է նաև այն փաստը, որ ՀՀ ֆրանչայզինգի շուկա ներթափանցող ընկերություններն ոչ միայն գործում են վերջինիս խաղի կանոններով և հարմարվում առանձնահատկություններին, այլև որոշակիորեն հարմարեցնում են ՀՀ շուկան և հասարակությանը միջազգային մակարդակին:

Ուումնասիրելով ՀՀ ֆրանչայզինգի շուկան՝ հարկ է ուշադրություն դարձնել նաև ՀՀ ազգային կազմակերպություններին, որոնք դաշտի գլխավոր խաղացողներ և ֆրանչիզ ներկրողներն են: Այդ կազմակերպությունների թվում կարելի է առանձնացնել «Ջերմուկ Գրուպ» ընկերությունը, որի շնորհիվ 2001-2009 թթ. ընթացքում կնքվեցին մի շարք ֆրանչայզինգային պայմանագրեր, որոնցից ամենակարևորներն էին «PepsiCo», «P&G» և «Carlsberg Group» կազմակերպությունների հետ:

2001 թ. «PepsiCo» ընկերությունը՝ «Ջերմուկ Գրուպ» ընկերության հետ կնքեց ֆրանչայզինգային պայմանագիր ներմուծման և վաճառքի պայմաններով, որի շնորհիվ ՀՀ սպառողին մատչելի դարձան ավելի քան 500 տեսակի ըմպելիքներ և նախուտեստներ: Ֆրանչայզինգային համագործակցության հաջորդ ոլորտը հանրաճանաչ «Procter&Gamble» (P&G) ընկերության հետ պայմանագրի կնքումն է, որի ամենահայտնի ապրանքանիշերից են՝ Tide, Gillette, Pampers, Head&Shoulders, Pringles, Duracell: ՀՀ-ում կազմակերպության ներկայացուցիչ է «Ջերմուկ Գրուպ»-ի մասնաճյուղ «ԱՌԳԵ ԲԻՋՆԵՍ» ՍՊԸ-ն [11]: «Ջերմուկ Գրուպ»-ի շնորհիվ ՀՀ մուտք գործած հաջորդ ընկերությունն է «Carlsberg Group»-ը, որն աշխարհում զարեջուր արտադրող 4-րդ խոշոր ձեռնարկությունն է:

ՀՀ ֆրանչայզինգային շուկայում արտասահմանյան ֆրանչիզների ակտիվ ներմուծող է նաև «ՄԱՍ Գրուպ» ընկերությունը, որի գործունեության հիմնական ուղղությունը մանրածախ առևտուրն է [12]: Ընկերությունը ֆրանչայզինգի պայմանագրեր է կնքել հագուստի, կոշիկների և պարագաների աշխարհահռչակ ապրանքային նշանները՝ NEXT, DEBENHAMS, ALDO ՀՀ-ում ներկայացնելու համար:

ՀՀ ֆրանչայզինգի շուկայում ակտիվ գործունեություն ծավալող ընկերություններից է «Օրանժ Էլեֆանտ» ՍՊԸ-ն, որն արտասահմանյան ֆրանչիզի ամենամատչելի տարբերակներից է. բիզնեսի կազմակերպման համար պահանջվող ներդրումները տատանվում են 1000000-ից մինչև 3500000 ՀՀ դրամի սահմաններում, ք. Երևանում ֆրանչայզինգ գնելու գումարը կազմում է 1000 ԱՄՆ դոլար, իսկ մարզերում և Լեռնային Ղարաբաղում՝ 300 ԱՄՆ դոլար [13]:

ՀՀ-ում գործող արտասահմանյան հաջորդ ֆրանչիզը «Gold's gym»-ն է, որն ի հակադրություն վերոնշյալ ֆրանչիզների, միջազգային ասպարեզում դիտարկվում է որպես թանկ ֆրանչիզ: Ֆրանչայզինգային գործունեության շրջանակներում մարզասրահի ստեղծման համար պահանջվող ներդրումները տատանվում են 2.218.250...5.000.500 ԱՄՆ դոլար, որի մեջ ներառվում է սկզբնական ֆրանչիզի գինը՝ 40,000 ԱՄՆ դոլար [14]:

ՀՀ-ում միջազգային ֆրանչայզինգի նշանավոր ներկայացուցիչ են նաև «Mariott International», «Hilton hotels and resorts», ինչպես նաև «Radisson Blue» հյուրանոցների ցանցերն, որոնք մեծ պահանջարկ են վայելում Հայաստանում զբոսաշրջիկների օրեցօր ավելացող հոսքերի պատճառով:


Դիտարկելով ՀՀ-ում գործող ֆրանչիզները՝ հարկ է անդրադառնալ նաև համաշխարհային շուկայում ամենակտիվ զարգացող և զանգվածային պահանջարկ վայելող ճյուղին՝ հասարակական սննդին, որը վերջին տարիներին գրանցել է աննախադեպ աճ ի շնորհիվ աշխարհը հետզհետե գրավող արագ սննդի: Այսպիսով, ՀՀ-ում սննդի ոլորտի արտասահմանյան գլխավոր ֆրանչիզներից են Pizza Hut, KFC, Bella Italia, Black angus, Wasabi, Mamma Mia, Paulaner, Jager,

Yum yum donuts, Tiffosi, Smoothie, Il solo gelato, Louis Charden, La boulangerie de Paris և մի շարք այլ ընկերություններ, որոնք մուտք գործելով ՀՀ շուկա, սրում են մրցակցային պայքարը, ընդլայնում են սպառողների ընտրության հնարավորությունը, նպաստում են գործազրկության նվազմանը:

Հատկանշական է այն փաստը, որ չնայած ՀՀ-ում արագ սննդի և սրճարանների ֆրանչիզների մեծ տարածվածությանը, այնուամենայնիվ ֆրանչիզների քանակությամբ առաջին տեղում են հագուստի, կոշիկների և պարագաների խանութները: Դրանցից ամենանշանավորներն են՝ Roberto Cavalli, Ermenegildo Zegna, ZARA, Puma, Vicotria’s Secret, Levi’s, Ralph Lauren, Adidas, Hugo Boss, Bershka, Calvin Klein, LACOSTE, Reebok, Espirit և մի շարք այլ համաշխարհային ապրանքային նշաններ, որոնք հայ սպառողներին են ներկայացնում իրենց տարեց տարի թարմացվող տեսականին, ծանոթացնում համաշխարհային նորաձևության վերջին միտումներին:

Դիտարկելով ՀՀ ֆրանչայզինգի շուկան՝ հարկ է ուշադրություն դարձնել այն փաստին, որ վերջին մի քանի տարվա ընթացքում էականորեն աճել է ՀՀ-ում ֆրանչայզինգային գործունեություն վարելու ցանկություն հայտնող կազմակերպությունների քանակը, որոնց գերակշիռ մասն ԱՄՆ-ից են, սակայն արդի միտումներից է նաև եվրոպական և ռուսական ֆրանչիզների ակտիվ ներհոսքը Հայաստան, ընդ որում հատկանշական է, որ 2016 թ. եվրոպական ֆրանչիզների թիվը նույնիսկ գերազանցել է ամերիկյաններինը՝ կազմելով համապատասխանաբար, 69 և 61 ֆրանչիզ: Սակայն պետք է նշել, որ չնայած ՀՀ-ում արտասահմանյան ֆրանչիզների մեծ քանակին և բազմազանացմանը, դրանց գներն այնքան էլ մատչելի չեն հայրենական կազմակերպությունների, մասնավորապես ՓՄՁ-ի համար (նկար):

■ 10000-20000 € ■ 21000-50000€ ■ 51000-70000€ ■ 71000-100000€ ■ 101000-500000€



**Նկ. ՀՀ-ում ֆրանչայզինգային գործունեություն վարելու ցանկություն հայտնող կազմակերպությունների թիվն ըստ ֆրանչիզի ձեռք բերման համար անհրաժեշտ գումարի [15]**

ՀՀ ֆրանչայզինգի շուկայի զարգացման խոչընդոտներից է Հայաստանի ֆրանչայզինգային ասոցիացիայի բացակայությունը, որն էականորեն դժվարացնում է ֆրանչայզերների և ֆրանչայզինների համագործակցությունը, բացասաբար է ազդում երկրի հետ համագործակցության ցանկություն հայտնող կազմակերպությունների վրա, քանի որ ֆրանչայզինգային ասոցիացիան նաև վերահսկիչ կառույց է, որը պատասխանատվություն է կրում ինչպես երկրում, այնպես էլ արտասահմանում ՀՀ կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերի համար, վերահսկում է կողմերի իրավունքների պահպանումն ու պարտականությունների ժամանակին կատարումը, հետևաբար վերոնշյալ կառույցի բացակայությունն անվստահություն է ներշնչում

արտասահմանյան կազմակերպություններին և նրանց հետ պահում համալիր թույլտվության (ֆրանչայզինգային) պայմանագրերի կնքումից:

Հաշվի առնելով ՀՀ տնտեսության առանձնահատկությունները՝ միկրոֆրանչայզինգը կարող է դառնալ արդյունավետ գործիք փոքր ձեռնարկատիրության զարգացման գործում, մասնավորապես մարզերում հաջողված բիզնեսների ներդրման միջոցով: Դա կապահովի ինչպես տնտեսական, այնպես էլ սոցիալական օգուտներ աղքատության նվազեցման, գործազրկության մակարդակի կրճատման ու այլ սոցիալական խնդիրների լուծման առումով: Ընդ որում, այս գործում խիստ կարևոր է ՀՀ պետական, ոչ պետական և միջազգային կազմակերպությունների համատեղ և համակարգված աշխատանքը:

ՀՀ-ում ֆրանչայզինգի շուկայի ներկա վիճակը կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

- ՀՀ-ում շուկայի գերակշիռ մաս են կազմում արտասահմանյան ֆրանչիզները,
- ի տարբերություն ԵՄ-ի և ԱՄՆ-ի՝ ՀՀ ֆրանչայզինգի շուկայում առաջատար ոլորտ է ոչ թե արագ սննդի, այլ հագուստի, կոշիկների և պարագաների ֆրանչայզինգը,
- ֆրանչիզներ ակտիվ ներմուծող հայրենական կազմակերպություններից են Ջերմուկ Գրուպ-ը, Արգե-ն, Sas Group-ը:

Հայաստանում ֆրանչայզինգի հետագա զարգացմանը կարող են նպաստել.

- ֆրանչայզինգային ասոցիացիայի ստեղծումը,
- ֆրանչայզինգի մասին օրենքի ընդունումը,
- բնակչության շրջանում ֆրանչայզինգի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացումը սեմինարների, դասընթացների անցկացման միջոցով,
- միկրոֆրանչայզինգի զարգացումը:

Այսպիսով, ֆրանչայզինգը Հայաստանում դեռևս այնքան էլ մատչելի չէ հայրենական ձեռներեցի, հատկապես ՓՄՁ-ի համար և ՀՀ-ն փաստացի ֆրանչիզներ ներմուծող է, քանի որ Հայաստանում գործող ֆրանչիզների զգալի մասն արտասահմանյան ծագում ունի, այնուամենայնիվ ՀՀ-ում առկա է ներուժ ֆրանչայզինգի հետագա զարգացման համար:

**Лилия Альбертовна Аветисян**

*Европейский университет, г.Ереван, РА, likaavetisyan@yahoo.com*

## **ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ МИРОВОГО РЫНКА ФРАНЧАЙЗИНГА И ЕГО ПРОЯВЛЕНИЯ В АРМЕНИИ**

*Исследование современных тенденций развития франчайзинга передовых стран мира является актуальным и для развития франчайзинговых отношений в Армении. Цель статьи – выявить проблемы и перспективы развития франчайзинга в экономике РА посредством анализа особенностей и тенденций мирового рынка франчайзинга. Представлен опыт основных игроков мирового рынка франчайзинга: США, Франция, Германия, Китай, Индия, факторы, способствующие развитию международного франчайзинга, проанализированы нынешнее состояние рынка франчайзинга РА, препятствия для его развития и возможные пути их преодоления.*

**Ключевые слова:** франчайзинг, правообладатели, пользователь, договор комплексного разрешения, товарный знак.

Lilya Albert Avetisyan

European University, Yerevan, Republic of Armenia, RA, Erevan, likaavetisyan@yahoo.com

## DEVELOPMENT TRENDS OF THE GLOBAL FRANCHISE MARKET AND THEIR MANIFESTATION IN ARMENIA

*The research of current trends of franchise development in the advanced countries of the world is actual at development of franchise relationships in Armenia. The purpose of the article to identify problems and prospects of development of franchising in the economy of the Republic of Armenia on the basis of analysis of features and tendencies of the global franchise market. In the paper the experience of the main players of the global franchise market, such as USA, France, Germany, China, India, the factors causing development of the international franchising are presented, the current state of the RA franchise market, obstacles to development and possible ways for their overcoming are analysed.*

**Keywords:** franchising, franchiser, franchisee, franchise agreement, trademark.

### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Шкутько О.Н. (2015), МЕЖДУНАРОДНЫЙ ФРАНЧАЙЗИНГ: СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ И МИРОВОЙ ОПЫТ. Экономический вестник университета. Сборник научных трудов ученых и аспирантов. Available at: <https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodnyy-franchayzing-sovremennye-tendentsii-i-mirovoy-opyt> (accessed 20.01.2018).
2. 2016 Top Markets Report Franchising Country Case Study, p.1 Available at: [https://www.trade.gov/topmarkets/pdf/Franchising\\_China.pdf](https://www.trade.gov/topmarkets/pdf/Franchising_China.pdf) (accessed 24.02.2018).
3. Пути выхода: Обзор мирового рынка франчайзинга, Available at: <http://my-trade-group.com/index.php/ritejl/franchajzing/item/4594-puti-vykhoda-obzor-mirovogo-rynka-franchajzinga> (accessed 21.02.2018).
4. Международный опыт развития франчайзинга (март 2016). USAID Macroeconomic Project, с.21. Available at: <http://atameken.kz/uploads/content/files/%D0%9C%D0%B5%D0%B6%D0%B4%D1%83%D0%BD%D0%B0%D1%80%D0%BE%D0%B4%D0%BD%D1%8B%D0%B9%20%D0%BE%D0%BF%D1%8B%D1%82%20%D1%80%D0%B0%D0%B7%D0%B2%D0%B8%D1%82%D0%B8%D1%8F%20%D1%84%D1%80%D0%B0%D0%BD%D1%87%D0%B0%D0%B9%D0%B7%D0%B8%D0%BD%D0%B3%D0%B0%D0%A1.pdf> (accessed 25.02.2018).
5. French Franchise Federaion. Available at: <https://www.franchise-fff.com/franchise/les-chiffres-cles> (accessed 21.01.2018).
6. Germany Trade & Invest. Available at: <http://www.gtai.de/GTAI/Navigation/EN/Invest/Industries/Consumer-industries/franchising.html#629604> (accessed 21.01.2018).
7. <http://www.buybrand.ru/news/13302/> (accessed 27.02.2018).
8. [https://franshiza.ru/article/read/mirovoj\\_rynok\\_franchajzinga\\_tendencii\\_2018/](https://franshiza.ru/article/read/mirovoj_rynok_franchajzinga_tendencii_2018/) (accessed 27.02.2018)
9. <http://www.buybrandexpo.com/news/12826/> (accessed 21.01.2018).
10. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=74658> (accessed 21.01.2018).
11. <http://arge.am> (accessed 23.01.2018).
12. <http://www.sasgroup.am> (accessed 23.01.2018).
13. <http://www.orange-elephant.am/franchise.php> (accessed 23.01.2018).
14. <https://franchising.goldsgym.com/become-an-owner/> (accessed 23.01.2018).
15. <https://www.franchisedirect.com/internationalfranchises/armenia/11/> (accessed 23.01.2018).

REFERENCES

1. Shkutsko A.N. (2015), [INTERNATIONAL FRANCHIZING: CURRENT TRENDS AND WORLD EXPERIENCE]. *Economicheskij vestnik universiteta. Sbornik nauchnikh trudov uchenikh i aspirantov.* (In Russian) Available at: <https://cyberleninka.ru/article/n/mezhdunarodnyy-franchayzing-sovremennye-tendentsii-i-mirovoy-opyt> (accessed 20.01.2018).
2. 2016 Top Markets Report Franchising Country Case Study, p.1. Available at: [https://www.trade.gov/topmarkets/pdf/Franchising\\_China.pdf](https://www.trade.gov/topmarkets/pdf/Franchising_China.pdf) (accessed 24.02.2018).
3. [Ways out: Survey of the global franchise market]. (In Russian) Available at: <http://my-trade-group.com/index.php/ritejl/franchajzing/item/4594-puti-vykhoda-obzor-mirovogo-rynka-franchajzinga> (accessed 21.02.2018).
4. [International experience of franchising development (march 2016)] USAID Macroeconomic Project, p. 21. (In Russian) Available at: <http://atameken.kz/uploads/content/files/%D0%9C%D0%B5%D0%B6%D0%B4%D1%83%D0%BD%D0%B0%D1%80%D0%BE%D0%B4%D0%BD%D1%8B%D0%B9%20%D0%BE%D0%BF%D1%8B%D1%82%20%D1%80%D0%B0%D0%B7%D0%B2%D0%B8%D1%82%D0%B8%D1%8F%20%D1%84%D1%80%D0%B0%D0%BD%D1%87%D0%B0%D0%B9%D0%B7%D0%B8%D0%BD%D0%B3%D0%B0%D0%A1.pdf> (accessed 22.02.2018).
5. French Franchise Federaion Available at: <https://www.franchise-fff.com/franchise/les-chiffres-cles> (accessed 21.01.2018).
6. Germany Trade & Invest. Available at: <http://www.gtai.de/GTAI/Navigation/EN/Invest/Industries/Consumer-industries/franchising.html#629604> (accessed 21.01.2018).
7. <http://www.buybrand.ru/news/13302/> (accessed 27.02.2018).
8. [https://franshiza.ru/article/read/mirovoj\\_rynok\\_franchajzinga\\_tendencii\\_2018/](https://franshiza.ru/article/read/mirovoj_rynok_franchajzinga_tendencii_2018/) (accessed 27.02.2018)
9. <http://www.buybrandexpo.com/news/12826/> (accessed 21.01.2018).
10. <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=74658> (accessed 21.01.2018).
11. <http://arge.am> (accessed 23.01.2018).
12. <http://www.sasgroup.am> (accessed 23.01.2018).
13. <http://www.orange-elephant.am/franchise.php> (accessed 23.01.2018).
14. <https://franchising.goldsgym.com/become-an-owner/> (accessed 23.01.2018).
15. <https://www.franchisedirect.com/internationalfranchises/armenia/11/> (accessed 23.01.2018).

Լիլյա Ալբերտի Ավետիսյան, տ.գ.թ., դոցենտ, *Եվրոպական համալսարան, դասախոս*, (+37499) 70-18-96, [likaavetisyan@yahoo.com](mailto:likaavetisyan@yahoo.com)

Лилия Альбертовна Аветисян, к.э.н., доцент, *Европейский университет*, преподаватель, (+37499) 70-18-96, [likaavetisyan@yahoo.com](mailto:likaavetisyan@yahoo.com)

*Avetisyan Lilya Albert, PhD in Economics, Associate Professor, (Yerevan, RA)- European University, Lecturer*, (+37499) 70-18-96, [likaavetisyan@yahoo.com](mailto:likaavetisyan@yahoo.com)

Ներկայացվել է՝ 09.02.2018 թ.  
 Ընդունվել է տպագրության՝ 02.04.2018 թ.

ՀՏԴ 339.924

**Միսակ Արմոյի Ավագյան**

*Եվրոպական համալսարան, ՀՀ, ք. Երևան, misakav@rambler.ru*

**ԵՎՐԱՄԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԵՐԿՐՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ  
ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ**

*ԵԱՏՄ գործունեության արդյունավետության կարևորագույն գնահատականներից մեկը խմբավորման անդամ պետությունների սոցիալական վիճակն է, որը պայմանավորված է այդ երկրներում իրականացվող սոցիալական քաղաքականության առանձնահատկություններով: Հնդվածում իրականացվել է ԵԱՏՄ անդամ երկրների բնակչության սոցիալական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշների համեմատական վերլուծություն և առաջարկվել այդ երկրների սոցիալական քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ:*

**Առանցքային բառեր.** *սոցիալական քաղաքականություն, ինտեգրում, սոցիալական բնեռացում, սոցիալական երաշխիքներ, գործազրկություն, կենսամակարդակ*

**Ներածություն**

Երկրների սոցիալական վիճակը և այն բնութագրող ցուցանիշները պայմանավորված են վարվող սոցիալական քաղաքականությամբ և դրա իրացման արդյունավետությամբ: Ընդհանուր առմամբ, սոցիալական քաղաքականությունը երկրի ազգային անվտանգության ապահովման բաղկացուցիչ մասն է և իրենից ներկայացնում է պետության (պետական կառույցների), տեղական ինքնակառավարման մարիներ, հասարակական կազմակերպությունների կողմից իրականացվող այնպիսի միջոցառումների համակարգ, որոնք ուղղված են հասարակական բարեկեցության բարձրացմանը, բնակչության կյանքի որակի բարելավմանը, սոցիալքաղաքական կայունության ապահովմանը, սոցիալական գործընկերության զարգացմանն ու հասարակության մեջ սոցիալական համերաշխությանն առնչվող արդյունքների ձեռքբերմանը: Սոցիալական կայունությունը ենթադրում է սպառման հիմնական ապրանքների և ծառայությունների գների կայուն մակարդակի ապահովում, եկամուտների չհիմնավորված տարբերակման բացառում, հասարակության անդամների սոցիալական պաշտպանության և երաշխիքների հուսալի համակարգի ձևավորում: Այս քաղաքականության հիմնական նպատակն է մարդու արժանապատիվ կյանքի և ազատ զարգացման համար անհրաժեշտ պայմանների ձևավորումը, իսկ վերջնական նպատակը՝ բնակչության պահանջմունքների բավարարումը:

ԵԱՏՄ երկրների սոցիալ-տնտեսական վիճակի մասին խոսելիս՝ հարկ է նշել, որ այն առանձին երկրներում ունի խիստ տարբեր դրսևորումներ, ինչն էլ պայմանավորում է այդ երկրներում իրականացվող սոցիալական քաղաքականության արդյունավետության մակարդակների միջև նկատելի տարբերությունը: Բավական է նշել բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի գծով ԵԱՏՄ երկրների միջև առկա էական ճեղքվածքը: Այսպես, եթե 2016 թ. տարեվերջի դրությամբ Ղրղզստանում այդ ցուցանիշը կազմել է ընդամենը 1,078 ԱՄՆ դոլար, ապա Ռուսաստանում այն կազմել է 8,769 ԱՄՆ դոլար, որն ավելի քան 8 անգամ գերազանցում է Ղրղզստանում գրանցված համապատասխան ցուցանիշից: Զգալի տարբերություն կա նաև կառույցի անդամ



երկրների աղքատության մակարդակների միջև. եթե 2016 թ. Ղազախստանում գրանցվել է աղքատության ամենացածր մակարդակը՝ կազմելով 2,6 %, ապա Հայաստանում և Ղրղզստանում այդ ցուցանիշը գտնվել է բավականին մտահոգիչ մակարդակների վրա՝ կազմելով համապատասխանաբար 29,4 % և 25,4 % (աղ. 1):

Աղյուսակ 1

ԵՄՏՄ երկրների որոշ սոցիալ-տնտեսական ցուցանիշներ 01.01.2017թ. դրությամբ [1]

	Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան
Բնակչության մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար)	3,533	4,964	7,715	1,078	8,769
Աղքատության մակարդակը (%)	29,4	5,7	2,6	25,4	13,5

**Խնդրի դրվածքը**

Պետության սոցիալական քաղաքականությունն իրականացվում է հետևյալ հիմնական ուղղություններով:

1. *Եկամուտների քաղաքականություն*՝ ուղղված եկամուտների անհավասարաչափ բաշխման և դրանց աճի ապահովման հետ կապված խնդիրների լուծմանը: Այս առումով, պետության խնդիրներից է հասցեական սոցիալական աջակցությունը բնակչության թույլ պաշտպանված շերտերին, ինչպես նաև տնտեսապես ակտիվ բնակչության և անգործունակ քաղաքացիների միջև օպտիմալ հարաբերակցության պահպանումը:

Ինչպես երևում է աղ. 2-ից, 2016 թ. տարեվերջի դրությամբ ԵՄՏՄ երկրներում նվազագույն աշխատավարձի չափը տատանվում է 15-ից մինչև 122 ԱՄՆ դոլար գումարի միջակայքում, ընդ որում՝ ամենացածր մակարդակը գործում է Ղրղզստանում, իսկ առավելագույն չափը՝ Բելառուսում, որտեղ նվազագույն աշխատավարձի չափն ավելի քան 8 անգամ գերազանցում է Ղրղզստանում գործող նվազագույն աշխատավարձի չափին: Նշենք, որ այս ցուցանիշով Բելառուսը, Ռուսաստանը և Հայաստանը գտնվում են գրեթե նույն մակարդակի վրա, իսկ Ղազախստանում նվազագույն աշխատավարձը (68 ԱՄՆ դոլար) մինչև 1,8 անգամ զիջում է նշված երկրների համապատասխան ցուցանիշին:

Ինչ վերաբերում է միջին ամսական անվանական աշխատավարձերին, ապա այս ցուցանիշի գծով ևս Ղրղզստանը զբաղեցնում է ամենացածր տեղը (212 ԱՄՆ դոլար), մինչդեռ Ռուսաստանում վճարվում է ամենաբարձր միջին ամսական աշխատավարձը (549 ԱՄՆ դոլար), ինչով էլ թերևս պայմանավորված է ԵՄՏՄ երկրներից դեպի Ռուսաստան աշխատանքային գաղթի բարձր մակարդակը: Հարկ է նկատել, որ ի տարբերություն Հայաստանում և Բելառուսում գործող նվազագույն աշխատավարձի չափերի, որոնք մոտ են Ռուսաստանի համապատասխան ցուցանիշին, միջին ամսական անվանական աշխատավարձերի դեպքում նշված երկրների միջև առկա է զգալի տարբերություն: Նշված երկրներում միջին ամսական անվանական աշխատավարձերը, որոնց չափերը գրեթե մոտ են միմյանց (համապատասխանաբար 363 ԱՄՆ դոլար և 361 ԱՄՆ դոլար) Ռուսաստանի նույն ցուցանիշից ցածր են մոտ 34 %-ով, իսկ Ղազախստանում միջին ամսական աշխատավարձը կազմում է 418 ԱՄՆ դոլար, որը Ռուսաստանում գրանցված համապատասխան ցուցանիշից ցածր է 23,9 %-ով: Այսպիսով, միջին ամսական անվանական աշխատավարձի գծով նույնպես ամենամեծ տարբերությունն ունեն Ղրղզստանը և Ռուսաստանը (մոտ 2,6 անգամ): Նշվածից կարելի է փաստել, որ ԵՄՏՄ մնացած երկրներից դեպի

Ռուսաստան մեկնող աշխատանքային գաղթականների քանակը, ի թիվս այլ գործոնների, պայմանավորված է նաև այդ երկրներում և Ռուսաստանում վճարվող նվազագույն և միջին ամսական աշխատավարձերի միջև եղած տարբերություններով. որքան մեծ է այդ տարբերությունը, այնքան ակտիվ են դեպի Ռուսաստան գաղթի հոսքերը:

Ինչպես նշվեց, եկամուտների քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից մեկը եկամուտների համաչափ բաշխման ապահովումն է: Որպես այդ բաշխումը չափող գործակից՝ հանդիսանում է Ջինիի գործակիցը կամ Ջինիի ինդեքսը, որը ցույց է տալիս հասարակության սոցիալական բևեռացման աստիճանը և չափում է անձանց կամ տնային տնտեսությունների միջև եկամտի բաշխումը: Որքան գործակիցը ձգտում է 0-ի, այդքան եկամուտները բաշխվում են հավասարաչափ, իսկ եթե ձգտում է 1-ի՝ ծայրահեղ անհավասար: Ինչպես երևում է աղ. 2-ի տվյալներից, 2016 թ. սոցիալական բևեռացման համեմատաբար ամենաբարձր աստիճանը գրանցվել է Ռուսաստանում (0,414) և Ղրղզստանում (0,406), իսկ ամենացածրը՝ Ղազախստանում (0,278) և Բելառուսում (0,279): Հայաստանում այդ գործակիցը կազմում է 0,375՝ ԵԱՏՄ երկրների շարքում գտնվելով տնային տնտեսությունների միջև եկամուտների առավել հավասար և առավել անհավասար բաշխվածություն ունեցող երկրների միջին մակարդակում: Այնուամենայնիվ, ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներում Ջինիի գործակիցը փոքր է 0,5-ից, ինչը նշանակում է, որ վերջիններս եկամուտների համաչափ բաշխման ուղղությամբ դեռևս իրականացնում են ոչ բավարար և ցածր արդյունավետությամբ աչքի ընկնող սոցիալական քաղաքականություն:

**Աղյուսակ 2**

**Աշխատավարձերի մակարդակը և Ջինիի գործակիցը ԵԱՏՄ երկրներում 01.01.2017 թ. դրությամբ [1]**

	<i>Հայաստան</i>	<i>Բելառուս</i>	<i>Ղազախստան</i>	<i>Ղրղզստան</i>	<i>Ռուսաստան</i>
Նվազագույն աշխատավարձ (ԱՄՆ դոլար)	114	122	68	15	121
Միջին ամսական անվանական աշխատավարձ (ԱՄՆ դոլար)	363	361	418	212	549
Ջինիի գործակիցը (ըստ բնակչության 10%-նոց խմբերի)	0,375	0,279	0,278	0,406	0,414

2. *Ջրաղվածության քաղաքականություն*՝ ուղղված արդյունավետ աշխատանքային գործունեության համար անհրաժեշտ պայմանների ձևավորմանը: Ըստ աղ. 3-ի տվյալների, որ 2016թ. վերջի դրությամբ բնակչության տնտեսական ակտիվության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Բելառուսում (77,8 %), Ղազախստանում (76,7 %) և Ռուսաստանում (75,1 %), իսկ ամենացածրը՝ Հայաստանում (56,0 %): Նույն պատկերն է նաև բնակչության զբաղվածության դեպքում. Բելառուսում, Ղազախստանում և Ռուսաստանում առկա է զբաղվածության ամենաբարձր մակարդակը (համապատասխանաբար 73,2 %, 72,9 % և 70,9 %), իսկ Հայաստանում այդ ցուցանիշը նույնպես ԵԱՏՄ երկրների շարքում գտնվում է ամենացածր մակարդակի վրա (45,6 %): Ինչ վերաբերում է գործազրկության մակարդակին, ապա այն ԵԱՏՄ երկրների շրջանակներում տատանվում է 5,0-ից մինչև 18 %-ի շրջակայքում, ընդ որում՝ գործազրկության ամենացածր ցուցանիշը գրանցվել է Ղազախստանում (5,0 %), իսկ ամենաբարձրը՝ Հայաստանում (18,0 %),

որը մոտ 2,5 անգամ ավել է, քան գործազրկության մակարդակով նույնիսկ նախավերջին տեղը զբաղեցնող Ղրղզստանի ցուցանիշը (7,2 %): Առանձնակի ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ ԵԱՏՄ տարածքում գործազուրկների 22,3 %-ը կազմում են 15...24 տարեկան երիտասարդները: Ի դեպ, նշված տարիքային խմբում գործազրկության ամենաբարձր մակարդակը գրանցվել է Ղրղզստանում (37,9 %), իսկ ամենացածրը՝ Ղազախստանում (9,9 %) [2]:

Աղյուսակ 3

**ԵԱՏՄ երկրների աշխատանքի շուկան բնութագրող սոցիալ-տնտեսական ցուցանիշները**

**01.01.2017թ. դրությամբ [1]**

	<b>Հայաստան</b>	<b>Բելառուս</b>	<b>Ղազախստան</b>	<b>Ղրղզստան</b>	<b>Ռուսաստան</b>	<b>ԵԱՏՄ</b>
Բնակչության թվաքանակը ( <i>հազ. մարդ</i> )	2.986,2	9.504,7	17.918,2	6.140,2	146.804,4	<b>183.353,7</b>
Տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը ( <i>հազ. մարդ</i> )	1.226,3	5.163,6	8.998,8	2.547,4	76.636,1	<b>94.572,2</b>
Բնակչության տնտեսական ակտիվության մակարդակը (%)	56,0	77,8	76,7	65,0	75,1	<b>74,7</b>
Զբաղված բնակչության թվաքանակը ( <i>հազ. մարդ</i> )	1.006,1	4.861,8	8.553,4	2.363,7	72.392,6	<b>89.177,6</b>
Բնակչության զբաղվածության մակարդակը (%)	45,6	73,2	72,9	60,3	70,9	<b>704,0</b>
Գործազուրկների թվաքանակը ( <i>հազ. մարդ</i> )	220,2	301,8	445,4	183,7	4.243,5	<b>5.394,6</b>
Գործազրկության մակարդակը (%)	18,0	5,8	5,0	7,2	5,5	<b>5,7</b>
15...24 տարեկան գործազուրկների թվաքանակը ( <i>հազ. մարդ</i> )	45,8	53,9	44,1	69,7	989,5	<b>1.203,0</b>
15...24 տարեկան գործազուրկների տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակի մեջ (%)	20,8	17,9	9,9	37,9	23,3	<b>22,3</b>
Պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը ( <i>հազ. մարդ</i> )	80,5	35,3	37,5	55,6	894,6	<b>1.103,5</b>
Պաշտոնապես գրանցված գործազուրկների տեսակարար կշիռը գործազուրկների ընդհանուր թվաքանակի մեջ (%)	36,6	11,7	8,4	30,3	21,1	<b>20,5</b>
Պաշտոնապես գրանցված ազատ աշխատատեղերի քանակը ( <i>հազ. մարդ</i> )	1,3	36,0	26,0	6,5	1.175,6	<b>1.245,4</b>

Զբաղվածության կարգավորման գործում մեծ դեր ունեն նաև զբաղվածության պետական ծառայություններն ու կենտրոնները, որոնք հնարավորություն ունեն գրանցված թափուր աշխատատեղերի շնորհիվ աշխատանքով ապահովելու համապատասխան մասնագիտություն ունեցող գործազուրկներին: 01.01.2017 թ. դրությամբ ԵԱՏՄ երկրներում պաշտոնապես գրանցված գործազուրկները կազմում են ընդհանուր գործազուրկների 20,5%-ը: Նկատենք, որ աշխատանքի տեղավորման հարցում ոչ բարենպաստ վիճակ է Հայաստանում, Ղազախստանում և Ղրղզստանում, որտեղ պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը գերազանցում են զբաղվածության պետական մարմիններում գրանցված ազատ աշխատատեղերի քանակը: Նշված ցուցանիշների բացասական հաշվեմնացորդը մեծ է հատկապես Հայաստանում, որտեղ 2016 թ. վերջի դրությամբ պաշտոնական գործազուրկների թիվը կազմում է 80,5 *հազ.*, մինչդեռ գրանցված ազատ աշխատատեղերի քանակը՝ ընդամենը 1,3 *հազ.*: Բելառուսում և հատկապես Ռու-

սաստանում, ընդհակառակը, գործատուների կողմից զբաղվածության պետական ծառայություններում գրանցված թափուր աշխատատեղերի քանակն ավելին է, քան պաշտոնապես գրանցված գործազուրկների թվաքանակը: Միայն Ռուսաստանում գրանցված ազատ աշխատատեղերը 281,0 հազարով գերազանցում են պաշտոնական գործազուրկների թվին (աղ. 4):

3. *Սոցիալական պաշտպանություն*, որն իրականացվում է թոշակների և նպաստների տրամադրման, ինչպես նաև տարաբնույթ սոցիալական ծառայությունների մատուցման ձևով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ըստ կանխատեսումների՝ 2050 թ. տարեցների մեծ մասը՝ մոտ 2 մլրդ մարդ, ապրելու է զարգացող երկրներում [3]՝ կարևորվում է ապագայում նշված անձանց տրամադրվող կենսաթոշակների գծով բյուջետային հատկացումների ծավալի մեծացման անհրաժեշտությունը: Պետական բյուջեի բեռը թեթևացնելու և անձի սոցիալական պաշտպանվածությունը բարձրացնելու համար շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, արդեն իսկ ներդրվել է պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգը, որի նպատակը «աշխատանքային գործունեության ընթացքում կուտակային կենսաթոշակային վճար կատարած անձանց կենսաթոշակային տարիքում պետական կենսաթոշակից զատ կենսաթոշակային եկամուտների ստացման հնարավորության ստեղծումն է՝ ապահովելով կատարված կենսաթոշակային վճարների և ստացվող կենսաթոշակի չափի միջև ուղղակի կապը» [4]:

Աղ. 5-ի տվյալները փաստում են, որ միմյանից էականորեն տարբերվում են նաև ԵԱՏՄ երկրների տարիքային կենսաթոշակի նվազագույն և միջին չափերը: Այսպես, 01.01.2017 թ. դրությամբ ԵԱՏՄ տարածքում տարիքային կենսաթոշակի նվազագույն չափերը տատանվում են 22-ից մինչև 113 ԱՄՆ դոլարի (նվազագույնը՝ Ղրղզստանում, առավելագույնը՝ Բելառուսում), իսկ կենսաթոշակի միջին չափերը՝ 76-ից մինչև 291 ԱՄՆ դոլարի (նվազագույնը՝ Ղրղզստանում, առավելագույնը՝ Ռուսաստանում) սահմաններում: Հատկանշական է, որ չնայած այն հանգամանքին, որ բնակչության 1000 շնչին և 1000 զբաղվածին ընկնող կենսաթոշակատուների թվաքանակով ամենամեծ բեռն ունեն Ռուսաստանը (համապատասխանաբար 294 և 596 կենսաթոշակատու) և Բելառուսը (համապատասխանաբար 276 և 595 կենսաթոշակատու)՝ այնուամենայնիվ, կենսաթոշակի միջին մակարդակն ամենաբարձրն է հենց նշված երկրներում: Ի դեպ, Ռուսաստանում և Բելառուսում է գործում նաև կանանց և տղամարդկանց կենսաթոշակային տարիքի նվազագույն շեմը, որն է՛լ ավելի է մեծացնում այդ երկրների կենսաթոշակային համակարգի ֆինանսավորման ծախսերը:

**Աղյուսակ 4**

**ԵԱՏՄ երկրների կենսաթոշակատուների կենսամակարդակը բնութագրող ցուցանիշները**

01.01.2017թ. դրությամբ [1]

Կենսաթոշակային տվյալներ	Հայաստան	Բելառուս	Ղազախստան	Ղրղզստան	Ռուսաստան
Կենսաթոշակային տարիք					
<i>Տղամարդիկ</i>	63	60	63	63	60
<i>Կանայք</i>	63	55	58	58	55
Տարիքային կենսաթոշակի նվազագույն չափը (ԱՄՆ դոլար)	33	113	77	22	73
Կենսաթոշակի միջին չափը (ԱՄՆ դոլար)	84	151	127	76	291
Բնակչության 1000 շնչին ըկնող կենսաթոշակատուների թվաքանակը	157	276	115	108	294
Բնակչության 1000 զբաղվածին ընկնող կենսաթոշակատուների թվաքանակը	466	595	241	280	596
Կյանքի սպասվող տևողությունը (տարի)	75,0	74,1	72,4	70,9	71,9

**Եզրակացություններ**

Այսպիսով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սոցիալական կայունության ապահովումը կարևոր նշանակություն ունի հատկապես զարգացող երկրներում բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորման գործում, ինչն էլ, իր հերթին, ստեղծում է տնտեսական աճի լրացուցիչ նախադրյալներ՝ առաջնային է համարվում ԵԱՏՄ երկրների սոցիալական քաղաքականության արդյունավետության բարձրացմանն ուղղված մի շարք համատեղ միջոցառումների մշակումն ու իրականացումը, մասնավորապես.

- ԵԱՏՄ անդամ բոլոր երկրներում իրականացվող սոցիալական քաղաքականությունն ուղղել բնակչության զբաղվածության արդյունավետության բարձրացմանը՝ նոր աշխատատեղերի ստեղծմանը, աշխատավարձերի մակարդակի աստիճանական բարձրացմանն ու համահարթեցմանը, կյանքի սպասվող տևողության երկարացմանը, բնակչության առողջության ամրապնդմանը, սոցիալական ծառայությունների որակական բարելավմանն ու դրանց նկատմամբ հասանելիության ապահովմանը, երիտասարդական քաղաքականության ակտիվացմանը,
- մշակել սոցիալական պաշտպանության այնպիսի համակարգ, որն, առաջին հերթին, միտված կլինի հասարակության առավել կարիքավոր շերտերի եկամուտների սոցիալապես ընդունելի մակարդակի ապահովմանը,
- աշխատավարձերի անհավասարության հաղթահարմանն ուղղված միջոցառումները սկսել բյուջետային աշխատողների աշխատավարձերի համակարգի կատարելագործումից,
- զբաղվածության քաղաքականության շրջանակներում նոր աշխատատեղերի ստեղծմանը զուգահեռ՝ աջակցել նաև ինքնազբաղվածներին, ընտանեկան կամ փոքր ձեռնարկատիրությանը՝ վերջիններիս համար ապահովելով գործարարությամբ զբաղվելու համար անհրաժեշտ սկզբնական պայմաններ, ձևավորելով բարենպաստ նորմատիվային-իրավական և ներդրումային միջավայր, տրամադրելով հարկային արտոնություններ:

**Мисак Армоевич Авагян**

*Европейский университет, г. Ереван, РА, misakav@rambler.ru*

**АНАЛИЗ ОСНОВНЫХ ПОКАЗАТЕЛЕЙ, ХАРАКТЕРИЗУЮЩИЙ СОЦИАЛЬНОЕ СОСТОЯНИЕ СТРАН-ЧЛЕНОВ ЕВРАЗИЙСКОГО ЭКОНОМИЧЕСКОГО СОЮЗА**

*Одной из наиболее важных оценок эффективности деятельности ЕАЭС является социальный статус группировки государств-членов, что обусловлено особенностями социальной политикой этих стран. В статье был проведен сравнительный анализ ключевых показателей социального статуса государств-членов ЕАЭС и был предложен ряд мероприятий, направленных на повышение эффективности социальной политики этих стран.*

**Ключевые слова:** *социальная политика, интеграция, социальная поляризация, социальные гарантии, безработица, уровень жизни.*

**Misak Armo Avagyan**

*European University, Yerevan, Republic of Armenia, misakav@rambler.ru*

**THE ANALYSIS OF THE MAIN INDICATORS CHARACTERIZING THE SOCIAL SITUATION OF THE EURASIAN ECONOMIC UNION MEMBER COUNTRIES**

*One of the most important assessments of effectiveness of the EAEU activity is the social situation of the member states of the union, which is due to the peculiarities of the social policies implemented by those countries. A comparative analysis of key indicators of the social situation of the EAEU member states was carried out and a number of measures aimed at increasing the effectiveness of social policies of these countries were proposed in the article.*

**Keywords:** *social policy, integration, social polarization, social guarantees, employment, unemployment, living standards.*

**ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ**

1. Статистический ежегодник Евразийского экономического союза. Евразийская экономическая комиссия.- М.: 2017, 414 с.
2. **Побережная О.Е.** Принципы, цели и задачи социальной политики // Проблемы упр.- 2006.- № 2.- С. 54-59
3. **Пcheong Yi.** New challenges for and new directions in social policy. // United Nations Research Institute for Social Development // Էլեկտրոնային ռեսուրս` <http://www.un.org/esa/socdev/csocd/2016/new-directions-socialpolicy-CY.pdf> (մուտքի ամսաթիվ` 07.03.2018 թ.)
4. ՀՀ օրենքը «Կուտակային կենսաթոշակների մասին» // Էլեկտրոնային ռեսուրս` <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64546> (մուտքի ամսաթիվ` 07.03.2018 թ.)

**REFERENCES**

1. Statisticheskiy ezhegodnik Evraziyskogo ekonomicheskogo soyuza [Statistical Yearbook of the Eurasian Economic Union] (2017), Evraziyskaya ekonomicheskaya komissiya [The Eurasian Economic Commission], Moscow, 414 p. (in Russian)
2. **Poberezhnaya O.E.** (2006), Printsipi, tseli i zadachi sotsial'noy politiki [Principles, goals and objectives of social policy]. Problemi upr. [Problems of management], no. 2, pp. 54-59. (in Russian)
3. **Пcheong Yi** New challenges for and new directions in social policy. // United Nations Research Institute for Social Development. Available at: <http://www.un.org/esa/socdev/csocd/2016/new-directions-socialpolicy-CY.pdf> (accessed 07.03.2018)
4. “Kutakayin kensatoshakneri masin” HH orenq [Law of the RA on Cumulative Pensions]. (in Armenian) Available at: <http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64546> (in Armenian). (accessed 07.03.2018)

**Միսակ Արմոյի Ավագյան**, Եվրոպական համալսարան, տնտեսագիտության և կառավ.  
ամբիոն, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, 077 49 90 70, misakav@rambler.ru

**Мисак Армоевич Авагян**, кандидат экономических наук, доцент, Европейский университет,  
077 49 90 70, misakav@rambler.ru

*Avagyan Misak Armo, PhD in Economics, associate professor, (Yerevan, RA)-European University,  
077 49 90 70, misakav@rambler.ru*

Ներկայացվել է՝ 26.03.2018 թ.  
Ընդունվել է տպագրության՝ 05.04.2018 թ.

ՀՏԴ 004.031.43

\*Լավրենտ Ավետիքի Անդրասյան<sup>1</sup>, Անահիտ Արեստի Բեգլարյան<sup>2</sup>

<sup>1</sup>Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, ՀՀ, ք. Երևան, andreasyan.lavrent12@mail.ru

**WMS (WAREHOUSE MANAGEMENT SYSTEM)- ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԼՈԳԻՍՏԻԿ ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ**

Դիտարկվում է լոգիստիկ կենտրոններում մարդկային և նյութատեխնիկական ռեսուրսների արդյունավետ կառավարման, մարդկային ռեսուրսների աշխատանքի արդյունավետության բարձրացման, օպտիմալացման, շարժունակության առավելագույն վերահսկողության, աշխատանքի ընթացքում թերացումների բացառման, նյութատեխնիկական ռեսուրսների բաշխման, ռացիոնալ հավաքագրման և շահագործման առաջադեմ լուծումները: Վերլուծվում է համակարգի ներդրման արդյունավետությունը լոգիստիկ կենտրոններում կառավարման փորձի հիման վրա: Յուրաքանչյուր կազմակերպության ղեկավարություն վաղ թե ուշ կանգնում է ինդերի առջև, թե ինչպես բարձրացնել պահեստային համալիրի արդյունավետությունը: Պահեստը ձեռնարկություններից շատերի համար հանդիսանում է լոգիստիկ շղթայի հիմնական օղակներից մեկը և ոչ մի դեպքում այն չպետք է վերածվի դրա փոքրիկ մասնիկի՝ անտեսվի: Հետազոտության նպատակն է՝ ինչպես բարձրացնել լոգիստիկ կենտրոններում կառավարման արդյունավետությունը, ավելացնել ռեսուրսախնայողության ցուցանիշները և նվազեցնել լոգիստիկ շղթայի ծախսերի ինքնարժեքը:

**Առանցքային բառեր.** լոգիստիկա, պահեստային լոգիստիկա, պահեստների կառավարում, ռեսուրսախնայողություն:

**Ներածություն**


Ժամանակակից բիզնեսը չափազանց դինամիկ է և ապրանքների լոգիստիկայի, տեղեկատվական և ֆինանսական ռեսուրսների լոգիստիկայի կազմակերպման հարցերը փոխվում են բիզնեսի պահանջումներին համապատասխան: Միայն լոգիստիկայի գործիքակազմի օգտագործումը, որի հնարավորությունները միայն վերջերս են սկսել օգտագործել, կարող է ապահովել գործունեության շահութաբերության աճ: Այսօր արդեն ոչ ոքի հարկարվոր չեն փաստաթղթերի մշակման ավտոմատացման ծրագրեր, այլ անհրաժեշտ են լոգիստիկայի տեղեկատվական համակարգեր, որոնք հանդիսանում են բիզնես գործընթացների կազմակերպման աջակիցներ, օգնականներ, ուսուցիչներ և ղեկավարներ: Այսօր շուկայում բավականին մեծ է պահանջարկը ժամանակակից պատրաստի ձևերն մասնագիտակացված համալիր ծրագրերի նկատմամբ՝ մատակարարման ռեժիմում:

Շուկայում առկա են պատրաստի համալիր ինտեգրացված համակարգեր, որոնք մշակված են բազմաթիվ սպառողների փորձի վերլուծության հիման վրա և հաշվի են առնված ժամանակակից մենեջմենթի պահանջները [1]: Դրանք մշակված են բազմաթիվ սպառողների պահանջները հաշվի առնելով՝ մի շարք ֆինանսական, արտադրական և առևտրային մենեջմենթի, լոգիստիկայի, ճարտարագիտության ոլորտների մասնագետների կողմից: Դրանք բոլորը սակայն բավականին ձկուն չեն և հեշտորեն չեն հարմարեցվում տարբեր ձեռնարկությունների գործունեությանը, քանի որ դրանցից ոմանք սկսել են ծրագրեր մշակել հավառման ավտոմատացումից



սկսած, որից հետո միայն աշխատել այլ մոդուլների վրա, մյուսները աշխատանքները սկսել են բիզնես ճարտարագիտությունից և մշակել գործուն մոդուլներ ըստ տրված բանալու[2]: Վերջինս, ի դեպ, առավել արդյունավետ մոտեցում է:

Ցանկացած հաշվառման համակարգի, մեր դեպքում՝ WMS-ի արտադրողականությունը գնահատվում է ըստ ամենանեղ օղակի: Դուք կարող եք ձեռք բերել ամենաթանկ և վստահելի բեռնման տեխնիկա, կառուցել պահեստ ըստ ապրանքի պահանջվող ծավալների, հաշվի առնել արտադրանքի յուրահատկությունը, սակայն այդ ամենը չի բերի անհրաժեշտ սպասվող արդյունքը, եթե դուք արդյունավետ կերպով չկառավարեք պահեստի հիմնական բաղադրիչը՝ մարդկային ռեսուրսը (նկար):



Նկար 1. Լոգիստիկ կենտրոնի աշխատանքն առանց WMS համակարգի

Հակարգչային համակարգի օգնությամբ անհրաժեշտ է ավտոմատացնել ձեռնարկության բոլոր բիզնես գործընթացները, միավոր համակարգի հիման վրա՝ միաժամանակ խուսափելով իրարից անջատ ծրագրերի ներդնումից: Դա թույլ է տալիս կառուցել ձեռնարկության կառավարման համալիր համակարգ՝ սկսած վաճառքների կառավարումից, հաճախորդների պատվերների մշակումից, պահեստավորման գործողություններից, բեռնման-բեռնաթափման գործողություններից, ձեռնարկության բոլոր ստորաբաժանումների գործունեությունների ֆինանսական արդյունքների պլանավորմամբ և վերլուծությամբ: Համակարգչային համակարգը հնարավորություն է տալիս միավորել տարածական առումով մեծ հեռավորության վրա գտնվող ստորաբաժանումները մեկ միասնական տեղեկատվական կառուցվածքում, բարձրացնել աշխատողների աշխատունակությունը՝ սեղմ ժամկետներում տեղեկատվության առավել մեծ ծավալի հետ աշխատելու հաշվին [3]: Միաժամանակ անհրաժեշտ է բարձրացնել հաճախորդների սպասարկման որակը, որը հնարավորություն է տալիս պահպանել հաճախորդների հետ հետագա աշխատանքի պահպանություն, ինչպես նաև թարմ տեղեկատվության գործուն ստացում հաճախորդ-

ների պատվերների մշակման կարգավիճակի, բեռի գտնվելու վայրի և տրանսպորտային միջոցների վերաբերյալ: Տեղեկատվական համակարգին ներկայացվող բազային պահանջներից է նաև ստեղծել ձեռնարկության աճի պահեստային ներուժ՝ ապահովելով արագ ընդլայնման հնարավորություն և բիզնեսի զարգացման համար անհրաժեշտ կոորպորատիվ տեղեկատվական բազա [4]: Շատ կարևոր է, որ համակարգի ճկունությունը հեշտորեն ինտեգրվի այլ ծրագրերի, որոնք օգտագործվում են ստորաբաժանումների կողմից՝ այնպիսիք, ինչպիսիք են GPS համակարգը, պահեստների կառավարման համակարգերը և այլն:

**Անհրաժեշտ համակարգեր.**

- ապրանքի նույնականացում համաձայն ներքին կողի, շտրիխ կողի, ըստ մատակարարի,
- սերիական համարների պահպանում,
- մատակարարների ապրանքների կողավորման և պիտակավորման ապահովում,
- ապրանքային սարքավորումներով ապահովում՝ տպիչներ, սկաներներ, շտրիխ-կոդեր, տվյալների հավաքման տերմինալներ,
- գնորդման, մատակարարման, պատվերների և գնումների սխեմաների բազմազանություն,
- ապրանքային հոսքերի մշտադիտարկում՝ մատակարարի հետ ապրանքի պատվերի ձևավորման պահից, մինչև ապրանքի մատակարարումը գնորդին և հաշվի դուրս գրումը,

Ապրանքների պահպանման համար պատասխանատու պահեստները հատկապես կարելի է դիտարկել որպես պահեստային լոգիստիկայի բոլոր տարրերի ակտիվ օգտագործման օրինակ: Դա բացատրվում է ապրանքների պահպանման համար պատասխանատու պահեստներում ապրանքների շրջանառության մեծ ծավալներով, ծառայությունների մատուցման լայն շրջանակներով կապված պահպանման հետ, պահեստի բոլոր հզորությունների առավելագույն օգտագործման անհրաժեշտությամբ, չէ որ դրանով է ձևավորվում ձեռնարկության հիմնական շահույթը: Վերը նշվածներին անհրաժեշտ է ավելացնել ևս մի կարևոր հանգամանք. եթե ցանկացած այլ ձեռնարկության պահեստում WMS համակարգի կիրառությունը արտադրական տարածքի կառավարման գործիք է, ապա ապրանքների պահպանման համար պատասխանատու պահեստների համար, որտեղ պահեստը հիմնական արտադրությունն է, իսկ հարակից տարածքներն ապահովում են դրա աշխատանքը, այս համակարգը հանդիսանում է ձեռնարկության ընդհանուր կառավարման համակարգ: Ընդ որում, այն, որպես կանոն, լիովին ինտեգրվում է կազմակերպության ֆինանսներում, հաշվառում է արտադրական նյութերի ծախսը և ապրանքների մատակարարներին (և համապատասխանաբար պլանավորում է նրանցից գնումները), ունի կազմակերպության՝ հաճախորդների հետ աշխատանքի կազմակերպման գործառույթ, ինչպես նաև լայն վերլուծական հնարավորություններ: Նման կերպ WMS-ն ապրանքների պահպանման համար պատասխանատու պահեստների համար կարող է լիարժեք կառավարման համակարգ հանդիսանալ [5]:

Կառավարչական ենթահամակարգը պետք է ներառի հաշվետվությունների պատրաստման արտաքին գործիքակազմի, հաշվետվությունների ձևավորման ցանկացած այլ գործիքի միջոցով ֆինանսական տեղեկատվության ստացման և մշակման հնարավորությունը: Շատ կարևոր է աղյուսակային և մոդելավորող ծրագրային արտադրանքների, հաշվետվությունների ստեղծման գրաֆիկական համակարգերի կիրառումը: Ֆինանսական հաշվետվություններ մո-

դուլից ընտրված տվյալների հիման վրա բարձր մակարդակի շփման կամ գործընթացների մանրամասն վերլուծության համար ֆինանսական տեղեկատվության ստացման ու մշակման համար ինտեգրացված գործիքակազմի օգտագործումն ապահովում է կառավարչական ենթահամակարգի ճշգրիտ օգտագործումը, որը թույլ է տալիս բացառել ֆինանսական վերլուծություններում թույլ տրվող վրիպումներից [6]:

Համակարգը պետք է կառավարի պահանջարկի ապահովման հոսքերը՝ ներմուծելով մատակարարների, միջնորդների և պատվիրատուների ձեռնարկությունների հետ գործառնությունների կառավարման միասնական համակարգ.

- MRP մեթոդաբանության հիման վրա մատակարարման պահանջարկի գործընթացների ձևավորում մեկ միասնական տեղեկատվական հոսքի հիման վրա՝ ապահովելով արտադրության, վաճաքի և գնումների դինամիկ բալանսավորում,
- մատակարարման հոսքերի, փոխանակման գործընթացների պլանավորման հպանցիկ կառավարում,
- հաշիվների հիման վրա վճարումների և ստացումների գրաֆիկի համաձայն կատարվող և ընդունվող վճարումների ավտոմատ ձևավորում,
- նյութերի ստացման, դուրս գրման, հետ վերադարձի, անորակի և համաձայնությունների չեղյալացման ավտոմատ ձևակերպումներ,
- բազմաթիվ ապրանքային գործընթացների իրականացման ապահովում. կողմնակի և արտադրական եկամուտներ, միջնորդավճարներ, ճանապարհային, արտադրական, միջնորդավճարների ծախսեր, հետվերադարձներ, անորակ ապրանքների ձևակերպում, համաձայնագրերի կազմում, կոմպլեկտավորում, ինվենտարցում,
- նյութերի քանակի չափման մի միավորից ավտոմատ անցում մեկ այլ միավորի. յուրաքանչյուր նյութի համար ցույց է տրվում չափման հիմնական միավոր և որքան հնարավոր է լրացուցիչ միավորներ,
- տեխնոլոգիական քարտերի ապահովում և դրանց հետ աշխատանքի ապահովում պահեստների համար: Տեխնոլոգիական քարտերը պարունակում են բաղադրիչներ, որոնք իրենց հերթին ներառում են փոխանակման տարրեր՝ օգտագործման առաջնահերթության ցուցումով,
- պահպանման ժամկետների ավտոմատ հաշվառման ապահովում,
- ապրանքների ինքնարժեքի հաշվարկ «միջինների», «լոգարիթմական միջինների», LIFO, FIFO, MinCost և MaxCost եղանակների կիրառմամբ, ապրանքների բաշխում խմբաքանակների, չհաշվառված մատակարարումների հաշվարկ, վաճառքներին հարմարեցման և ծառայությունների մատուցման հնարավորություն:

WMS-ի օգտագործումը հնարավորություն է տալիս արդյունավետ կերպով գործել պահեստի տեխնոլոգիաների հասցեական պահպանմանը, ինչն ավելի է բարձրացնում մնացորդների ճշգրտությունը և գործողությունների կատարման պարզությունը: Այս ամենն էապես նվազեցնում է աշխատանքային գործունեության իրականացման համար անձնակազմից պահանջվող գիտելիքների և հմտությունների պահանջները:

Лаврент Аветикович Андрасян<sup>1</sup>, Анаит Арестович Бегларян<sup>2</sup>

<sup>1</sup>Национальный университет архитектуры и строительства Армении, РА, г. Ереван  
andreasyan.lavrent12@mail.ru

## ЭФФЕКТИВНОСТЬ ВНЕДРЕНИЯ WMS СИСТЕМЫ В ЛОГИСТИЧЕСКИХ ЦЕНТРАХ

*Рассмотрены эффективное управление человеческими и материально-техническими ресурсами в логистических центрах, повышение эффективности использования человеческих ресурсов, оптимизация, максимальный контроль мобильности, исключение недостатков работы, передовая логистика, рациональный сбор и эксплуатация материально-технических ресурсов. Эффективность внедрения системы анализируется на основе опыта управления в логистических центрах. Руководство каждой организации рано или поздно сталкивается с проблемой повышения эффективности складского комплекса. Склад является одним из ключевых звеньев логистической цепочки для большинства предприятий и ни в коем случае не должен превращаться в небольшую его часть. Целью исследования является повышение эффективности управления в логистических центрах, увеличение экономии ресурсов и снижение затрат на логистические цепочки.*

**Ключевые слова:** логистика, складская логистика, управление складом, экономия ресурсов.

Andrasyan Lavrent Avetiq<sup>1</sup>, Beglaryan Anahit Arest<sup>2</sup>

<sup>1</sup>National University of Architecture and Construction of Armenia, RA, Yerevan  
andreasyan.lavrent12@mail.ru

## EFFICIENCY OF IMPLEMENTATION OF WMS SYSTEM IN LOGISTICS CENTERS

*The effective management of human and material and technical resources in logistics centers, increasing the efficiency of human resources use, optimization, maximum mobility control, elimination of job shortcomings, advanced logistics, rational collection and operation of material and technical resources are considered. The effectiveness of the implementation of the system is analyzed on the basis of management experience in logistics centers. The leadership of each organization sooner or later faces the problem of increasing the efficiency of the warehouse complex. The warehouse is one of the key links of the logistics chain for most enterprises and in no case should it turn into a small part of it. The goal of the study is to improve management efficiency in logistics centers, increase resource savings and reduce costs for supply chains.*

**Keywords:** logistics, warehouse logistics, warehouse management, resource saving.

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ստեփանյան Ս. Շ., Հովուսյան Լ. Լոգիստիկա: - Երևան, էջ 133:
2. Волгин В.В. Склад: логистика, управление, анализ / В. В. Волгин. – 11-е изд., переб. и доп. – М.: Издательско-торговая корпорация «Дашков и К», 2015 – 724 с.
3. Волгин В.В. Кладоущик: Устройство складов. Складские операции. Управление складом. Нормативные документы. - М.: Ось-89, 2003. - 320 с.
4. Левкин Г. Г., Основы логистики, - М.: Инфра-Инженерная, 2016. - 240 с.
5. Дыбская В. В., Логистика складирования для практиков, - М.: Альфа-Пресс, 2005. – 208 с.
6. Сербул И. Т., Логистика складирования, - Минск.: БГЭУ, 2008. - 169 с.

## REFERENCES

1. **Stepanyan S. Sh. Hovumyan L.**, Logistika [Logistics].- Yerevan, p. 133.
2. **Volgin V.V.** Sklad: logistika, upravlenie, analiz / V. V. Volgin. – 11-e izd., pereb. i dop.- M.: Izdatelsko-torgovaya korporatsiya «Dashkov i K», 2015 – [Warehouse: logistics, management, analysis / V. Volgin. - 11 th ed., Pereb. and additional] p 724.
3. **Volgin V. V.** Kladovshik: Ustroystvo skladov. Skladkiye operacii. Upravlenie skladom. Normativniye dokumenty. 2-e izd. Perab. I dop. – M.: Os-89, 2003. – [Storekeeper: Warehouse arrangement. Warehouse operations. Warehouse management. Normative documents.2 ed. perab. and additional], p 320
4. **Levkin G. G.** Osnovi logistiki, - M.: Infra-Inzhenernaya, 2016, [Basics of logistics], p 240 .
5. **Dybskaya V.V.** Logistika skladirovaniya dlya praktikov [Logistics warehousing for practitioners], - M.: Alfa-Press, 2005. – p 208.
6. **Serbul I. T.** Logistika skladirovaniya [Logistics warehousing].- Minsk.: BGEU, 2008., p 169.

*Լ. Ա. Անդրասյան, մագիստրանտ (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի իրավունքի և կառավարման ամբիոն, «Ուրբան Լոջիստիք Սերվիսիս» ՓԲԸ, (+374) 55 99 83 23, andreasyan.lavrent12@mail.ru, Ա. Ա. Բեգլարյան, տնտ.թ. դոցենտ, (ՀՀ, ք. Երևան) - ՃՇՀԱՀ, Էկոնոմիկայի իրավունքի և կառավարման ամբիոն, դասախոս, (+374) 91 34 77 13*

*Л. А. Андреасян, магистрант (РА, г. Ереван) - НУАСА, Кафедра экономики права и управления, (+374) 55 99 83 23, andreasyan.lavrent12@mail.ru, А.А. Бегларян, кандидат экономики, доцент, (РА, г. Ереван) - НУАСА, Кафедра экономики права и управления, преподаватель, (+374) 91 34 77 13*

*Andrasyan Lavrent Avetiq, master student (Yerevan, RA) – NUACA, Chair of economics, law and management, (+374) 55 99 83 23, andreasyan.lavrent12@mail.ru, Beglaryan Anahit Arest, Ph.D in Economics, Associate Professor, (Yerevan, RA) - NUACA, Chair of economics, law and management, lecturer (+374) 91 34 77 13*

*Ներկայացվել է՝ 30.03.2018 թ.  
 Ընդունվել է տպագրության՝ 04.04.2018 թ.*

ՀՏԴ 620.92:621.316

**Արթուր Գեորգիի Ավետիսյան**

*ՃՇՀԱՀ ՋԳՄՕ ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ., ՀՀ, ք. Երևան  
argprom@gmail.com*

**ՋԵՐՄԱՑՐՏԱՄԱՍԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԷՆԵՐԳԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԽԵՄԱՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ**

*Ջերմության և ցրտի աղբյուրների նպատակահարմար տարբերակի ընտրության համար անհրաժեշտ է համադրել դրանց էներգատնտեսական ցուցանիշները: Այդ նպատակով իրականացվել են ջերմացրտամատակարարման համակարգերի (ՋՅՄՀ) փորձարարական նախագծեր, ըստ այդմ էլ ընտրվել է նպատակահարմար տարբերակը: Ըստ տնտեսական ցուցանիշների նվազման օրինաչափությունների, մշակվել են ՋՅՄՀ-ների համար ջերմության ու ցրտի աղբյուրների նոր տեխնոլոգիական սխեմաներ՝ ավանդական և էներգիայի վերականգնվող աղբյուրների համադրմամբ, այնուհետև համեմատվել դրանց էներգատնտեսական ցուցանիշները ավանդական աղբյուրների համապատասխան ցուցանիշների հետ: Արդյունքում մշակված սխեմաներն ունեն ավելի լավ էներգատնտեսական ցուցանիշներ և նպատակահարմար են լայն կիրառման համար:*

**Առանցքային բառեր.** *ջերմացրտամատակարարման համակարգեր, համագեներացման տեղակայանք, ջերմային պոմպ, արևային կոլեկտոր, զազաթնակետային կաթսա:*

**Ներածություն**

Բնակելի շենքերը ջերմության ու ցրտի խոշոր սպառիչներ են: Ըստ տարբեր հետազոտողների, աշխարհում արտադրվող օրգանական վառելիքի շուրջ 40 %-ը ծախսվում է շենքերում տարվա տարբեր ժամանակահատվածներում, արհեստական միկրոկլիմայի ստեղծման համար: Անհրաժեշտ են ճշգրիտ էներգետիկական մոտեցումներ դրանց ջեռուցման, տաք ջրամատակարարման, որոշ դեպքերում նաև ցրտամատակարարման համակարգերի էներգախնայող լուծումների իրագործման համար: ՋՅՄՀ-ի վրա կատարվող օրգանական վառելիքի ծախսը հնարավոր է կրճատել բնական և երկրորդական էներգառեսուրսների առավել լայն ու օպտիմալ օգտագործմամբ, ջերմության ոչ ավանդական աղբյուրների կիրառմամբ:

Նախկինում կատարված հետազոտությունները [1, 2] ցույց են տվել, որ դիտարկելով ՋՅՄՀ-ների տարբեր տարբերակները և դրանց էներգատնտեսական ցուցանիշները, նպատակահարմարը ներքին այրման շարժիչի հիման վրա համագեներացման տեղակայանքի (ՆԱՇԿՏ) և կլանման սառնարանային մեքենայի (ԱԲՄՄ) համակցված աշխատանքն է, քանի որ այն ապահովում է բնակելի շենքերի ջերմացրտաէլեկտրամատակարարումը. ՆԱՇԿՏ-ում արտադրված ջերմությունն օգտագործվում է ամբողջ տարվա ընթացքում, ինչն էլ ապահովում է համակարգի արդյունավետ աշխատանքը: Սակայն հաշվի առնելով վառելիքի բարձր սակագները, ինչպես նաև էկոլոգիական խնդրիները՝ հարկ կա առավել խորը ուսումնասիրել առաջադրված խնդիրները:

Փորձարարական նախագիծ իրականացնելու նպատակով ք. Երևանի Վահագնի թաղամասի գլխավոր հատակագծից [3] առանձնացվել է թվով 17 երկհարկանի առանձնատներից կազմված հատված (նկ. 1): Նախատեսվել է իրականացնել ջեռուցում, տաք ջրամատակարարում

(ՏՁՄ) և ցրտամատակարարում, այսինքն՝ թաղամաս, ուր հնարավոր է ՋՑՄՀ-ի գործունեությունը: Թաղամասի համար, համաձայն շենքերի հատակագծերի, հաշվարկվել են շենքերից ջերմային կորուստները և ավելցուկները: Հաշվարկները կատարվել են ջեռուցման և հովացման շրջանների հաշվարկային ժամանակահատվածների և առանձին ամիսների համար: Օգտվելով [4,5]-ից՝ ջեռուցման շրջանի տևողությունը  $p$ . Երևանի համար կազմում է 140 օր կամ 3360 ժամ, իսկ հովացման շրջանինը՝ 138 օր կամ 3312 ժամ:



Նկ. 1. 17 առանձնատներից կազմված թաղամասի գլխավոր հատակագիծը

Դիտարկվել են ՆԱՇԿՏ-ԱԲՄՄ, ՆԱՇԿՏ-ՇԿՄՄ (օդային հովացման կոնդենսատորով շոգեկոմպրեսորային սառնարանային մեքենա), Կաթսա-ԱԲՄՄ, Կաթսա-ՇԿՄՄ և ՆԱՇԿՏ-ջերմային պոմպ (ՋՊ) տարբերակները և որոշվել դրանց էներգատնտեսական ցուցանիշները:

Եթե ՆԱՇԿՏ-ԱԲՄՄ համատեղ աշխատանքի դեպքում համագեներացման տեղակայանքը (ԿՏ) աշխատում է ամբողջ տարին, ապա ՆԱՇԿՏ-ՇԿՄՄ դեպքում ԿՏ-ն աշխատում է միայն ջեռուցման շրջանում և ծառայում է որպես ջերմադրյուր: Եթե ՆԱՇԿՏ-ն աշխատի նաև տարվա մնացած ժամանակահատվածում, երբ առկա է միայն ՏՁՄ պահանջ ( $Q_{ss} = 18 \text{ կՎտ}$ ), որն էլ փոքր է դրա ջերմարտադրողականության 50 %-ից ( $\sum Q_{\text{հաշվ.}}^{\text{հաշվ.}} = 287 \text{ կՎտ}$ ), ջերմային գրաֆիկով դրա աշխատանքը կլինի անարդյունավետ, իսկ էլեկտրական գրաֆիկով գործելիս վառելիքի տեսակարար ծախսը կլինի ավելի մեծ: Հովացման շրջանում ՇԿՄՄ աշխատանքի համար պահանջվող էլեկտրաէներգիան մատակարարվում է բաշխիչ ցանցից: Կաթսա-ԱԲՄՄ տարբերակի դեպքում կաթսայում ջերմության մասն օգտագործվում է ջերմատարի տաքացման համար, որը ԱԲՄՄ-ի գեներատորում վերափոխվում է ցրտի և տրվում թաղամաս, իսկ ջերմության մյուս մասն էլ կօգտագործվի ՏՁՄ-ի համար: Կաթսա-ՇԿՄՄ դեպքում կաթսան աշխատում է ջեռուցման և ՏՁՄ-ի համար, իսկ այլ շրջաններում գործում է փոքր արտադրողականության կաթսան, իսկ ՇԿՄՄ-ների համար պահանջվող էլեկտրաէներգիան մատակարարվում է բաշխիչ ցանցից:

Դիտարկելով ՆԱՇԿՏ-ՋՊ տարբերակն արևի էներգիայի օգտագործմամբ (արևային ավազան /ԱրԱվ/ կամ արևային կոլեկտոր /ԱԿ/)՝ անհրաժեշտ է նշել, որ ամռան շրջանում ՏՁՄ-ի ջերմային բեռնվածության ապահովումը ՆԱՇԿՏ-ով նպատակահարմար չէ, ուստի այն կարելի է ապահովել, օրինակ ՋՊ-ի օգնությամբ, եթե այն գործում է համակցված ցիկլով, երբ ՏՁՄ-ի ապահովման համար ջերմությունն արտադրվում է ցրտի ստացման արդյունքում, որն էլ կփակի շենքերի ցրտի բեռնվածության մի մասը: Հաշվարկներում ընդունվել է՝ ջեռուցման համար  $60/40^\circ\text{C}$ , ՏՁՄ-ի համար՝  $55/15^\circ\text{C}$  և ցրտամատակարարման համար՝  $5/12^\circ\text{C}$  ջերմաստիճանային ռեժիմները: ՋՊ-ԱրԱվ տարբերակի դեպքում շրջանի ջերմային բեռնվածությունը, հատկապես արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանների մոտ ջերմաստիճանների պայմաններում, հարկ կա

բաշխել երկու ջերմադրյունների միջև, քանի որ ՋՊ-ն այդ դեպքում կունենա ցածր վերափոխման գործակից ու կսպառի զգալի էլեկտրաէներգիա կոմպրեսորի էլեկտրաշարժիչի համար: Հաշվարկներ իրականացնելիս ընդունվել է, որ ՋՊ-ԱրԱվ-ը պետք է գործի բազիսային ռեժիմում, իսկ պահուստային է ՆԱՇԿՏ-ն: Նման ջերմային բեռնվածության ու ջերմաստիճանների համար, օգտվելով BITZER ֆիրմայի համակարգչային ծրագրից [6], որոշվել են ՋՊ-ի աշխատանքը բնորոշող հիմնական մեծությունները:

Ջեռուցման շրջանում բեռնվածությունները բաշխվել են 70/30 % համամասնությամբ, բացառությամբ արտաքին օդի հաշվարկային ջերմաստիճանի ժամանակահատվածի: Ջեռուցման ու ՏՋՄ բեռնվածությունների բաշխումը ՋՊ-ի և ՆԱՇԿՏ-ի միջև ներկայացված են աղյուսակում:

*Աղյուսակ*

**Ջեռուցման ու ՏՋՄ բեռնվածությունների բաշխումը ՋՊ-ԱրԱվ-ի և ՆԱՇԿՏ-ի միջև**

Միասններ	Հունվար	Փետրվար	Դեկտեմբեր	Մարտ	Նոյեմբեր
Մեծության անվանումը					
Ջերմատարի ջերմ., $t_o / t_n, ^\circ C$	50/40	50/40	50/40	45/40	45/40
Շենքերում և ջերմային ցանցում ջերմային կորուստները, $Q_{2,4}^i + Q_{2,4}^{2,9} = Q_{2,4}^{նդ.}, կՎտ$	68,6+8,8= =77,4	59,26+8,8= =68,06	56,34+8,8= =65,14	32,4+7,8= =40,2	28,55+7,8= =36,35
ՋՊ-ի և ՆԱՇԿՏ-ի ջերմային բեռը, $Q_{\text{ՋՊ}} / Q_{\text{ՆԱՇԿՏ}}, կՎտ$	54,2/23,22	47,64/20,43	45,6/19,54	28,14/12,04	25,44/9,91
ՋՊ-ի կոնդ.ջերմաստիճանը, $t_u / t_o, ^\circ C$	52/-11	52/-9,4	52/-8,4	48,5/-6,2	48,5/-3,6
Ջեռ, ջերմային բեռի բաշխ. ջերմ. աղբ. միջև, $Q_{\text{բեռ.դր.}}^{\text{ՋՊ}} / Q_{\text{բեռ.դր.}}^{\text{ՆԱՇԿՏ}}, կՎտ$	39,2/39,8	41,2/28,8	42,4/24,6	22,1/19,9	24,8/13,2
ՑՋՋԱ-ից խլ. ջերմաքան. և էլ. շարժ.հզ., $Q_o^{\text{ՑՋՋԱ}} / N_{\text{էլ.}}^{\text{ՋՊ}}, կՎտ$	24/14,34	25,8/14,37	26,8/14,39	15,4/6,7	17/6,705
ՋՊ-ի վերափ. գործակ. $\mu_{\text{ՋՊ}}$	2,68	2,8	2,87	3,3	3,54
ՏՋՄ ջերմ. բեռի բաշխ. ջերմ. աղբ. միջև, (ձմռանը), $Q_{\text{ՏՋՄ.դր.}}^{\text{ՋՊ(ձմ.)}} / Q_{\text{ՏՋՄ.դր.}}^{\text{ՆԱՇԿՏ(ձմ.)}}, կՎտ$	14,72/3,6	15,87/2,53	16,38/2,02	17,39/1,01	18,4
ՏՋՄ իրակ. ջերմ.բեռի բաշխ. ջերմ. աղբ. միջև (ձմռանը), $Q_{\text{ՏՋՄ.դր.}}^{\text{ՋՊ(ձմ.)}} / Q_{\text{ՏՋՄ.դր.}}^{\text{ՆԱՇԿՏ(ձմ.)}}, կՎտ$	19,90,75= =14,72/3,6	19,920,8= =15,87/2,53	16,380,8= =16,38/2,02	21,50,8= =17,39/1,01	22,90,8= =18,4/0
ՏՋՄ համար ՑՋՋԱ-ի ջերմաքան. և էլ. շարժ էլ. հզ., $Q_{\text{ՑՋՋԱ}}^{\text{(ձմ.)}} / N_{\text{էլ.}}^{\text{ՋՊ(ձմ.)}}, կՎտ$	12,070,75= =8,93/7,17	12,430,8= 9,94/7,55	12,670,8= 10,14/7,73	13,410,8= =10,73/8,11	14,40,8= =11,52/8,49
ՏՋՄ-ի համար ծառայող ՋՊ-ի վերափ. գործ., $\mu_{\text{դր.}}^{\text{ՋՊ(ձմ.)}}$	2,68	2,65	2,65	2,67	2,71

ԱրԱվ-ում որպես ցածր ջերմաստիճանային ջերմադրյուն (ՑՋՋԱ) կարելի է օգտագործել NaCl աղաջրային լուծույթը, որպեսզի այն ձմռան սեզոնի բացասական ջերմաստիճանի պայմաններում չսառչի: Դրա համար կոնցենտրացիան, արտաքին օդի մինչև  $-10^\circ C$  պայմաններում, կարող է կազմել  $\xi=16,2\%$ , երբ սառնագենտի գոլորշիացման ջերմաստիճանը  $-11^\circ C$  է, լուծույթի պնդացման կամ բյուրեղների առաջացման ջերմաստիճանը՝  $t_s^{NaCl} = -12,2^\circ C$ : Նշված թաղամասի համար արևային ավազանի պահանջվող մակերեսը կկազմի՝  $F_{\text{ԱրԱվ}}^{\text{պահ.}} = 290 \text{ մ}^2$ : Որոշվել են գոլորշարարի  $F_{\text{գոլ.}}^i$ , մակերեսը, աղաջրի զանգվածային՝  $G_{\text{աղ.}}^i$  և ծավալային՝  $V_{\text{աղ.}}^i$  ծախսերը, պոմպի




Էլեկտրաշարժիչի էլեկտրական հզորությունը՝  $N_{\text{էլ.շ.}}^{\text{աղ.}} (c_p^{\text{NaCl}} = 3,504 \text{ կՋ/կգ}^\circ\text{C}, \Delta t_{\text{գոլ.}} = 3^\circ\text{C}, \rho_{\text{NaCl}} = 1120 \text{ կգ/մ}^3, \text{ պոմպի ՕԳԳ-ն՝ } \eta_{\text{պ.}} = 0,7, \text{ ճնշման անկումը տվյալ եզրագծում՝ } \Delta p_{\text{սկ-գ}} = 2 \cdot 10^5 \text{ Պա})$ : Ըստ այդմ էլ, ընտրվել են *33,9 կՎտ*<sup>ճնշմ.</sup> և *19,4 կՎտ*<sup>էլ.</sup> հզորությամբ թվով 4 ՆԱՇԿՏ-ներ (այդպիսիք կարող են լինել Elteco ընկերության Katja 18 C թվով 4 հատ ՆԱՇԿՏ [7]), որոնք միասին աշխատում են ջեռուցման շրջանի հաշվարկային ու դրան մոտ ջերմաստիճանների դեպքում: Հունվարին անհրաժեշտ է գործարկել թվով 2, իսկ ջեռուցման շրջանի մնացած ամիսներին՝ 1 ագրեգատ (նկ. 2ա): Հետագա հաշվարկներով պարզվել է, որ ՆԱՇԿՏ-ների ջերմային բեռնվածության մի մասը կարելի է փակել գազաթնակետային գազային կաթսայով: Դա տնտեսական առումով ավելի նպատակահարմար է, քանի որ կաթսայի *1 կՎտ* դրվածքային հզորության արժեքը 5...6 անգամ ցածր է, քան ՆԱՇԿՏ-ինը: Դրա համար էլ մշակվել է նաև մյուս տարբերակը (նկ. 2բ): Ըստ այդմ էլ ՆԱՇԿՏ-Կաթսա-ՋՊ-ԱրԱվ տարբերակի սկզբունքային սխեման ներկայացվել է նկ. 2ա և բ-ում:

Այն գործում է հետևյալ կերպ: Բանող մարմինը (ԲՄ), օրինակ, ֆրեոն 22-ը սեղմվում է (6) կոմպրեսորում, բարձրանում են ԲՄ-ի ճնշումը և ջերմաստիճանը, ապա այն տրվում է (5) կոնդենսատոր, ուր իր ջերմությունը հաղորդում է ջեռուցման համակարգի ջերմատարին, որն էլ ուղղվում է (8) ՆԱՇԿՏ-ի ջերմափոխանակիչ ապարատներ (ՋՓԱ): ԲՄ-ն դրոսելացվում է (4)-ում, խոնավ հագեցման վիճակով ուղղվում (3) գոլորշարար: Դրանում ԲՄ-ն գոլորշիանում է ԱրԱվ-ից (2) պոմպի միջոցով մղված և (23) խողովակով հոսող ՑՋՋԱ-ից՝ աղաջրից խլված ջերմության հաշվին: Տալով իր ջերմությունը՝ աղաջուրը (24) խողովակագծով վերադարձվում է ԱրԱվ:

